

«DROSCHAK»
REVUE MENSUELLE

Organe
de la F. R. A. D.

ԴՐՕՇԱԿ

№ 4
AVRIL
1931
PARIS (France)

«ՀՈՑ ԵՆԴՈՓՈՒՈՒԿԱՆ ԳՈՂՆՈՎՅՑՈՒԹԵՆ» ՕՐԳԱՆ

ԳԱՂՈՒԹԱՅԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

«Դրօշակ»-ը սակաւ է զբաղում դադու-
թանայ խնդիրներով, ա՛յն չափով միայն, որ
նրանք անմիջական առընչութիւն ունեն չա-
յաստանի ու հայ քաղաքական դատի հետ, թէ-
և գաղութաճայութիւնը ինքնին արդէն դար-
ձել է քաղաքական գործօն: Ներկայ գաղութա-
ճայութիւնը հայ ժողովրդի մէկ կարեւոր մա-
սըն է, որ բուն ուժով վտարւած երկրից՝ ան-
համբեր սպասում է հայրենիք վերադառնալու
հնարաւորութեան: Եւ ո՛չ միայն սպասում,
այլ եւ աշխատում է մօտեցնել վերադարձի
ժամը:

Մեր գլխաւոր մտահոգութիւնը այսօր էլ
մնում է, ի հարկէ, Հայաստանը եւ Հայաստա-
նի շուրջ հրահրող գէպերը: Ինչպէս ներքում
մնացած ժողովրդի յառաջագիւմութիւնը, այն-
պէս եւ գաղութաճայ զանգւածների վերջնա-
կան փրկութիւնը կախւած է միմիայն Հայաս-
տանի Հանրապետութեան սահմաններում տի-
րոջ վարչաձեւի փոփոխութիւնից եւ Հայաս-
տանի թիւրքական լծի տակ մնացած մասի ա-
զատութիւնից: Իայն կեանքը գաղութներում
էլ առաջ է բերում հարցեր, որոնք սերտօրէն
կապւած են Մայր-Երկրի գոյութեան եւ զար-
գացման հիմնական պայմանների հետ: Հէնց
գաղութաճայ զանգւածների սպգային ինքնա-
պահպանութեան հարցը, որ սուր այժմէու-
թիւն է ստացել, առաջնակարգ նշանակութիւն
ունի Մայր-Երկրի ապագայ ճակատագրի հա-
մար: Զգրազել նման հարցերով կարելի էլ. եւ
գաղնակցական միաբը, որքան եւ կլանւած քա-
ղաքական պայքարի առօրեայ հոգսերով, ժա-

մանակ առ ժամանակ պարտաւորւած է ուշա-
գրութիւն դարձնել եւ այդ հարցերի վրա: Մեր
մամուլը այդ տուրքը տալիս է առատօրէն:
Գաղութաճայ կեանքը յուզող խնդիրներին
անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ եւ
«Դրօշակ»-ում:

Ի՞նչ է այսօրայ գաղութաճայ իրականու-
թիւնը: Կա՞յ որեւէ տարբերութիւն ներկայ
եւ, օրինակ, հինգ տարի առաջայ միջակի
միջեւ: Ո՛չ, դժբախտաբար, հիմնական ո՛չ մի
տարբերութիւն. նոյն ցրւածութիւնն ու փո-
շիացումը, տեղական հարցերն ու պահանջնե-
րը ընդհանուր ազգային պահանջներից զերա-
գաս համարելու նոյն արամազրութիւններից,
ազգային ինքնավար ժամբինների մէջ տիրոյ
նոյն իրերամերժ ոյին, կուսակցական կիրքի
ու թշնամանքը, հաւաքական նախաձեռնու-
թեան թուլութիւնը, յարաճուն ուժացում եւ
միայն մանր-մունք, տեղական ճիգեր՝ բարո-
յալքման ու քայքայման թափը մեղմացնելու
եւ ինչ որ հնար է փրկելու համար: Ո՛չ մի
տրբ ձեռնարկ՝ գաղութաճայութիւնը միա-
թեան բերելու եւ հաւաքական կեանք ստեղծե-
լու նպատակով: Ընդհակառակը՝ ակնյայտնի
ճիգ պատահումն ու փոխադարձ յօշոտումը
էլ աւելի խորացնելու եւ սրելու:

Մի քանի տարի առաջ համերաշխութեան
բացակայութիւնը գաղութներում դեռ ունէր
եթէ ոչ արդարացում, գէթ հոգեբանական ու-
րոշ բացատրութիւն. կային տարբեր, որոնց
համար, կեղծ թէ անկեղծ, խորհրդային իշ-

խանութիւնը եւ Երեւանում նստած կամուսնիւնները համարուած էին ազգային իշխանութիւն եւ ազգապահպանման ազդակներ: Այսօր այդ պատրանքն էլ ցնղած է: Երեւանի վարիչները չնական բացարտութեամբ յայտարարեցին ի լուր աշխարհի, թէ՛ «Մենք ամենայն Հայոց կառավարութիւն չենք», եւ գործով էլ ցոյց տւին, որ, իրենք, իրենք հայկական կառավարութիւն չեն ու չեն էլ ուզում լինել: Այժմ արդէն, բացի բուլղերիկներից ոտնիկ ըստացող կամ ստանալու ակնկալութիւն ունեցող մի քանի մտաւորականներից եւ սակաւաթիւ մտլորածներից ոչ ոք չկայ, որ անկեղծօրէն յոյսեր տածէ, թէ խորհրդային իշխանութիւնը կարող է աջակցել գաղութաստիճանական հաւաքական կեանքի գաղափարին: Բնդհակառակը, ամենքն էլ համամիտ են, որ բուլղերիկների գործունէութիւնը արտասահմանում վրնասակար է գաղութաստիճանական համար: Թուով է թէ ջնջւած է գաղութաստիճանը իր տեղական գործերի վերաբերմամբ երկու մասի բաժանող ջրաբաշխը: Հայաստանից դուրս բուլղերիկների մասին ստեղծւած է մէկ ընդհանուր սեւակէտ:

Այսպիսի պայմաններում, ազգային մտահոգութիւններով տողորւած անհատների եւ հոսանքների համար համերաշխութեան ու համագործակցութեան գետինը պէտք է համարուէր. հարթած: Խորհրդային իշխանութեան կիրարկած հակազգութեան հաղաքականութեան հետեւանքով արտասահմանի հայ գանգաւանները վերածուած են ինքնամփոփ հաւաքականութեան, եւ որպէսզի այդ հաւաքականութիւնը ապրի ու յարտուէէ, կատարելապէս գործի ու յառաջդիմէ, անհրաժեշտ է, որ ներքնապէս կազմակերպուի՝ եւ դիմադրական գէնքերով գինւի արտաքին վտանգների դէմ: Այսինքն՝ անհրաժեշտ է, որ գաղութաստիճանական կազմակերպիչ գաղութներն ու համագաղութներն: Անհրաժեշտ է ամրացնել գոյութիւն ունեցող ազգային ինքնավար մարմինները, չեղած տեղը՝ նորերը ստեղծել եւ բոլորը միացնել համազգային ընդհանուր կազմակերպութեան մարմնի մէջ: Անհրաժեշտ է, որ ազգային բոլոր հոսանքները, բոլոր չեղող տարրերը գործակցեն այս կենսական հարցի շուրջ:

Այբուբենական ճշմարտութիւն է, որ միայն կազմակերպւած ժողովուրդը կը լինի ազգային տեսակէտով հասուն, տնտեսապէս ու մշակույթով բարգաւաճ եւ կը կարողանայ հակադրել այլասերման վտանգին: Բայց եւ այնպէս՝ այս պարզ ճշմարտութիւնը որոշ տարրերի կողմից դեռ անտեսուած է, այն սնուի աւարկութեամբ, թէ տեղական կամ ընդհանուր գաղութային կազմակերպութիւնների մէջ կարող են մտնել եւ այնպիսի տարրեր, որոնք հաճելի չեն Երեւանի վարիչներին, որով կը

վերացւի խորհրդային իշխանութեան վստահութիւնը գաղութներին նկատմամբ: Հինգ տարի առաջ նման առարկութիւն դեռ ըմբռնելի էր: Այժմ, երբ «մենք ամենայն Հայոց կառավարութիւն չենք», երբ հայ բուլղերիկները բացէ ի բաց ձեռք են քաշել գաղութաստիճանական կազմակերպիչ, անուանք անընթաց է: Ինչ վստահութիւն եւ ո՞ր վստահութիւնը վերացնելու մասին է խօսքը: Ձէ որ ամենքին պարզ է այլ եւս, որ վստահութիւն չէ եղած ու չկայ, ուրեմն, չեղած բանը ինչպէ՞ս կը վերացուի:

Բայց այդքան հեռուները դնալու պէտք էլ չկայ: Գաղութների կազմակերպութիւնը Երեւանի հետ կապւած քաղաքական հարց չէ, այլ ազգային-մշակութային անհրաժեշտութիւն: Ինչպիսեւանք, գաղութաստիճանական կենսականութիւնը, վերջին հաշուով, ե՛ւ քաղաքական ազգակ է, իբրեւ մի միջոց, որ կուժեղացնէ հայ ժողովրդի ընդհանուր կարողութիւնը, բայց արտասահմանի հայ ժողովրդի կազմակերպութեան անմիջական զրդիչը քաղաքական չէ: Հարկւոր է միացնել ու կազմակերպել գաղութները, որպէսզի աւելի մեծ թափով ու յաջողութեամբ կարեն լինի պայքարել այլասերման վտանգի դէմ, որպէսզի նոր սերունդը չօտարանայ, որպէսզի ազգային ամբողջականութիւնը գաղութներում չխախուի, որպէսզի տարագիր բազմութիւնները միան տողորւած հայրենիքի գաղափարով, մտքով ու հոգով կապուած լինեն Հայաստանի ու Երկրի ժողովրդի հետ, որպէսզի թեմական մարմիններ, հայոց մշակույթ, դպրոց, գրականութիւն, արւեստ, հայրենակցականներ եւ ուրիշ միութիւններ արմկայոյզ կուրների թատերաբեմ չզուանան ու գոհ չգնան կուսակցական կրթի եւ ատելութեան:

Անհրաժե՛շտ է այս հարցերի շուրջ համագաղութային համերաշխութիւնն ու գործակցութիւնը:— Հարկա՛ւ, անհրաժեշտ է: Քաղաքական խնդիր կա՞յ, այս հարցերի շուրջ համերաշխութիւն գաղութաստիճանական խորհրդային իշխանութեան դէմ գնացած կը լինի:— Ի հարկէ, ո՛չ: Խորհրդային իշխանութիւնը՝ իրեն համար, գաղութները՝ իրենց համար: Հէնց խորհրդային իշխանութեան ուզածը է այս: Եւ գաղութաստիճանական ներքին անդորրութեան ու խաղաղ զարգացման տեսակէտից անհրաժեշտ է, որ նրա կազմակերպութիւնները որեւէ գործ չունենան բուլղերիկների հետ եւ, առհասարակ, հետո կենան քաղաքականութիւնից: Այս հիմքերով հնարւում է համերաշխութիւն հաստատել:— Ո՛չ միայն հնարւոր է, այլև անհրաժեշտ: Հարցը վաղուց հասունացած է եւ եթէ ընթացք չի ըստանում, պատճառը այն նախապաշարումն է, որ դեռ տիրող է բուլղերիկապէս եւ հակազգայնակցական տարրերի մէջ:

Յայտնի է, որ գաղութների կազմակերպութեան գլխավոր թշնամիները հայ բոլշեւիկներն են: Նրանք հասկանում են, որ կազմակերպւած գաղութահայութիւնը անմատչելի կը դառնայ իրենց քարոզչութեան ու պառակտիչ գործունէութեան տեսակէտից: Մինչդեռ տարագիր եւ անկազմակերպ գանդաւանները յարմար դէնք են իրենց նպատակների համար. նրանց կարելի է գործածել իբրեւ կոյր գործիք գանազան երկրներում խռովութիւններ յարուցանելիս: Եւ այդպէս էլ արւում է. ամէն տեղ հայ գաղթականութիւնը բոլշեւիկների կողմից դիտւում է իբրեւ թնդանօթային միս, որը ներելի է զոհել «համաշխարհային յեղափոխութեան» սեղանի վրա: Ուստի եւ հայ կոմունիստները ատամների կրճտոցով հակառակում են ինքնամփոփման եւ կազմակերպման բոլոր փորձերին գաղութներում:

Հայ կոմունիստների հակառակութիւնը ազդում է եւ այն տարրերի վրա, որոնք միամտօրէն կամ յետին հաշիւներով խորհրդային իշխանութեան մէջ են տեսնում Հայաստանի ապահովութիւնն ու հայկական հարցի լուծումը: Գանի որ գաղութների կազմակերպութիւնը հաճելի չէ բոլշեւիկներին — թո՛ղ մնան անկազմակերպ. թո՛ղ արտասահմանի հայ ժողովուրդը այրասերի ու փչանայ, միայն թէ բոլշեւիկները երես չչարձեն իրենցից, այսպէս են դատում նրանք: Եւ այս դատողութեանն ոյժ է տալիս եւ այն բացասական վերաբերումը, որ ոմանք ունեն դէպի Դաշնակցութիւնը. թո՛ղ քայքայի գաղութահայութիւնը, միայն թէ Դաշնակցութիւնն էլ քայքայի հետը...

Եւ, սակայն, ժամանակը վաղուց սնանկ է յայտարարել այս տեսակէտը: Տասը տարւոյ փորձը ցոյց տւեց, որ բոլշեւիկները թշնամի ոյժ են հայկական գատի եւ գաղութահայութեան համար: Նոյն փորձը հազար ու մի փաստերով հաստատեց նաեւ, որ Դաշնակցութիւնը չի քայքայւում: Ու չի՛ էլ քայքայի, քանի կենդանի են նրան ծնունդ տւող ու գոյութիւնը արդարացնող պատճառները: Հետեւաբար, գաղութների կազմակերպութեան գործը կապել այն վերաբերումի հետ, որ մարդիկ ունեն դէպի բոլշեւիկները կամ Դաշնակցութիւնը՝ նշանակում է կոյր ձեւանալ կամ չհասկանալ ժամանակի հրամայական պահանջը:

Գաղութների կազմակերպում—ինչպէս երէկ, այսօր ու վաղն էլ ա՛յս պէտք է լինի մեր ընկերների, մարմինների ու մամուլի մտահոգութիւնը: Գաղութների կազմակերպում՝ փրկելու եւ պահպանելու համար արտասահմանի հայ ժողովուրդը իբրեւ ատաղձ վաղւայ Հայաստանի: Եւ այս հարցում կուսակցական պատւախնդրութիւն, կողմնակցութիւն կամ մենատիրութիւն չկայ մեզ համար. ով կողմնակից է գաղութահայոց կազմակերպութեան՝ նա մեզ հետ է, մենք նրա հետ ենք: Անհրաժեշտ է, որ ամենքը տողորեն այս գիտակցութեամբ եւ անյողնում, առանց յուսահատելու պատրաստեն համերաշխութեան հողբանական ու գործնական նախադրեալները: Այն, որ այսօր դեռ դժւար, իսկ ոմանց աչքին եւ անիրականալի է երեւում, վաղը կը դառնայ փաստ, եթէ կամենանք, եթէ միայն անկեղծ եւ ուժգին կամենանք:

Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Տ Ա Կ Ն Ա Պ Ը

Միացեալ Նահանգներում սոյն տարւայ յունարին կար 5.700.000 գործադուրէ բանւոր, Գերմանիայում՝ 4.750.000, Անգլիայում՝ 2.650.000, Իտալիայում՝ 725.000, Աւստրիայում՝ 350.000, Ձեռն-Սլովակիայում՝ 230.000, Լեհաստանում՝ 150.000 և միւս երկրներում՝ տասնեակ ու հարիւր հազարներով:

Այս թիւ մէջ չեն մտնում Ռուսաստանի, Չինաստանի և ասիական ուրիշ երկրների գործադուրէները: Իսկ Միացեալ Նահանգներէջ առնուած են միայն ճարտարաբետական գործաւորները: գիւղի մշակիկը հաշի մէջ չեն: Աշխատանքի Միջազգային Բիւրօն 15 միլիոն է հաշուած աշխարհի բոլոր գործադուրէներէ թիւը, ընտանիքի անդամների թւի հետ միասին՝ անաշխատութեան անմիջական զոհերի դուժարը, յամենայն դէպս, 5) միլիոն հօգուց աւելի է ու պակաս չէ:

Սակայն, տնտեսական տագնապի ծաւալը այսքանով չի սահմանափակուած: Նրանով բռնուած են և՛ Նոզագործները, և՛ առեւտրականները և արհեստաւոր ու արդիւնաբերող տարրերը: Ամբողջ աշխարհը, ահա 20 ամիս է, դարձուած է տնտեսական ճգնաժամի ճիրաններում, և դեռ վերջը չի երևում:

Որո՞նք են պատճառները: Ի՞նչ է դարձանը: Տրտեսական և ընդհանուր մամուլը, դիտնակայաններ, մասնագէտներ, քաղաքական գործիչներ, պետական մարդիկ, արդիւնաբերողներ, աշխատաւորական կազմակերպութիւններ մեծ եռանդով դադարած են պատճառների տեսմանսիրութեամբ ու դարձաններ որոնելով, և սակայն, խնդիրը շարունակուած է մնալ անլոյծ: Պետութիւնները կըրձ են գործադուրէութիւնի բիտը ծախսերի ծանրութեան տակ, անօթութիւնը, հետեւաբար և ջղայնութիւնը սաստկանում է աշխատաւորական զանգաւածների մէջ, իսկ ապագան շարունակուած է մնալ պղտոր ու անհարպարը:

Հասարակական այս հիւանդութիւնը վերացնելու համար անհրաժեշտ է նոր պարզել հիւանդութեան պատճառները: Մին է հիմնականը այդ պատճառներից: Պատասխան չկայ: Կամ, աւելի ճիշտ, կան մէկից աւելի պատասխաններ, որ նոյնն է թէ՛ պատասխան չկայ: Ձկայ ընդհանուր, հանրաճանաչ պատասխան:

Գիտնականները սնդուած են, որ ներկայ տագնապը պարբերաբար կրկնուող տնտեսական սովորական տագնապներից մէկն է: Յայտնի է, որ արդի տնտեսակարգի մէջ, գրեթէ օրէնք է, որ 9-10 տարին մէկ անգամ կրկնեն տնտեսական տագնապները: Վերջինը դրանցից 1921 թւին էր, յաջորդ հերթականը՝ այսօր: Տագնապի հաշիւ յարգաբար կը պայ, երբ հիւանդութիւնն անցնի իրեն համար սահմանուած բնական շրջանը: Արհեստական միջոցներով կարելի չէ փութացնել հիւանդութեան բուժումը:

Մի տեսակ ճակատագրականութիւն, որ քաղցնի տնտեսագիտութեան իմաստութեան խօսքն է համարուած: Դէպքերի բնական յաջորդականութիւն, — չա՛տ

բարի: Բայց այն ժամանակ ինչո՞վ բացարձակ դէպքերի բազմապատկութիւնը, տնտեսական տագնապի ծաւալուն ու թափը, գործազրկութեան զոհերի քանակի պէսպիսութիւնը, այն խորունկ տարբերութիւնները, որ կան նախկին և ներկայ տագնապների միջև:

Անկասկած, դրամատիրական հասարակարգի մէկ յատկանիչն էլ տնտեսական յարաբերութիւնների տարբերային ընթացքն է և այս ընթացքից բխող հակասութիւնները: Բայց տարբերից զատ կայ և մարդու ստեղծագործող ու ղեկավարող կամքը: Կան ազդային ու դասակարգային գիտակից և կազմակերպուած ճեպքեր: Կայ շահերի ու կամքի գիտակցական բարեում: Ներկայ տագնապի մէջ, մասնաւոր, կան մէկից աւելի գորաւոր գործօններ, որոնք հետեւանք չեն տնտեսական յարաբերութիւնների բնականոն զարգացման, այլ արդիւնք են համաշխարհային պատերազմի յեղաշրջիչ դերի և մարդկային ու ազգային հանճարի սթափման ու գործած թոխչների:

Պատերազմը համաշխարհային տնտեսութեան մէջ առաջ բերեց մի շարք նոր երևոյթներ, կամ արդէն գոյութիւն ունեցող երևոյթներին նոր թափ տեց: Ռազմաճակատի ու բազմաթիւն բանակների վիթխարի կարիքները ծայր աստիճան լարեցին արդիւնաբերութեան ու երկրագործութեան արտադրական ոյժը: Մինչ Եւրոպան պատերազմի մէջ էր, Ամերիկան և մի շարք ուրիշ երկրներ խելայից արագութեամբ զարգացրին իրենց արդիւնաբերութիւնը՝ մասնաւորաբար համար պատերազմողներին պարէն, ռազմաթէրք, հաղորդակցութեան միջոցներ և տեխնիկական ու կենսական այլ ապրանքներ: Անսահման պահանջն ու բարձր գները յարաճուն զարգացրին արտադրութեան թափը: Բաւական է իշել, որ Հնչի գները, պատերազմի ընթացքին, աւելի քան 300% բարձր էր, քան պատերազմի նախօրեակին: Նոյնպէս և ինքնաշարժների, քարիւղի, մեքենաների և գործարանային այլ արտադրանքների գները:

Պատերազմի վերջնապիւղց յետոյ, ամէն տեղ, տիրեց տնտեսական կայունութիւն ու տագնապ: Ռազմաճակատն այլևս պահանջ չէր դնում զգալի չափով կրճատուց և թիկունքի կարիքը: Միլիոնաւոր նոր աշխատաւոր ձեռքեր նուուեցին տնտեսական շրջանառութեան մէջ: Բազմաթիւ գործադաններ, որոնք աշխատում էին միայն պատերազմի վրա, փակեցին իրենց դուռերը: Վաճառքի հանուցին պիտորական պահեստներում դիւրած ապրանքները: Պահանջի և առաւարկի նախկին յարաբերութիւնը խախտեց: Եւ, սակայն, տագնապը համատարած բնոյթ չտաացաւ: մի տեղ, ինչպէս Անգլիայում, նա դարձաւ յարատե երևոյթ, ուրիշ տեղ՝ Ֆրանսա, Ամերիկա՝ սկսեց նոր և ընդհանուր վերելք: Հաշտութիւնից յետոյ, տնտեսական պահանջի ձեւ փոխեց՝ ստացաւ խաղաղ ժամանակի բնոյթ. պէտք էր կերակրել սասնական միլիոններով սովահար ժողովուրդներ. հարկաւոր էր վերականգնել

աւերած երկրները՝ անհրաժեշտ էր գիտութեան նոր տեսլանքի համաձայն վերակազմել գիւղատնտեսական ու գործարարական արդիւնաբերութիւնն ու հարորդականութեան միջոցները: Տնտեսը եւրոպայի ձգտում է վերանստեղծել տնտեսական նորիկին դիրքերը և ազատագրել Ամերիկայի գերէշխանութիւնը:

Հետևանքը եղաւ այն, որ թէ երկրագործութիւնը և թէ ճարտարարեստոր ամբողջ աշխարհում հաստատարի լազորածան անեղևակայելի աստիճանների և ապրանքների ու մթերքների արտադրութիւնը՝ աննախընթաց քանակութեան: Շուկան որդուց դիւրանտեսական մթերքներով ու գործարանային ապրանքներով այն չափով, որ մարդկութիւնը, հակառակ սպասման աստիճանի ամսման, անկարող է օգտագործել այդ ամենը: Մտաւոր հաշուով, պատերազմից յետոյ մինչև այժմ, համաշխարհային հացի արտադրութիւնը անկ է 30%, մինչ սպառումը՝ հաջր. 10%: Երևոյթը նոյնն է և երկրագործութեան միւս ճիւղերում: Հասկանալի են նաև այն, առաջին հայեացքից, վայրենի երևոյթները, որոնք նկատու են, օրինակ, Միացեալ Նահանգներում, ուր կառավարութիւնը երկրագործներին դժգոհ է տալիս, որպէսզի սրանք չըզղեն արտերի որոշ մասը, չհասաքեն այլիների խաղողը, եգիպտացորենը: Միլիոնաւոր թիւներով խաղող և հացահատիկներ են փրանում Քալիֆորնիայում, Ամերիկայի միջին նահանգներում, Քանադայում, Արժանտինում:

Նմանապէս և արդիւնաբերութեան մէջ: Այժմ արտադրած ապրանքի քանակը անհամեմատ աւելի մեծ է, քան ներկայացած պահանջը:

Արտադրութեան այս անունը եթէ՛ մի որոշ չափով հեռուան է յետպատերազմի մարդկութեան պատուական պահանջի աւելացման, մեծ չափով էլ պայմանաւորում է գիտական-տեխնիկական այն կատարելագործումներով, որոնց ենթակայ է ժամանակակից ճարտարարեստոր: Մի կողմից մեքենայական նորանոր գիտեր ու գործածութեան բարելաւումներ, միւս կողմից՝ աշխատաւոր ձեռքերի աւելի բնասւոր օգտագործում: Մեքենան աւելի և աւելի նապեցնում է մարդկային ուժի մասնակցութիւնն ու դերը երկրագործութեան և արդիւնաբերութեան մէջ: Մանաւանդ պատերազմը մեծ զարկ տուց այս երևոյթին: Իսկ վերջին 10-15 տարիները՝ երևան եկան արդիւնաբերութեան բոլորովին նոր ճիւղեր, նոր մեքենաներ, գործարանային նոր յարգարում, արտադրութեան նոր միջոցներ ու կերպեր, շարժել ուժի նոր արիւրներ — ուղիւս, օդաշնարայութիւն, ինքնաշարժի ու շագնայութեան շինարարութեան հսկայ թիւիչք, զարկով գոման և հանքածուխի օգտագործման նոր եղանակներ, հսկայական նւաճումներ մետաղագործութեան մէջ: Արհեստական պարարտացման նիւթերի պիւտ: Եւ իբրև հեռանդ այս բոլորի՝ նմանը չտեսնած յիպալընում ու յառաջագիտութիւն արտադրութեան միջոցների ու ձեւերի բնագաւառում:

Մեքենայի տիրապետութեան գուպընթաց մի կողմից զարգանում է դերարտադրութիւնը, միւս կողմից պակասում է աշխատաւոր ձեռքի կարիքը: Մարդը դառնում է մեքենայի լրացուցիչ և ոչ էական մասնիկը. մարդու գործը աւելի և աւելի փոխանցւում է մե-

քենային, որ շատ աւելի արագ ու կատարելալ ձևով է գործուում: Գործարանն ինքնին մի վիթխարի մեքենայ է, ուր աշխատաւոր մարդը այլևս ոչ թէ կամք երևան բերող, վարիչ ոյժ է, այլ մեքենայի ստորադաս, անազատ մի գործակատար: Բացի այդ այնտեղ, ուր դեռ երէկ հազարաւոր բանտերն էին գործուում, այժմ տէր է մեքենան և շուրջը մի քանի տասնակ, կամ շատ-շատ մի քանի հարիւր աշխատաւորներ են վիտուում: Միւսները չարուած են դուրս՝ խտացնելու համար անգործների շարքերը:

Այստեղից՝ և ներկայ տնտեսական աճաւոր տաղնապը, որ մղձաւանջի պէս սպառնալի՜ կախած է ամբողջ աշխարհի դիւին: Արդիւնաբերութեան միջոցները հե ի հե յառաջադիմում են և մի կողմից արտադրում մեծ քանակութեամբ ապրանքներ, միւս կողմից՝ պրծագուրկ են դարձնում սպառող զանգւածները: Գործարկութեան հեռուանքով պակասում է ապրանքների վաճառքը, և գործարանները կրճատում կամ բոլորովին դադարեցնում են արտադրութիւնը: Ապրանքների շրջանառութիւնը խանգարում է. ստեղծուրը ենթարկւում խուճապի ու անանութեան:

Նմանապէս և երկրագործութեան ապարէզում. հողագործի պահեստները սրաքում են հացահատիկից, խաղողը փտում է այգիներում, ցորենով խոզեր են կերակրում, իսկ ժողովրդի մի հասարկ զանգւած մասնաւոր է աղքատութեան ու սովի:

Չարհուրելի հակասութիւններ, որոնց ցանցերում ստուպում է մարդկութիւնը՝ անգոր հասկանալու և յաղթահարելու տարերքի կոյր ոյժը:

Իրութիւնը պակասանում է և մի շարք ուրիշ, տնտեսութեան հետ անմիջական առնչութիւն չունեցող գործօններով: Ամենից առաջ ազգային նոր փոխարարբերութիւնները, որոնք ստեղծւել են պատերազմի հետևանքով: Պատերազմը կանգի կոչեց բազմաթիւ մանր պետութիւններ, որոնք առաջ կայգում էին տընտեսական խոչոր միաւորների մասեր: Այսպիսով խտուտեց նախապատերազմեան տնտեսական հւասարակշռութիւնը: Նոր պետութիւններ ստեղծուումով առաջ եկան և նոր սահմաններ, մաքսային նոր անջրպետներ, տնտեսական խոչոր զանգւածների փոշիացում ու ճիւղերի բաժանում: Ինքնապաշտպանութեան բնագիւն ու կենսուսակութեան ապահովութեան ձգտումը անհրաժեշտ դարձրին ազգային տնտեսութիւնների ստեղծումը և մաքսային սուր պայքարներ: Անկասկած, համարաբարկային տեսակետից, ազգային այս նոր կազմաւորումները մի առ ժամանակ խանգարեցին համաշխարհային տնտեսութեան զարգացման յնթադրը:

Մակային, մաքսային ինքնապաշտպանութիւնը միայն նորաստեղծ ազգերի յատուկ շէ. ստանալովէս մեծ պետութիւններն են, որ շրջապակել են իրենց մաքսային անանցանելի պարիսպներով ու փակ դուրների զաղաքականութեամբ: Ամերիկան է այսօր մաքսային պայքարի բուն աղբիւրը, որով սաստիկ դժուրացնում է Հին Աշխարհի տնտեսական կացութիւնը:

Հաշի պէտք է անեն և մի ուրիշ կարևոր երևոյթ, որ նոյնպէս ծնունդ է մեծ պատերազմի — ազգայնութեան և օտարատեղութեան տարապայման սրումը, ազգային պայքարի փոխադրութիւնը տնտեսական հո-

դէ վրա, այլ տնտեսական ձեւերի զարգացումը մինչև այդ գաղութային համարուող երկրներում: Պատերազմի ընթացքում և յետոյ արդիւնաբերութիւնը արագօրէն անճշ բրիտանական տիրապետութեան տակ զրտնուող արեւելեան մի շարք երկրներում՝ Աւստրալիայում, Եդիպտոսում, բայց մասնաւոր, Հնդկաստանում, որ մինչև վերջերս անվիական ճարտարարեւտի կենսակազմութեան զլիաւոր գարկերակն է եղել: Տեղական արդիւնաբերութիւնը կուտվ ու բոյկոտով հետըզհետէ դուրս է մղում եւրոպական ապրանքները: արեւելեան շուկան զբաւում է հնդկական, ճապոնական, աւստրալիական և դորմարանային արտադրութիւններով: Հում նիւթը մշակուում է տեղի վրա, տեղական միջոցներով, տեղական աշխատուոր ձեռքերով: Եւրոպական արդիւնաբերութիւնը կծկուում է, աշխատուորութեան ոյժը մնում է անանց օգտագործուելու:

Արեւմտեան դրամադրութիւնը և դորմարութեան ձեւերից արեւելեան շուկաները դուրս են եկել և յեղափոխութեան պատճառով: Աշխարհի մէջ վեցերորդը՝ Պորտուգալիան Միութիւնը՝ ահա 15 տարի է հետո է համաշխարհային տնտեսական շրջանառութիւնից: Իսկ վերջին մէկ-երկու տարին փորձում է նորից մտնել այդ շրջանառութեան մէջ, սակայն, ո՛չ իբրև պարտաւոր, այլ որպէս ապրանքներ արտածող: Ընդհանուր յոյսը, թէ Ռուսաստանի վերադարձը կը լինի ի նպաստ տնտեսական հաւասարակշռութեան վերականգնման, այսպիսով, չի արդարանում: Ռուսաստանի հետացումը մեծ դժբախտութիւն էր Եւրոպայի համար, վերաւարձը՝ դառնում է աւելի մեծ դժբախտութիւն: Ռուսական աժան ապրանքները է՛լ աւելի սրում են տնտեսական ճգնաժամը:

Նոյնը կարելի է ասել և Չինաստանի մասին, թէ և Ռուսաստանից աւելի փոքր շահով. առ այժմ չինական շուկան գրեթէ կորած է եւրոպական առևտրի և արդիւնաբերութեան համար:

Պատերազմի ժառանգութիւն ևն և միջազգային պարտքերը, որոնք արճճի պէս ճնշում են մի շարք սոցիալապետներին տնտեսական կեանքը, և՛ այն պարտաւորութիւնները, որ յաղթող պետութիւնները դրին Գերմանիայի վրա: Եւրոպայի հարկատու է Ամերիկային: Եւրոպայից ստացած դրամներով ուճանում է ամերիկեան արդիւնաբերութիւնը և ուճանալով, իր հերթին, մասնուում է տաքնալի: Գերմանիայից հոսող սուկին, ջարձուււթն ու քրիտական նիւթերը սնունդ են տալիս Ֆրանսական ճարտարաւեստին, սրը, այդ պատճառով, կարողանում է դիմանալ սեփող դրոճին չրոյց: Բայց փոխարէնը տալնապի ճերաններում դաւարում է Գերմանիան՝ բունած յարատեւ գործազրգրութեամբ:

Եւ այսպէս՝ ամէն կողմ. մեքենայականութեան անախընթաց զարգացում և արտադրութեան կրճատման հարկադրանք. դրամադրութիւն կուտակում և սպասման սահմանափակում ու գործազրկութիւն: Պաշական վերելք ու զլիապատշաճ պարէլք: Յարտեւ տաքնալ: Մարդկութիւնը տառապում է ընկերային հակացութիւնների ոլորտում: Միլիոններ ու միլիոններ հաճախ են աղաղակում, մինչ անդին դիզած հարստութիւնները

մնում են անանց գործածութեան: Ո՛ր է ելքը, վերջապէս: Ո՛ր է դարմանը:

Եթէ դրութեան պատկերացման խնդրում կարծիքների տարբերութիւնը ընդհանրապէս, շատ մեծ չէ, — է հարկէ անանց հաշի աննկրու դրամապրութեան ճակատագրի գնահատման խնդրել, — դարմանը որոնելիս տեսակէտները մեծապէս բաժանուում են, և ամէն ոք հարցին մտնելու է իր գասակարգի կամ իր անհատական շահի ու դադափարի կշռաչափով: Այլ է դարմանը գործարանատիրոջ համար, այլ՝ հողատէր արդիւնաբերողի, այլ՝ աշխատուոր գիւղացու և բանւորի համար: Ինչքան շահ՝ այնքան և տեսակէտ: Եւ ինչքան շահը սուր է, այնքան տեսակէտը՝ կը քրտ ու կուտաղէ: Դարման որոնելիս կարելի չէ ունենալ ընդհանուր մեկնակէտ. կամայականայ պէտք է զեկավարելու հատաձական նկատումներով. դրամատէրը զեկավարում է իր հատուածի նկատումներով, ընկերութեանը՝ աշխատուոր հատուածի, այն համոզումով, որ այն ինչ որ աշխատուոր զանդամներէ շահերից է բխում՝ է՛ նաև ընդհանուր մարդկութեան շահը:

Շահերի բախումը ու մրցակցութիւն է դրամատիրական հասարակականութիւնը մղել ոյժը: Եւ այն ոյժը ամէն քայլափոխի մենք ստեղծում ենք և տնտեսական տաղնապի լուծման ձեւեր որոնելիս: Այս տեսակէտից շահապանց հետաքրքրական է այն հանդիպումը, որ ունեցան գործատէրերի և աշխատուորութեան ներկայացուցիչները Աշխատանքի Միջազգային Բիրոյի Պորտուգալ: Վերջինս, անցնալ հոկտեմբերին, իր Բիրոսելի նստաշրջանում որոշել էր ջննութեան ենթարկել գործազրկութեան պատճառները: Այդ նպատակով այս յունւար ամսին Պորտուգալ հրաւիրեց մի սոցիով, ժընեում, որին մասնակցեցին և գործատէրերի ու բանւորներէի ներկայացուցիչները:

Պորտուգալ ներկայացրած զեկուցումը մասնանշում էր այսօրւայ տնտեսական տաղնապի բացաւրիկ ծանր ընդթը, իբրև հետևանք տնտեսական ու ելճմտական հաւասարակշռութեան խախտման: Ըստ Պորտուգալ, տաղնապը արդիւն է մասամբ տնտեսութեան բնականոն զարգացման, մասամբ էլ՝ պատերազմի ու պատերազմից յետոյ տեղի ունեցած վերելալարումների: Չկուցումը թուում է տաղնապի զլիաւոր պատճառները, որոնք են. ըսի շարք երկրագործական մթերքների տարապայման գերարտադրութիւն, արդիւնաբերական ռոշապայման գերարտադրութեան և շուկայի սպասողական կարողութեան միջև եղած յարաբերութեան խախտում, գնբրի անկում, իբրև հետևանք գնադական իրական ուժի՝ դրամի ու վարկի և աշխարհում գտնւած սուկու միջև տիրող համախառնութեան խախտումն. վտանաւորեան բացակայութիւն. արծաթի գնի անկում, սրով պակասում է գնողական կարողութիւնը արծաթի իբրև դրամական հիմք ունեցող երկրներում. յիստ յարթր ինքնաթիճէ. միջազգային առևտրին հասցնած անհամագումարիւնները արտադրութեան մար օնախնների հաստատումով, մահապաշտպանութիւն և քաղաքական պարտքերից բխող գծմալարութիւններ. ազգագրական շարժումների և աշխարհի սպասողական հոգիների ու նիւթական արդիւնների շահագործումն հնարաւորութեան առէկ յարաւցուող արգելիներ. մեքենայականու-

քեան խիստ արագ զարգացում և արուստրութեան մե-
տքի կատարիագործում ։

Պատճառներից այս թուումը, ինչպէս տեսանք, կա-
րելի է շարունակել և ուրիշ փաստերով : Նրանց վերա-
բերմամբ մեծ ապահովութիւններ չկան : Եւ ընտանի
է , որ Աշխ . Միջ . Բիւրօի Սօցիալիզմի գումարած ժողովը
միաձայնութեամբ հաստատար առաջարկած կէտերը :
Միայն աշխատաւորութեան ներկայացուցիչները՝ Բեկ-
դիայի ընկերվարական Մարտինս, Փրանսացի ժուռ ու-
րոշ վերադասում արին տազնապի մանէն հիմնական
պատճառների մասին, որ ներկայացրին որպէս գրա-
մատիրական հասարակակարգի, այսինքն՝ ախրող ըն-
ժամի ճգնաժամ : Միայն ժողով գտնուած էր, որ դրա-
մատիրութիւնը կը կարողանայ յարմարել փոխանցման
նոր պայմաններին, այլպէս նա դատապարտւած է
քայքայման :

Այսպէս թէ այնպէս, համբարշտութիւնը տազնապի
պատճառների մատնանման հարցում, ընդհանուր առ-
մամբ, կատարել է : Բոլորովին այլ է ինչիւրը, երբ
պէտք է լինում ցոյց տալ դարմանման միջոցներ, այս-
ինքն՝ դժեւ այն գործնական քաղաքականութիւնը, ու-
րին պէտք է հետեւել տազնապը վերացնելու համար :
Այստեղ արդէն գործատէրն ու աշխատաւորը գէ՛մ դէ-
մի են և շէն կարողանում հասկացողութեան լեզու
գտնել :

Երկու կողմերն էլ ընդունում են, որ անհրաժեշտ է
կառավարութիւնների ուշադրութիւնը հրահրել հե-
տեւել կէտերի վրա —

Աշխատանքի շուկայի վերակազմութիւն այնպէ՛ս,
որ գործազուրկներին հնարաւորութիւն տրի գործու-
նելու՝ օգտագործելով աշխատանք եղած վայրերը և
գործաւորութիւնը յարմարեցնելով , փարտաբարեստի
նոր պայմաններին :

Գործազուրկութեան դէմ գոյութիւն ունեցող ապա-
հավաքութեան ու նպատի գարգացում և պարտադիր
ապահովագրութեան հաստատում չեղած երկրներում՝
պարտաւորեցուցիչ դարձնելով պետութեան մասնակ-
ցութիւնը :

Ազգային և միջազգային հանրային խոշոր աշխա-
տանքների կազմակերպում :

Միջազգային ֆամագործակցութիւն՝ նոր գալքա-
վայրեր և աշխատանքի ու սպառման նոր շուկաներ
ստեղծելու համար :

Համագործակցութեան գարգացում տարբեր ազ-
գային տնտեսութիւնների միջև

Այս կէտերն ընդունելին բոլորն էլ, բայց գործա-
տէրերի ներկայացուցիչները ոգի ի բուն գիմարդեցին և
մեթոքեցին ստորագրել բանուրական պատգամաւորնե-
րի հետեւելու առաջարկները —

Աշխատանքի օրւայ և աշխատանքի շարքաւայ
կրճատում՝ հաշի տանելով արտադրութեան յաւելու-
մը արգելադրութեան կատարիագործումների հե-
տեւանով :

Միջոցներ գտնել քարտայցնելու համար աշխատա-
վարձը այն երկրներում, ուր նա դեռ ցածր է, որպէս
զի կարելի լինի վերացնել մրցութիւնը և աւելացնել
սպառողի գնողական կարողութիւնը, այլ և գարգա-
ցնել ընկերային ապահովագրութիւնը, որը հնար կը

տայ պահել իր կամքից անկախ գործից զրկւած բան-
ւորի սպառման ներկայ աստիճանը :

Ընդհանուրապէս, գործատէրերը պիտու էին, որ
տիրող տազնապի մեղմացման համար անհրաժեշտ է,
ստանին հերթին, ինչնեղ տարանջնակի ինքնարժէքը,
որպէսպի սպառումը կարելի լինի պահել բարձր աստի-
ճանի վրա, մինչդեռ բանուրական ներկայացուցիչների
ստաւարկի հետեւները կը լինի ինքնարժէքի բարձրաց-
ում, հետեւաբար, և սպառման կրճատում :

Գործատէրերն իրենց տեսակէտից, ի հարկէ, ի-
բաւացի էին . սպրանքի ամոնութիւնը սպայման է ըն-
պատման ուժեղացման, բայց նրանք մոռանում են, որ
երկար աշխատանքները և աշխատավարձի կրճատու-
մը, արդիւնաբերութեան արդի պայմաններում, սուս-
բացնելով գործազուրկների բանակը և սակաւեցնելով
բանուրի գնողական միջոցները մեծապէս կը թուլա-
ցնեն սպառումը : Այս այն հիմնական հակասութիւնն
է, որից ստաւապում է դրամատիրական տնտեսակար-
գը : Յաւն էլ հէնց այն է, որ ինչքան կատարելագործ-
ւում են արտադրութեան միջոցները, որքան մի երկրի
արդիւնաբերութիւնը հարստանում է մեղքնայական
գիտերով ու բարեխառնմանով, որքան Տարտաբար-
ւետի շինարարական թափը ստողականում է, այնքան
արւում է յարաբերութիւնը տարանջնակի ստաւարկի
և սպառման միջև . սպրանքների առատութիւնը դաւ-
նում է տնտեսական ճգնաժամի և աշխատաւոր զան-
գաւանդի տառապանքի աղբեր : Այլ ևս աւելի և աւել-
լի պարզ է, որ քաղաքի գիտութեան և տիրող զանե-
լի առաջադեմը կառավարութեան իրաւունքն է արմա-
տական լուծում տալ այս հակասութեան և նրանից ծա-
ղող ծանր հետեւանջներին : Հետեւաբար, հարցը մնում
է բայց . ինչպէ՞ս լուծել այդ հակասութիւնը : Ո՛ր
դուրեք ընկերային այս հիւանդութեան բուժիչ զեղը :

Այս հարցով զբաղւելին և Ընկերվարական ու Ար-
հեստակցական Միութիւնների Դաշնակցութեան Միջ-
ազգայինները, որոնք կազմել էին մի խոտն յանձնա-
խումբ՝ քննելու համար համաարհային տնտեսական
տազնապի և գործազուրկութեան ինքնակերպը : Յանձնա-
խումբն իր յունւար 21-22 նիստերում, Ցիւրիխում,
ընդունեց մի երկար բանաձեւ, որ դրամ հարցին տա-
լիս է բազմակողմանի ու հիմնաւորած պատասխան :
Ուղարկելով ընթերցողին ղեպի այդ բանաձեւը՝, որի
մէջ առաջ են բերւած տազնապի մանրագննի վերլու-
ծութիւններն ու հիմնաւորումները՝ այստեղ կանդ
կառնենք միայն էական կէտերի վրա :

Ընկերվարութեան և արհեստակցական միութիւն-
ների ներկայացուցիչները մեկնում են այն նախադր-
եալից, որ ներկայ տազնապը անխուսափելի հետեւանք
է համաշխարհային պատերազմի և դրամատիրական
կարգի գարգացման : Դրամատիրական տնտեսութիւնը
ստիճանաբար կորցնում է իր ոտքի տակի հողը, իր
խո՛ղ ստեղծած հակասութիւններով՝ դարձնում է ժա-
մանակավրէպ իր գոյութիւնը : Դրամատիրութիւնը
կանգնած է երկընտրանքի առջև՝ կամ մահ, կամ ա-
զատութիւն : Այսինքն՝ կամ պէտք է յարմարել նոր
պայմաններին և կամաց-կամաց կերպարանափոխել .

*) Տե՛ս «Իրօշակ», 1931թ . № 1—2 . էջ 26—28 :

փոխանցել նոր հասարակագրի, կամ քայքայել ու ոչնչանայ: Աշխատաւորութեան ձգտումն է, կողմակերպւած ու յարատե գործունէութեան միջոցով, ապահովել քաղցքին կարգի փոխանցումը ընկերակալական գրութեան, ըստ կարելոյն, պակաս զոհերով մարդկութեան ու յատկապէս թեման համար:

Այս մտահոգութիւններով են պայմանաւորուած այն տոնավաղրութիւնները, որոնք կազմեցին Յիւրիի բանաձևի հիմքը: Բանաձևը պահանջում է.—

Բոլոր ուժերով և միջոցներով բոլոր երկրները մէջ ընդդիմանալ օրավարձերի կրճատման:

Միջազգային պայքար ի նպաստ հնգօրեայ և քառասունամեայ աշխատանքի շարքաի:

Լայն և մեծ վարկեր հանրային աշխատանքների կազմակերպման համար:

Ապրանքների և հանրային աշխատանքների կենտրոնացում պետական կազմակերպութեան ձեռքին:

Գործարկութեան պարտադիր ապահովագրութիւն ու նպաստաւորում:

Հանրային վերահսկողութիւն բոլոր մեծաշնայինների և հակաշէն գների նշանակման վրա:

Ազգերի Գաղնակցութեան հակակշռի միջազգային կարտելների (տնտեսական միութիւններ) վրա:

Հակակշռա միջազգային մատային գների վրա և մատների նւազեցում:

Խիստ նսկողութիւն. բանուրական կազմակերպութիւնների մտանկցութեամբ, թղթադրամ տպող դրամատների վրա:

Միջազգային պատերազմական պարտքերի ջնջում կամ մասնակի կրճատում և, իբրև նախապայման այս պահանջի, ընդհանուր գինարկութիւն կամ սպառազինման կարևոր չափի կրճատում:

Ապա բանաձևը շոշոփում է մի շարք քաղաքական հարցեր՝ աշխարհի խաղաղութեան վստահում, Փաշխտական կայսերապաշտութիւն, Ռուսաստանի, Չինաստանի ու Հնդկաստանի խառնակ վիճակ, և եզրակացնում է.—

Յանձնայտուժը համոզուած է, որ անգործութիւնը չպիտի անհետանայ վերջնականապէս. քանի չեն ջրնջուած դրամատերական կարգերը և քանի նրանց տեղ հիմնուած չեն ընկերակալական կարգերը:

Այս վերջին կետում է ամփոփուած, իսկապէս, համայնաբարձր համաշխարհային տնտեսական տաղանաչի: Դրամատերութիւնը պարտաւորուած է քայլ առ քայլ տեղի տալ անող ու կարգապող նոր հասարակագրի առջև: Միայն ընկերակալական իրական յաղթանակը, այսինքն՝ աշխատանքի և արտադրութեան արդար կազմակերպումը կարող է վերացնել ներկայ քաղցքին հանրային կարգի ներքին հակասութիւնները: Իսկ մինչ այդ լինելիք բոլոր պարմանումները մնալու են կիսամիջոց և ծառայելու են արտադրութեան և բաշխման ձեւերի կտտարեկարգման, աշխատաւոր զանգուածների ապրելակերպի բարելւման և աստիճանական փոխանցման դէպի նոր հասարակագրութիւն:

Ս. ՎՐԱՑՅԱՆ

Մ Ե Ն Շ Ե Ի Կ Ե Ն Ե Ր Ի Դ Ա Տ Ա Վ Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Ռուս մենչևիկները դատար, որ տեղի սենցաւ առ թի մարտի սկզբին Մոսկուայում, և որին մեծ ուշադրութեամբ հետևեց քաղաքակիրթ աշխարհը, հետաքրքրական է մի շարք տեսակետները:

Նախ և առաջ, մէկ աւելորդ անգամ ևս մարդկութեան առջև պարզեց խորհրդային դատարանի վայրայ պրովոկատիւն կողմը:

Երկրորդ, այդ դատը եկաւ նորից հաստատելու, որ պայքարը խորհրդային իշխանութեան ու ժողովրդի միջև այն ատիճան է սրւել, որ այլևս խաղաղ միջոցներով չէ, որ պէտք է լուծուած ստանայ:

Եւ, որովհետև, Ա մենչևիկների գոտաւարութիւնը ցոյց տուց, թէ ստալինեան զբաղակող ու կործանորար քաղաքականութիւնը մինչև ո՛ր կարող է հասցնել երկիրն ու համբուրութեան կապանքները խորասփոխ ժողովրդին:

Օղտապրծելով այն հանգամանքը, որ մեղադրական աթուղին նստածները նախկին մենչևիկներ են և պատկանում էին մի կուսակցութեան, որն անգամ է երկրորդ Ինտերնատիոնալի, բողջեկները ջանք չնստ-

յեցին ցեխով ու մրով պատելու միջազգային բանուրութեան այդ կուռ հաստատութիւնը: Եւ ճիշտ այն է, որ այդ դատն ուղղուած էր ոչ այնքան ռուս սոցիալ-դեմոկրատ կուսակցութեան, որքան Աշխատաւորական Միջազգայինի դէմ:

Ստալին, խորհրդային արդարադատութեան դրժադրած խաղախութիւններն ու վայրագ միջոցները արդէլք չեղան, սրբուկի սև աթուղ վրա նստող լինի ինքը Ստալինը:

Մոսկուայի դատաւարութեան կարելի է մօտենալ երկու տեսակէտից. մէկ՝ դատելով արտաքին երևոյթներէից և երկրորդ՝ թափանցելով ներքին էութեան մէջ: Դատի արտաքին կողմն այն է, որ բողջեկները կողմից բարձրած յարկ մեղադրանքները ճիշտ են, որը և հաստատուած են Ա մեղադրեալներն անխտր: Իսկ ներքին էութիւնը՝ բողջեկեան կեղծիքին ու կեղծեղծին ենթակայ ժողովրդի սրբաբարութիւնն է ու պայքարող ուղին:

Ո՛վքեր են մեղադրեալները և ի՛նչու մն ի նրանց յանցանքը :

Գրոման, Շեր, Սուխանով, Գինդուրդ, Եակուբովիչ, Սեկուլովիչ, Զալիլին, Վոլկով, Պետուսին. Ֆինն-Ենոտասևիչ, Բերլացիչ, Իկով, Տէյսեյրաում և Խուբին, — ահա այնքան արժեքից դատաւարութեան 14 հերոսները: Բոլորն էլ տարբից առած մարդիկ (40-58 տարեկան), ցարկան ու խորհրդային բանտի ու քաղտրի երկար տարիներ շտապաբար շալակներին, գիտական մեծ պաշարով օժտւած յայտնի մասնագէտներ:

Դրանցից շատերը խորհրդային տնտեսական կեանքում խոշոր դեր են խաղացել ու ամենապատասխանատու պաշտօնները վարել: Ո՛մանք, իրենց բեղմնաւոր ու եռանդուն գործունէութեան համար, վարձատրել են խորհրդային կարմիր շքանշանով: Բոլորն էլ ամբողջ տասը տարիներ, ամենայն անկեղծութեամբ ու առանց որևէ յետիւ ղիտումի ներխուժել են խորհրդային տնտեսական շինարարութեան:

Եւ ահա, խորհրդային շինարարութեան այդ սիւները մեղադրւում են որպէս դաւաճաններ երկրին ու յեղափոխութեան, ժողովրդին ու վարչաձեռին:

Մեղադրեալներին տեսնելուը, իբրև սոցիալ-դեմոկրատ կուսակցութեան անդամներ, մինչև խորհրդային իշխանութեան հաստատուելը, հակարուշ-ւիկեան տրամադրութիւններ են ունեցել: Երբ բոլշևիկեան իշխանութիւնը կայունանում է, նրանք հրաժարւում են իրենց կուսակցութիւնից, հեռանում քաղաքական սպարկից և համակերպւելով օրւայ իշխանութեան՝ ամբողջապէս ներուում են երկրի տնտեսական շինարարութեան: Նրանք կարծում էին, թէ օժանդակելով երկրի վերաշինութեան՝ կը կարողանան ազդել բոլշևիկների տնտեսական քաղաքականութեան վրա և կը նպաստեն, որ խորհրդային վարչաձեռ ստեղծանաբար գոյաբերին ժողովրդավար կարգերով: Նոր տնտեսական քաղաքականութիւնը աւելի է ամրացնում նրանց այդ տեսակետը և նրանք էլ աւելի մեծ եռանդով շարունակում են իրենց աշխատանքը: Այդ դրութիւնը շարունակում է մինչև 1926-27 թւականները, երբ նրանք ստիպւած՝ վերադաճատութեան են ենթարկում իրենց ընդգրկած քաղաքականութիւնը և միանգամայն հակառակ վարքագիծ ընդունում: Ստալինի նոր քաղաքականութիւնը խորտակում է նրանց յոյսերը: Նրանք համարում են, որ օրինական միջոցներով անհնար է իրականացնել իրենց ստալինգրած նրպատակները: Եւ նրանք նորից վերադառնում են քաղաքական գործօն պայքարի:

Համաձայն մեղադրական թղթի ձևակերպման և մեղադրեալների ցուցմունքների, մենչևիկները պաղտնի գործունէութիւնը արտաբայտել է հետևեալում.

1925 թւից սկսած, երբ խորհրդային իշխանութիւնը միտումներ է ցոյց տալիս փոխել նեպը, անհաս նախկին մենչևիկները, որոնք զանաւում էին տնտեսական պատասխանատու դիրքերում, աշխատում են տընտեսական ծրագրիներն ու վիճակագրութիւնը կազմել այն ձևով, որ կարողանան ազդել կառավարութեան վրա և թոյլ չտալ շեղելու նոր տնտեսական քաղաքականութեան հուսից: Երբ այդ բանը նրանց չի յաջող-

ւում և, մանաւանդ, երբ բոլշևիկները ներկուսակցական պայքարը (Տրոյկի-Ստալին) է՛լ աւելի է արագացնում դէպքերի ընթացքը և ուժգնօրէն խախտում Նեպի հիմքերը, մենչևիկները միտք են յղանում վերակազմել իրենց կուսակցութիւնը և կազմակերպւած՝ ընդդիմանալ բոլշևիկներին տնտեսական վերջին քաղաքականութեան, որի նպատակն էր վերադառնալ նախնեպեան շրջանին: Այդ նպատակով սկիզբում միաՆում և կազմակերպւում են ղեկավար տարբեր և ապա, աստիճանաբար, կազմակերպչական ցանցով պատում են խորհրդային բոլոր տնտեսական հիմնարկներն ու երկրի դիվանդր կենտրոնները: Գաղտնի կազմակերպութեան ղեկավարներից ոմանք, պաշտօնի սեռւումով, ճամբարում են արտասահման և Բեքլինով անտեսւած մենչևիկների արտասահմանեան կենտրոնի հետ, որը և խրախուսում է երկրում մնացած ընկերների ձեռնարկած աշխատանքը: Արտասահմանի խոստանում է աշակցել թէ՛ ներթափաչ և ու գրականութեամբ և թէ՛ տեղեկութիւններով ու հրահանգներով:

Այդ շրջանի գործունէութեան ծրագիրն է լինում՝ ուժեղացնել ու խորացնել կազմակերպութիւնը, գրտւել տնտեսական ղեկավար դերքերը ու այդ ձևով ազդել երկրի քաղաքականութեան վրա և ոչ թալ տրոյկիստական պայքարի այն ծրագրին, ուր պահանջւում է կուսակցութեան ներքին ուսկազմարացում, որին՝ յաջողութեան դէպքում՝ յաջորդելու էր սիտական կարգերի ուսկազմարացումը:

Արտասահմանի հետ կանոնաւոր կապ հաստատուելը՝ յետոյ, երկրում գործող կազմակերպութիւնը քննելով աւելի ու աւելի է ծաւալւում և 1928թ. փետրւարին ընտրւում է կենտրոնական մարմին, որը «Միութեանական Բիւրօ» անւան տակ, ղեկավարում է բոլոր աշխատանքները: Երկրի ընկերների առատ տեղեկութիւններ և թղթակցութիւններ են սուղարկում արտասահման՝ ստանալով այնտեղից գրականութիւն և դրամ: Բացի այդ, համաձայն որոշման, մենչևիկ տնտեսավարները, օգտւելով իրենց պայտօնական գիրքից, ամէն միջոց գործադրում են երկրի տնտեսութեան կարգազման ընթացքը թախսպանել Նեպի ընդգրկած սահմանների մէջ:

Շուտով պարզւում է, որ պայքարի առ միջոցներով էլ անհնար է հասնել առաջադրած նպատակներին: Ներկուսակցական պայքարից յաղթանակով է խնում և Ստալինը, որը կուսակցութեան քաղաքականութիւնը աւելի ու աւելի ձախ է թեքում: Հարւած հարւածի տակ փլում են Նեպի հիմքերը, բոլշևիկներն աւելի վճռական ու եռանդով ձեռնարկում են մէկ երկրում սոցիալիզմ կառուցանելու ծրագրին, մտկում են հեզմեակը, սուղարչից իսպառ ջրում մասնաւոր անուտուր և արչւակը սկսում դիւղել անհատական տնտեսութիւնների դէմ: Բուխարինեան-Թիվիլիան աջ ընդդիմադիր շարժումը, որը կուսակցութեան այս քաղաքականութեանը հակառում էր Նեպի պահպանման քաղաքականութիւնը, նոյնպէս անյաջողութեան է մատնւում: Խաղաղ բարեշրջան ծրագրից դառնում է անյոյս և անիրականանալի մէկ ցանկութիւն: Փրկութեան նոր ճանապարհներ ու պայքարի նոր միջոցներ պէտք է որոնել:

Եւ ա՛հա, սկսած 1928 թ.ից, մենչեիկները կուի միանգամայն նոր գէնքեր են գործածում, որն, իբր թէ, հրահանգում ու արտօնակն է արտասահմանէն իրենց կենտրոնից, իբրև ներշնչում Երկրորդ Միջազգայինի ղեկավարների տեսակէտներէց:

Մշակած նոր վարքագծի համաձայն, մենչեիկներն իրենց նպատակ են դնում բուն միջոցներով տապալել բոլշեիկեան ղեկատարութեան և խորհրդային կարգերի սեղ հաստատել բուրժուական-ծողովրդավար կարգեր: Մենչեիկներն ընդունում են, որ խորհրդային իշխանութեան վերացումով երկրում վերահաստատուելու է դրամատորական կրօնութիւն, ուստի, այժմուսինից և և՛ թ, պէտք է համաձայնութեան գալ դրամատորական տարրերի հետ թէ՛ երկրի ներսում և թէ՛ երկրից դուրս: Այդ նպատակով նրանք մերձենում են Բազմիտի «Արդիւնաբերական Կուսակցութեան» և Կոնքրատիւնի «Հետազոտական-կուլտիւրային» կուսակցութեան հետ: Նոյնպէս ընդառաջ են գնում այն տեսակէտին, որ խորհրդրդային իշխանութիւնը տապալել օտար միջամտութեամբ և եւրոպական դրամատորութեան գէնքի ուժով: Արտաքին ոյժի յաջողութիւնը պահանջուելու համար, երկրի ներսում մենչեիկներն անցնում են վիտասարար աշխատանքի՝ նպատակ ունենալով կազմալուծել տնտեսութիւնը և կասեցնել շինարարութեան դարգացման ընթացքը:

Հակախորհրդային երեք կուսակցութիւնները աշխատանքի հետեւել թափանցում են կտաւարում: Բամդինի կուսակցութիւնը, որ արտասահմանի դրամատորական շրջանակների հետ մեծ կապեր ունէր, պէտք է նախապատրաստէր՝ գինեւալ յարձակում խորհրդային Միութեան վրա և դրամապէս օժանդակէր երկրի ներսը գործող կազմակերպութիւններին: Կոնքրատիւնի կազմակերպութիւնը երկրի ներսում առաջացնելու էր զելզացիական ապստամբութիւններ: Իսկ մենչեիկներն էլ կազմակերպելու էին քաղաքի ազգաբնակչութիւնը, բանւորութիւնն ու մտաւորականութիւնը: Բացի այդ, բերնէ էլ ուժգին գաղթ են առիւս վիտասարար գործունէութեան, որ հետեւեալն է—

Տնտեսական բոլոր • հիմնարկներում, սկսած պետական ծրագրային կենտրոնական մարմնից մինչև ժողովնախորժ ու բոլոր ժողովնատններն, այդ կազմակերպութիւններն ունին մարդիկ, որոնք մեծապէս ազդում էին տեւալ հիմնարկութեան աշխատանքների վրա: Որպէսզի երկրի տնտեսական կեանքը խանգարուի ու քառային վիճակ առաջանայ, մենչեիկներն ու միւս կազմակերպութիւնների անդամ պանդոսեաները սխալ ծրագրներ ու վիճակագրական տեղեկութիւններ էին ներկայացնում կառավարութեան, որոնք չէին համապատասխանում Կոմկուսի ընդհանուր գծին, ոյժ էր տրւում տնտեսական այնպիսի ճիւղերի, որոնք ընկերվարութեան վերակառոցման տեսակէտից երկրորդական նշանակութիւն ունէին, զանազանցնում էին բանւորական կենտրոնաշատ վայրերի ու քաղաքների պարենաւորման գործը, կենսական մթերքներն ու ապրանքները կենտրոնացնում էին այնպիսի շրջաններ, որոնք պետական առևտրի, հացաղմիկների ու համազորակազմների յաջողութեան տեսակէտից բնաւ կարևոր չէին, վարկաւորում էին և օժանդակում մասնա-

ւոր առևտրականներին ու զելզական անհատ տնտեսութիւններին, խախտում էին չեւրոնեցի արժէքը և վիժեցնում տնտեսական խոշոր ձեռնարկները:

Երկրի մենչեիկների կողմից բնագրկամ նման գործունէութիւնը միանգամայն համապատասխանում էր արտասահմանէն իրենց կենտրոնի տեսակէտին: Թէ «Միութեանական Բիւրօ» անդամների հետ Բերլինում ունեցած զրոյցների ժամանակ և թէ՛ երկիր ուղղած իրենց հրահանգների ու ցուցմունքների մէջ, Դանը և Արբամովիչը, երբեմն ջողարկւած ու երբեմն էլ շատ յտաակ՝ խրախուսում և միանգամայն բաժանում էին երկրի ընկերների գործելակերպը: Եւ ոչ միայն իրենք էին համաձայն այդ տեսակէտին, այլ և, ըստ արտասահմանէն ղեկավարների, Երկրորդ Միջազգայինն էլ, իբր թէ, նոյն եզրակացութեան էր յանգել: Դեռ աւելին. մեղադրեանիցից ոմանք հաստատում էին (օրինակ, Նակոբովիչը), որ օտար միջամտութեան և վիտասարարութեան զազախները, առաջին անգամ յայցել են արտասահմանի մենչեիկները, որոնք, իրենց հերթին, ազգւել ու ներշնչւել են Կաուցիկներէց ու վանդերպիլզներէց: Այդ ամենը աւելի եւ որոշ է դառնում, երբ 1928-ի աշնան սկզբին զազանի երկիր է անցնում Արբամովիչը և իր տեսակէտի կրիւնները ընթացքին պարզում արտասահմանէն տեսակէտը:

«Միութեանական Բիւրօն» իր աշխատանքների ընթացքին ստացել է 480,000 բուրլի դրամական օժանդակութիւն, որից 200,000-ը Բամդինի կուսակցութիւնից և 280,000-ը արտասահմանի կենտրոնից, որն, իբր թէ, իր հերթին ստացել է զերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնից: Դրամը համարես ածող շնորհի յատկացւել է վիտասարարութեան գործին: Մենչեիկներն իրենց հակաշրջապիտոսական գործունէութիւնը շարունակել են մինչև մերակալութիւն (1930թ. սկզբները):

Սա դատաւարութեան արտաքին կողմն է: Այսպէս է ներկայացնում գործը խորհրդային դատարանը: Այն և հաստատում բոլոր վկաներն ու իրենք մեղադրեալները: Հետևաբար, մենչեիկների դատաւարութիւնը խորհրդային արդարադատութեան մէկ փառաւոր յաղթանակն է: Այդ երբակացութեան կարող են բերել արտաքին երևութիւններ: Սակայն, բաւական է պատուել վարպետը, որպէզզի պատմական այս խոշոր զէպքը ներկայանայ միզ բոլորովին տարբեր գոյնով:

Բայց նախ՝ պէտք է պարզել, թէ ի՞նչ բան է մենչեիկները այս դատաւարութիւնը:

Դատաւարութեան ամենաշտուկանշական կողմն այն է, որ չկան մեղադրողներ, պաշտպաններ ու պաշտպանողներ: Կայ միայն մէկ կողմ՝ մեղադրող: Թէ՛ դատարանն ու պաշտպան փաստաբանները և թէ՛ վկաներն ու մեղադրեալները, ամենքն էլ հանդէս են խալի մեղադրողի դերում: Դեռ աւելին. մեղադրողները խաւտովանում և դատապարտում են այնպիսի յանցանքներ, որոնք բնաւ չեն գործել իրենք: Սրանք դատարանի առաջ մէկիկ-մէկիկ կրկնում են այն բոլոր ամբաստանութիւնները, որ թելադրել են Չեկայի դահիճները: Այլ կերպ, հրապարակային դատ չէր էլ կազ-

մակերպելի: Զէ՛ որ այդ դատավարութիւնից մի քանի ամիս առաջ էր, որ առանց դատի ու դատաստանի զեղաբարձարեցին 48 յայտնի մանազգեսներ: Զէ՛ որ բուլշեակիները նպատակն է ոչ թէ երևան հանել արդարութիւնը, այլ կեղծիբով ու խարդախանքով խաբել ժողովուրդն ու ողջ աշխարհը: Զէ՛ որ, էրեք մեղքերն ու անանկութիւնը ծածկելու համար անհրաժեշտ են բաւարարեալ նախադէպեր...

Եթէ ոչ ի՞նչ անուշ տալ այնպիսի մէկ յերիւրանքի, որպիսին է Արքամովիչի Ռուսաստան աջիւրութիւնը, երբ անհրճելի փաստով ապացուցւած է, որ նա 1920 թից ի վեր Ռուսաստան չի եղել: Կամ թէ ձիւ-Ֆիբոլեպեց Հարիւր Հազարներ ստանալը ու Երկրորդ Միջազգայնի ե գրամատը թշնամիները գործակցութիւնը: Կամ մի՞թէ ամենքին յայտնի չէ արտասահմանեան մենչեկիները կրաւորական դերքը հանդէպ խորհրդային իշխանութեան: Զէ՛ որ «չախուս ուսական յեղափոխութեան փրկութեան» նրանք դէմ են բուլշեակիների բռնի ստպլաման՝ լինի այդ օտար միջամտութեամբ, թէ ներքին սպտամբութիւններով: Զէ՛ որ այդ նոյն մենչեկիներն անգամ դէմ են խորհրդային սահմաններում գտնուող ազգութիւնների անջատողական ձգտումներին և տարւ տարի է, ինչ արթուն պահակի պէս հսկում են, որպէսզի խորհրդային երկրները դերձ մնան ներքին կամ արտաքին ցնցումներից: Նրանց պայքարը քննադատութիւնից այն կողմ չի անցել երբեք: Եւ պէտք էր, որ ամբողջ մենչեկոզմը նստէր մեղադրական աթոռին, որպէսզի Արքամովիչը յանդուրանութիւնն ունենար միջազգային բանուրութեան առաջ խոսովանելու, թէ՛ բուլշեակեան կարգերը ցարականից էլ շատ աւելի վատ են: Վերջապէս, դատավարութիւնից շատ առաջ չէր, որ Դանիւր բողոքի ձայն բարձրացրեց Կառուուու աւն տեսակների դէմ, որով վերջինս կոչ էր անում խորհրդային երկրներում ժողովրդական սպտամբութիւններ առաջաւարտ, դէպքում, օգնութեան հասնել սպտամբներին: Եւ օգնութիւն ստելով, ի Հարկէ, Կառուակին ի նկատի չունէր դրամատէրերի զինեալ միջամտութիւնը, ինչպէս որ փորձեց ներկայացնել խորհրդային դատարանը Կրիլենկոն:

Եւ եթէ խորհրդային դատարանին, ճշմարտութիւնը վերականգնելու համար, վկաներ էին Հարկաւոր, ինչո՛ւ դատարան բերեցցին արդէն դատապարտւած Բամիլինն ու դատի տակ դտնուող Կոնտրաստելը, և ոչ յայտնի ձախմանչեկի Բրոնշտայնի-Վայրիխնովը, որը 1929թ. արտասահմանից դազանտի անցել էր Ռուսաստան ու մի քանի ամիս յետոյ ձերբակալուել: Եւ կամ ինչո՛ւ Հազարաւոր ձերբակալւած յեղափոխականներից միայն 13 հոգու են դատի ենթարկուած: Եւ վերջապէս, այդ ի՞նչպէս է պատահում, որ մեղադրեալները դաբարապի ու դատարանի բոլոր մեղադրանքներին «այո՛» են պատասխանում...

Ահաւասիկ դատարանի կողմից Հարցաքննուում է մեղադրեալ Պետունինը, որը, իբր թէ, 1928թ. ամառը Բերլինում տեսակցել է Դանի Հետ: Ըստ մեղադրեալի ցուցմունքի, Դանի կողմից արւած Հրահանգների մէջ չի եղել օտար զինեալ միջամտութեան մասին որեէ յիշատակում: Բայց դատախաղին իր մեղադրական ճառի համար անհրաժեշտ էր, որպէսզի մեղադրեալն այդ

կէտն էլ հաստատի: Եւ Կրիլենկոն հասնում է նպատակին: Մի շարք հարցերից յետոյ Պետունիին «խոստովանում» է («Պարալա», 1931թ. մարտ 4)...

Մէկ ուրիշ օրինակ ևս.— Մեղադրեալներից պրոֆեսոր Ֆինն-Ենոտակեկին համարձակութիւն է ունենում հերքել իր վրա բարդած մեղադրանքները: Երկրորդ հարցաքննութեան սա էլ է «խոստովանում»: Եւ հետաքրքրականն այն է, որ այս մեղադրալին պաշտպանող փաստաբանը, իր պաշտպանելի այդ հերքումը համարում է «գիտնական մարդու տարօրինակութիւն»... Ֆինն-Ենոտակեկու նման «յանգզնութիւնը» սուլի նստեց. դատարանը նրան շատ աւելի խիստ դատապարտեց, քան նոյնիսկ դատախաղն էր պահանջում:

Արդ՝ հարց է առաջանում՝ արդե՞օ մեղադրեալները փոքրոզի, պրովոկատոր և վախկոտ մարդիկ են: Ո՛չ: Նման մեղադրանք բարդել նշանակում է հետու մնալ ճշմարտութիւնից և օրինակահանցել խորհրդային կառարանի ու Չեկայի գործարարած սադրանքները: Անշուշտ, այս գործի մէջ ամենախոշոր դերը պատկանում է պրովոկատորին. և, առաջին հերթին, խորհրդային արդարադատութեան, որն իր հիմքում պրովոկատորական է: Անհաւանական չէ, որ մեղադրեալները ու վկաների մէջ էլ պրովոկատորներ լինեն: Սա կայն, այդ բոլորը մէկ տեղ արգելք չեն, որպէսզի մեղադրեալների վրա նայե՞ք որպէս զուհերի:

Անշուշտ, խնդրին կարելի է ճօտենալ նաև հոգեբանական տեսակէտից: Զէ՛ որ բուլշեակիների բարոյական ըմբռնումներն ու խորհրդային յոռի կարգերը տարիներ ընթացքում թուլացրել են անհատի դիմադրական կրողը և աստիճանաբար մարդու մէջ մեղացրել մարդը: Զէ՛ որ Չեկան իր տրամադրութեան տակ ունի ծայր աստիճան նրբացած ամէն միկոց հոգեբանօրէն ազդելու իր ճիբաններում գալարուող զուհի վրա: Եւ, վերջապէս, չէ՛ որ պրովոկատորն ընդունակ է առաջացնելու հոգեբանական ամէն տեսակի բեկում: Իսկ Ֆիլիքական ազգու միջոցների ներգործումը...

Այս ամենը անհաւանական չէ: Բայց մեզ թուում է, որ մեղադրական աթոռին նստածների մեծ մասը չէր ենթարկւել հոգեբանական զայնթաղութեան: Դո՛ւն, այդ է ապացուցանում նրանց տասնակ տարիների յեղափոխական ընդլայնակայ գործունէութիւնը: Աւելի հաւանական է, որ Չեկան նրանց այնպիսի պայմանների մէջ է դրել, որ որեէ մեղադրեալի մէկ աւելորդ խօսքն ու կտրվի կարող էր մահանալ սպտամու դառնալ իր 13 ընդհանրէր համար: Եւ ոչ միայն այդ 13-ի, այլ և տասնեակ ու տասնեակ մերձաւորների ու համախոհների մահաւան դատաւճիտ ստորագրած կը լինէին, եթէ չնչին շեղումն անգամ կատարէին Կրիլենկոյի ու Մենժիկեկու ցուցմունքներից: Զէ՛ որ Չեկայի դատանութիւնը դեռ ևս զերպագցւած չէ...

Կազմակերպելով մենչեկիների դատավարութիւնը՝ Կոմկուսը նպատակն էր մէկ հարւածով սպանել մի քանի նպատասակ:

Նախ և առաջ, այս դատավարութիւնը դատն էր նաև բուլշեակեան կուսակցութեան ընդդիմադիր տարբերի: Թէ՛ ձախ տրոցիկականներին և թէ՛ ալ բուխ-

րինականներին ստալինականները միշտ մեղադրել են մենչևեիզմի մէջ: Տրոցկու այն տեսակէտը, որով նա ներկուսակցական դեմոկրատիայ պահանջ էր դնում, մէկ երկրում սոցիալիզմի կառուցման ջեր հաստատու է խորհրդային տնտեսութեան զարգացումը պայմանաւորում էր վերջինիս փոխարարներութիւնով դրամատիրական երկրների տնտեսութիւնների հետ, Ստալինի թշնամի հռչակից որպէս մենչևեիզմի արտայայտութիւն: Մենչևեիզմը յայտարարեցին նաև Բուխարինի և Բիկովի առաջադրումները, որոնք արհամարհում էին Նեպի պահպանում, դասակարգային պայքարի մեղմացում, աւելի խոհեմ քաղաքականութիւն գիւղի հանդէպ և քաղաքի խոշոր արդիւնաբերութեան զարգացման որոշ համաշխուրթիւնը:

Գտաւաւարութիւնը պարզից, որ մեղադրեանները որոշած են եղել ոյժ տալ և աջակցել ընդդէմադիրներին՝ հէնց նրանց այդ տեսակէտների համար: Եւ երբ տեսակէտների նոյնացում կայ և այդ տեսակէտները պաշտպանողները մեղադրական աթոռին են նստած, պարզ է, որ դատը ուղղւած է նաև աջ ու ձախ ընդդէմադիրներին դէմ, որոնց ճակատին վաղուց արդէն կիքել է մենչևեիզմի դրօշը: Այդ բանը չծածկեց ինքը կրիլենկոն, յոյս յայտնելով, որ աշխատանքը զանգուանները, վերջնականապէս պատում տեսնելով ընդդէմադիրներին դիմակը, ընդմիջտ երես կը դարձնեն նրանցից:

Պրովոկատիոնի ենթարկելով՝ վարկաբեկել ու բարոյապէս մեղցնել կուսակցական հակառակորդներին, — ահա Ստալինի առաջին նպատակը:

Երկրորդ, աւատական կարգերի վերականգնումը խորհրդային երկրներում և դրա հետեանքով բանուոր դասակարգի յուսախոր դեգրեումները հարկադրում են բոլշևիկներին առանձնապէս զգաստ լինել դէպի աշխատանքութեան արամադրութիւնները: Վերջին տարիների բանուորութեան արամադրութիւնների մէջ առաջացող բեկումը տեղի է ունենում ոչ ի նպաստ բոլշևիկներին: Խորհրդային երկրների աշխատանքութեան ստրկական վիճակը մղում է նրան վերագնահատման՝ նոր յենարաններ ու ելք որոնելու: Ձրկեյ նրան միակ յենարանից՝ ցոյց տալով Բ. Միջազգայինի որպէս թշնամի խորհրդային աշխատանքութեան, խորացնել վիճը այս վերջինի և արևմուտքի աշխատուոր զանգւածների միջև, — այս է Ստալինի հետապնդած երկրորդ նպատակը:

Երրորդ, բոլշևիկներին անհրաժեշտ է միշտ ահ ու սարսափի տակ պահել ժողովուրդը, ցոյց տալով, որ միջազգային դրամատիրութիւնը, դաշնակցած Երկրորդ Ինտերնախոնայի հետ, պատրաստուած է յարձակել Թուրքաստանի վրա, ծուստը այն ու վերահաստատել կալաւածատիրական ու արհնապետական կարգեր:

Եւ, վերջապէս, մենչևեիզմի դատաւարութիւնը պէտք է համոզէր ժողովուրդին, որ այն անտեսական ճղնատմար և պարենաւորման գրկանքները, որ արարում է երկիրը, ոչ թէ հեռակեց են իրենց՝ բոլշևիկների քաղաքականութեան, այլ հակաիշխոյսական մասնագէտների վնասարար գործունէութեան:

Բայց իրօք մեղադրւալնները վնասարարներ, ժողովուրդի թշնամիներ ու հարկերից դաւաճաններ էին: Պարզենք նաև այս խնդիրը:

Հոկտեմբերեան յեղաշրջման յաղթանակից յետոյ, հակարոշևիկ մտաւորականներից քչերն էին, որ կամուլին լծեցին խորհրդային կուքին: Իրենց սրտի խորքում մնալով հասարակիմ ժողովրդավար սկզբունքներին, այդպիսինոր այն կարծիքին էին, որ, վերականգնելով տնտեսութիւնը, նրանք կը կարողանան դիկտատուրան աստիճանաբար փոխարինել քաղաքական ապաստութեամբ և ժողովրդավար կարգերով: Իրենց այդ համոզումը էլ՛ աւելի ամրապնդեց, երբ 1921թ. մարտին, Կոնչուստաղի ըմբոստ նաւատիներ և Թուրքաստանի ու Հայաստանի ապստամբ զիւղացիների գրոհի տակ Լենինը կիրառեց նոր տնտեսական քաղաքականութիւնը — Նեպը:

Մինչև 1926թ., գնալով Նեպի ու աւելի էր խորանում և տնտեսապէս ուժեղացած դիւղացիութիւնը նորանոր գիծումներ հարկադրում իշխանութեանը: Այդ ժամանակ հանդէս է գալիս Տրոցկին ու յայտարարում, թէ տնտեսապէս ամբացած դիւղացին մահացու թշնամի է խորհրդային տիրապետութեան: Ստալինը, կուսակցական հաշիւներով առաջադրւած և Տրոցկու միւս պահանջները վտանգաւոր համարելով, տապալում է վերջինիս, իւրացնելով միաժամանակ տրոցկիզմի դիւղին և քաղաքի ճարտարաբանութիւնը մարտը մասը: Սկսւում է նահանջ դէպի նախանշական դիրքերը:

Վոմկուսի այս ընթացքը խորտակում է բոլոր այն մարդկանց հաշիւները, որոնք իրենց քաղաքական առաջադրումները պայմանաւորում էին Նեպի նաճուածներով: Նրանք պարտ տեսնում են, որ ստալինեան տրեստական քաղաքականութիւնը առաջընդունում է ոչ թէ ժողովրդի տնտեսութեան ու երկրի իրական շահերով, այլ լոկ քաղաքական նկատումներով: Հնգամեայ ծրագիրը վերջնականապէս դժում է այն ուղին, որով ընթանալու է խորհրդային երկրների տնտեսական ու քաղաքական կեանքը: Եւ մարդիկ, որոնք հրաժարել էին քաղաքական ընդդէմադիրի կոչումից և իրենց յոյսը դրել խորհրդային իրաւակարգի բարեշրջման վրա, միանգամայն յուսախար, փորձում են Նեպից պահպանել այն բուլբը, ինչ որ հնարաւոր է:

Նեպի սկզբունքները ջատաղովոյ Բուխարինի և Բիկովի աջ ընդդէմադրութիւնն էլ ջախջախում է, և մասնագէտները մնալով մեն միւսակ, ճիգ են գործադրում, իրենց սեփական միջոցներով, փրկել երկրի տնտեսութիւնը ստալինեան «քեյազեօրութիւններից»:

Օրինակ, մեղադրւալնները աշխատում են դիւղում պահպանել անհատական տնտեսութիւնը և ոյժ տալ նրանց զարգացման, համոզւած լինելով, որ հասաքական տնտեսութեան քաղաքականութիւնը թուլացնելու է երկրի տնտեսութեան պատանաւան կազմող զիւղը:

Պայքարելով պետական առևտուրի մենատիրութեան դէմ, մեղադրւալնները ուզեցել են ժամադակել մասնաւոր առևտրին:

Կազմելով նոր ծրագիրներ, նրանք ոյժ են տւել արդիւնաբերական այնպիսի ճիւղերին, որոնք ժողո-

վերջի կենսական պահանջները տեսակէտից աւելի հրատարակ են համարել:

Եթէ Կոմկուսը պարենի ու սպորտընտրի բաշխումը կատարելիս առաջնորդուած է դասակարգային ու կուսակցական տեսակետով, մեղաբերակներն այդ անկիր առաջնորդել են ժողովրդի շահերով:

Եւ, վերջապէս, ժողովրդի մի ժողովրդական անտեսութեան դէմ սկսած սոսակրեան յարձակումներն ու արշաւաններն դիմադրաւիր համար, մենչեկները կազմակերպուած են ու զարգացական պայքարի էրում: Եւ, բնականաբար, ժողովրդի միւս խաւերի մէջ էլ պէտք է որոնելիս գործակիցներ ու համարձակներ:

Եւ եթէ իրենց պայքարի ընթացքին որոշ շեղումներ էլ կատարած լինեն, ապա այդ էլ պէտք է վերա-

դրել դիվատուրայի ստեղծած ուրոյն պայմաններին: Տասնչորս մենչեկների դատաւարութիւնը մէկ բան պարզեց՝ որ դեռ էս խորհրդային երկրում կան ուժեր, որոնք Կոմկուսի հակաժողովրդական զարգացանութեանը հակադրուած են իրականում ժողովրդավար ու հայրենասիրական գործելակերպ: Թող որ դատաւարներն ու իրենք մեղաբերակները որակեն այն, որ պէս հակայնդատական ու վնասակար աշխատանք: Ըստ էութեան, մենչեկների պայքարը շտապ արտայայտութիւնն է ժողովրդական այն տրամադրութեան, որը օրէջքօր աւելի ու աւելի հուսկու է դարձնում աշխարհիս ամենարայտառակ մի կարգի դէմ ուղղած բողոքի ձայնը:

ԱՇՈՏ-ԱՐՄԵՐՈՒՆԻ

ԳՐԴԱԿԱՆ ՀԱՐՑՆ ԻՆՏԵՐՆԱՍԻՈՆԱԼՈՒՄ

Ընկ. Ա. ՋԱՄԱԼԵԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԵՄԵԱԳԱՀ ԴԸ ԲՐԻՒԲԵՐԻՆ

Ընկ. Դը Բրիւքնը ամենից առջ փեր է հանում մի կարևոր պարագայ՝ այն, որ մեր Ինտերնասիոնալը յոտակ գաղափար չունի քրդական շարժման բնոյթի և պայմանների մասին, չնայած որ մենք զանիցս հրաւիրել ենք Ինտերնասիոնալի ուշադրութիւնը այդ շարժումների ու նրանց հաւանական հետեւանքների վրա, չնայած նաև, որ վերջին ժամանակներս բուրժուական անուր բաւական յաճախ, այս կամ այն ձևով, արձագանք է տալիս քրդական շարժումներին: Գուցէ այս ամենը բաւական չէ, որ մեր Ինտերնասիոնալը գաղափար կարճէր քրդական հարցի մասին. բայց սա ո՞ւմ մեղքն է: Մենք այստեղ յաճախ առիթ ենք ունեցել ցաւ արտայայտելու, որ Հեռուոր Արևելքում — Ջինաստանում, Հնդկաստանում են — մենք ընկերվարական կուսակցութիւններ չունենք, որոնք մեզ իրագրելի պահէին այդ հեռուոր երկրների իրադարձութիւններին, որպէսզի մենք էլ նրանց հանդէպ կարողանայինք ի պահանջել հարկին, նպատակալարմար դիրք ճշտել: Բարեբախտաբար, նման դժարութեան առջև չէ գլուխում մեր Ինտերնասիոնալը Մերձավոր Արևելքի վերաբերմամբ: Որովհետև յանձնել Հ.Յ.Գիւնակցութեան Ինտերնասիոնալն ունի իր մէջ մի կուսակցութիւն, որ իր ճիւղերը լայնօրէն տարածած լինելով Մերձավոր Արևելքի բոլոր երկրներում, ի վիճակի է հայտնաբերելու Ձեզ համար այն բոլոր տեղեկութիւնները, որոնք անհրաժեշտ են այդ երկրների կացութեանը և իրադարձութիւններին իրագրելի դառնալու համար: Եթէ Ինտերնասիոնալը մինչև հիմա բաւարար չափով ուզք չէ գարծել օգտագործելու այս արժէքաւոր և հարգաւարտ պատեհութիւնը՝ իր տեղեկութիւնները Մերձավոր Արևելքի երկրների և ժողովուրդների մասին լայնացնելու և խորացնելու նպատակով՝ այդ պէտք է բացատրել այն անտարբերութեամբ, որ ցոյց է տրուում այստեղ գրեթէ բոլոր ոչ-բուրժուական գործերի և, մասնավորապէս, ազգային շարժումների հանդէպ:

Ես արդէն առիթ եմ ունեցել մի քանի անգամ վեր հանելու այն հակայական տարբերութիւնը, որ դուրս-քիւն ունի, այս տեսակետից, մեր և Երրորդ Ինտերնասիոնալների միջև: Մինչդեռ վերջինս ոչ միայն ուշի ուշով հետևում է ամէն մի ազգային շարժման, այլ և չեղած տեղն էլ այդպիսի շարժումներ է առաջ բերում անգամ երկրագնդի ամենախուլ անկիւններում՝ մենք

յուզնութիւն իսկ չենք վերցնում մեզ վրա վաղորդ ծառայանալու ունէ ազգային շարժման, մինչև որ նա խաղաղութեան համար վտանգաւոր հանգամանք չէ առնում: Ի հարկէ, էս մի վայրկեան անգամ չեն անդիտանում, որ Երրորդ Ինտերնասիոնալը, ազգային հարցերով դրադելիս, մագաչափ անգամ չէ հետաքրքրուած իր թեւարկութեան տակ առած ազգերի պատուութեամբ ու երջանկութեամբ: Ամենքիդ պէս են էլ գիտեմ, որ բոլոր ազգերն էլ թղանաթալին միս են հանդիսանում Երրորդ Ինտերնասիոնալի աչքում՝ իր դաւադրական նպատակներն առաջ տանելու համար: Սակայն, սա չէ խանդարում հաստատելու, որ ազգային հարցում Երրորդ Ինտերնասիոնալը շատ աւելի ակտիւ դեր է կատարում քան մենք:

Մտ համար էլ, ընդհանրապէս արևելեան երկրների ընկճած ժողովուրդների մէջ, որոնք ի վիճակի են թափանցելու բուլեւիկեան մեքենայութիւնների ներսը, Երրորդ Ինտերնասիոնալն աւելի մեծ վարկ ու համարում ունի, քան մեր Ինտերնասիոնալը:

Այդ ժողովուրդների մէջ հարգաւարտ բացառութիւններից մէկն են կազմում քրդերը, որոնք հէց սկզբից բացասական դիրք են բռնել դէպի Երրորդ Ինտերնասիոնալի գործակալները, թէև սրանք ճարպիկ խոստումներով, պէնթով ու դրամով շանում էին իրենց ազգեցութեան տակ առնել Երրորդական շարժումը:

Մտ պատճառները երեք են: Առաջին՝ որ քրդերը, Ո. Հ. Միութեան սահմանների վրա սպրեւոր, բաւականաչափ ծանօթ են իրական վիճակին այն ժողովուրդների, որոնք, ընկած լինելով բուլեւիկեան իշխանութեան տակ, դժբախտութիւն ունին ճաշակելու նրանց զազգային զարգացանութեան՝ դառնութիւնները: Երկրորդ՝ քրդերի յիշողութեան մէջ դեռ թարմ են այն սիրաբանութիւնները, որ Երրորդ Ինտերնասիոնալի ներկայացուցիչները մի քանի տարի առաջ սնում էին թիւրք ջարդարանքների հետ, որոնք, ինչպիսի փաշայի գլխաւորութեամբ, բազմած էին Ջինովիկ կողքին Բաղլաւ Համադումարում: Երրորդ՝ որ գլխաւորն է՝ քրդերը չունեն, որ Երրորդ Ինտերնասիոնալը ոչ այլ ինչ է, բայց եթէ Ո. Հ. Միութեան արտաքին գործերի ղեկավարամենտներից մէկը, որ այս կամ այն պահանջիկ հաշով կարող է բարեցակամ

վերաբերմունք ցոյց տալ ղէպի զերբազան շարժումը և միջև իսկ նիւթապէս օժանդակել նրան, սակայն, վերջ է վերջն, պէտք է անէ այն, ինչ որ հրամայում է իրեն Ո՛. Հ. Միտիթեան կառավարութիւնը: Եւ որովհետև վերջինս դաշնակից ու զինակից է քեմալական թիւրքիստան, դրա համար էլ ճերբորդ Ինտերնասիոնալը դիտում է իրեն միասնակը կամ անուսպն կասկածելի մի ազդակ զերբազան պատասխանական պայքարի համար:

Ահա այս նկատումներով, զերբ ժողովուրդը իր յոյսերը կապում է մեզ հետ և ոչ թէ ճերբորդ Ինտերնասիոնալի հետ:

Այս ժողովրդի ըզմերի, շարժումների և տառապանքների մասին մենք տւել ենք Ձեզ մեր ունեցած բոլոր տեղեկութիւնները: Եթէ մտքով մտացած չաբցեր կան դեռ եւս, մենք պատրաստ ենք իրական լոյս սրբանուր նրանց վրա: Մենք պատրաստ ենք մինչև իսկ դիրտութիւններ ընծանելու, որ Գործադիր կոմիտէին կամ Գարտուպարութիւնը այլ միջոցներով ևս վերահասու լինի զերբազան շարժումների վիճակին և հետևանքներին, միայն թէ գտնէ այն չարացում տեղիք շինի երկիւղ կրելու, թէ մեր Ինտերնասիոնալի եւրոպական մասնաճյուղի մէջ զժառանգութիւն է պատճառում ոչ-եւրոպական չարացիք ըմբոստողութեան համար: Որովհետև մեր Ինտերնասիոնալը ըստ իր նպատակների, ծրագրի և կանոնադրութեան, համաշխարհային կազմակերպութիւն է և ոչ թէ գրուտ եւրոպական:

Ընկ. Իր Բիւիւէնիի երկրորդ դիտողութեան մասին շատ քան չունեն ասելու: Ինչպէս զիտք մեր կուսակցութեան զկերպագրից, զբրկական շարժումն ուղղւած է բացառապէս թիւրքիոյ դէմ, և նշաններ չկան, թէ նա կարող է տարածուել և հարևան երկրներում, ուր զբրկական դանդաճներ կան: Մենք կարծում ենք, որ եթէ Միւրիոյ, Իրաքի և Պարսկաստանի կառավարութիւնները շարունակեն վերաբերել իրենց սահմաններին մէջ ապրող զբրկերին համաձայն ժամանակակից գեմոկրատիցի սկզբունքների, որ պահանջում է բաւարարել ազգային փոքրամասնութիւնները օրինական պահանջներ, չպէտք է երկիւղ կրել, թէ զբրկեր այդ երկրներում անջատողական շարժումներ կը յարուցանեն տեղիք տալով միջազգային բարդութիւններ: Մենք Հաւատացած ենք նաև, որ եթէ Ինտերնասիոնալը խօսքով և գործով պաշտպան կանգնի յանուն իր ազգային պատուութեան և իրաւունքների թիւրքիստանի դէմ մարտնչող զբրկութեանը, սա որչէ չափով նախադրուչացում կը հանդիսանայ վերոյիշեալ կառավարութիւնների համար, խոյս տալու այնպիսի քայլերից, որոնք կարող են անհարկի զբրկութիւնները առաջ բերել իրենց հպատակ զբրկերի մէջ և շեղել նրանց օրինապահ քաղաքացիութեան ուղիք:

Շատ աւելի ուշադրաւ է մեզ համար ընկ. Իր Բիւիւէնիի երրորդ դիտողութիւնը, որ վերաբերում է ազգային ինքնորոշման իրաւունքը գէնքի ուժով իրականացնելու խնդրին:

Ազգութեաբօրէն մեր մէջ ստարակարծութիւն չկայ: Ամենքս համաձայն ենք, որ ազգային ինքնորոշման իրաւունքին պէտք է հետամուտ խաղաղ միջոցներով, դեմոկրատիայի ճանապարհով և ոչ թէ արիւնհեղուութիւններով, որոնք պատերազմական վտանգի սպայման կրում իրենց մէջ: Եւ, համաձայն մեր Ինտերնասիոնալի կողմից որդեգրւած այս տեսակէտի, մենք միշտ յորդրուել և մինչև իսկ ստիպւել ենք բուլղերիկեան լծի տակ հեծող մեր ընկերներին և ժողովրդին, որ, զիկատատուրայի բոլոր դժամոհմութիւններին համակերպելու պայմանով իսկ, հրաժարուել մեր երկիրը ներքուստած բռնատնտեսիին գէնքի ուժով վտարելու ծրագրերից: Այս փոքր ինչ նւաստացուցիչ քաղաքականութեանը մենք հետևել ենք այն մտածումով, թէ բուլղերիկները, ճիշտ է քարտուքանդ են անում մեր ժողո-

վրբազան անտեսութիւնը, ճիշտ է, հապարներով ձերբակալում և աքրորում են մեր ընկերներին, բայց և այնպէս դանդաճային շարժերի ջիւղ դիմում և հայ ժողովուրդը ցեղովին բնաջինջ անելու քայլերի չեն դիմում:

Սակայն, ինչպէ՛ս կարելի է այսպիսի համակերպման քարոզ կարգալ մի երկրում, ուր օրւայ իշխանութիւնը — իսօսք քեմալական կառավարութեան մասին է — հրով ու սրով է բնաջինջում ազգային ինքնորոշման պահանջներ առաջադրող ժողովուրդներին: Մեր կուսակցութեան զեկուցադրից և իմ նախկին բացատրութիւններից դուք արդէն տեսաք, որ զերբ ժողովուրդը դրւած է երկրմտրանքի առջև. կամ ցեղովին բնաջինջել, ինչպէս բնաջինջելին թիւրքիստանի մէջ մտացած հայերը համաշխարհային պատերազմի ժամանակ, և կամ ազատել թիւրքական տիրապետութիւնից: Այսպիսի պայմանների տակ դրւած մի ժողովրդի ակնանջի դառը հեզնանք չի՛ հնչի արեօք, և եթէ մենք նրան ասենք, թէ համաշխարհային խաղաղութեան և դեմոկրատիայի շահերը պահանջում են, որ նա, գէնքը ցած գնելով՝ ապաւինի իր զահեճների գթատարութեանը: Սակայն, ենթադրենք մի վարկեան, թէ քրդերը, անասլով մեր յորդրներին կամ խորհուրդներին, գէնքը ցած զրին՝ կարող կ'ենք մենք երաշխաւորել դէթ նրանց Ֆիդիբազան ապահովութիւնը, երբ մենք յուշական, բուլղերական, արաբական և հայկական կոտորածներին պատմութիւնից ծանօթ ենք թիւրքական արիւնուշա բնազններին...

Պարզ է, ընկերներ, որ ներկայ ղէպերում մենք չենք կարող զնկալարել մեր խաղաղապետական տրամադրութիւններով: Ազգային կենտրոններ խաղաղ, դեմոկրատիկ միջոցներով լուծելու ձգտումք, որով ստորուած է մեր Ինտերնասիոնալը, այլ կարելիութիւններ և մանաւանդ այլ բարքեր է նախադրում, քան այն, որ մենք կարող ենք գտնել թիւրքական իրականութեան մէջ:

Գալով ընկ. Իր Բիւիւէնիի շրբորդ դիտողութեանը՝ ես նրա հետ կատարելապէս համախաճիք եմ, որ մենք, ներկայիս գտնէ, Ազգերի Դաշնակցութեանը շատ քան չենք կարող սպասել յօգուտ զբրկական չարքի լուծման: Ազգերի Դաշնակցութիւնը իր անդուրթիւնը քանիցս ցոյց է տւել Հայկական հարցում: Հանդիսաւոր կերպով Հայաստանի անկախութեան պահանջը երկու երեք անգամ բանաձեւելով և իւրացնելով՝ նա անհարակ գտնուեցաւ այդ պահանջի իրականացման ինքորում մինչ այն աստիճան, որ ասանք թէկարոջ ձևակայն առարկութեան արձանագրից իր մատենաներում Լոզանի դաշնագրից, որը պիտի գերեզմանաբար հանդիսանար Հայաստանի անկախութեան վրա: Բրդերի համար Ազգերի Դաշնակցութիւնից աւելին ակնկալելու ոչ մի յոյս չունիք, որը պիտի գերեզմանաբար հանդիսանար մեր մենք զբրկական հարցն Ինտերնասիոնալի առաջ ենք դնել, այլ բոլորովին այլ նկատումներով: Մեր նկատումներն են:

Ա. Մեր Ինտերնասիոնալը, իրեն համաշխարհային քաղաքականութեան մի օրղան, պէտք է կենդանի արձադանդ սոյ այն բոլոր շարժումներին, որոնք յուզում են այս կամ այն երկրի քաղաքական կեանքը: Թիւրքիստանի պէս բնաբրձակ մի պետութիւն այսօր զերպարզութիւնակի է մատնուած զբրկական շարժումների պատճառով, և տարօրինակ պիտի թւար, եթէ այդ շարժումները մեր ուշադրութիւնից դուրս մնային:

Բ. Ինտերնասիոնալը, ազգերի ինքնորոշման իրաւունքը յատարարելով՝ դրանով իսկ իր պաշտպանութեան տակ է անել այն բոլոր ժողովուրդներին, որոնք հեծում են օտար լծից, և ձգտւել իրենց ազգային-քաղաքական իրաւունքներին: Այս կարգի ճիշտ ժողովուրդներ մէջ ամենից առաջ զբրկերը իրաւունք ունին մեզից պաշտպանութիւն սպասելու, որովհետև նրանց

վրա ելչտող թիւրք ելչխանութիւնը ոչ թէ սովորական միջոցներով է գործադրում իր բռնակալութիւնը, այլ և զանազանային տեղահանութիւններով և շարժելով:

Գ. Քրդական չարքը, իր անուրջ վիճակում, խիստ լուրջ սպառնալիք է հանդիսանում Մերձասոր Արեւելքի խաղաղութեան համար: Այսօր նա թիւրք-պարսկական յարաբերութիւններ է բարդացրել, վաղը կարող է այլ բարդութիւններ առաջ բերել թիւրք-խրդացեան և թիւրք-սիրիական յարաբերութիւններին մէջ, որովհետեւ Իրաքի և Սիրիոյ սահմաններում ապրող զրդական հոծ զանգվածները չեն կարող անտարբեր մնալ դէպի այն սոսկալի կեղեցումներն ու շարժելը, որոնց ենթարկուած են թիւրքեային լծի տակ գտնուող իրենց եղբայրակիցները: Եւ մեր Ինտերնացիոնալը, որ այնքա՛ն նախանձախնդիր է խաղաղութեան պահպանման համար՝ չպիտք է անուշաբուխութեան մասին Մերձասոր Արեւելքի խաղաղութիւնն սպառնացող այս վտանգը:

Գ. Բուրժուական մամուլը, մասամբ շահադիտական նկատմամբով, մասամբ էլ անիրազեկութեան պատճառով, շարժուելով ստասյոլ լուրերի է տարածում զրդական շարժումների մասին՝ յենկելով, զրբթէ բացատրապէս, թիւրքական հաղորդարութիւնների վրա: Իսկ ընկերվարական մամուլը, չկարողանալով իր դիրքը ճշտել զրդական շարժումների հանդէպ, կամ լռութիւն է պահպանում նրանց մասին և կամ զոհ գնում բուրժուական թիւրքերի «ինքօրմաստիներն»: Այս ամենի հետեւանքով, ընթացող հասարակութեան մէջ այն սպառնութիւնն է կարմած, թէ զրդական շարժումներն ոչ այլ ինչ են, բայց, և թէ աւազակային դործողութիւններ: Ինտերնացիոնալը, որ ճշմարտութեան և արդարութեան շնատաղով է հանդիսանում քաղաքական և ընկերային բոլոր խնդիրներում, չպիտք է թողնուի, որ հանրային կարծիքը, այս մտորութեան մէջ մնալով, աւազակային տրամադրութիւններ վերագրի մի ժողովուրդի, որ այնքա՛ն զոհանաւոր պայքար է մղում իր մարդկային և ազգային իրաւունքներին տիրանալու համար:

Ինտերնացիոնալի միջամտութիւնը զրդական հարցում, և թէ ուրիշ հետեւանքեր չունենայ՝ կունենայ գոնէ այն հետեւանքը, որ բարոյական նեցուկ կը տայ զրդերին: Վերջինիցս այսօր բացարձակապէս լքած են գտնում իրենց ամբողջ նախաբանը, աչքի տալով ունենալով կապիտալիստական կառավարութիւնների անտարբեր և խորհրդային կառավարութեան թշնամական վերաբերմունքը զրդական մարտիկապարտութեան հանդէպ: Իսկ յայտնի է, թէ լքումի զգացմունքը ինչ որ հասական անբարձրագոյն կարող է ունենալ անհասարակ պայքարի մտած մի ժողովուրդի համար: Ինտերնացիոնալը իր հեղինակաւոր ձայնը բարձրացնելով յօդուտ զիւրդ ժողովուրդի սպաստութեան՝ անկասկած կը մեղմացնի յիշեալ լքումի զգացմունքը և կը բարձրացնի զիւրդերի բարոյական կորովը իրենց ազնիւ պայքարի մէջ:

Սրա հետ միասին, անհասական չպիտք է համարել, որ մեր միջամտութիւնը որոշ չափով սանձահարէ թիւրքական վայրագութիւնները Քիւրդիստանում: Եթէ գեամալական կառավարութիւնն այսօր սարսափելի զանախութեամբ աւերում է հարիւրաւոր զրդական դիւրեք և տարագրում կամ կտորում նրանց բնակիչներին — սա պէտք է որոշ չափով բացատրել և այն հանգամանակ, որ նա աջ ու ձախ նայելու: Տարկարանքի տակ չէ գտնուում, որովհետեւ Եւրոպայի և Ամերիկայի հանրային կարծիքը չէ հետաքրքրում զիւրդերի ճակատագրով: Ինտերնացիոնալը խօսքը, իբրև կազմակերպւած միջիոնաւոր աշխատակրութեան կարծիքի արտայայտութիւն՝ անկասկած բարեբար աղեցուցութիւն կունենայ ընդհանուր հանրային կարծիքի վրա՝ դարձնելով նրան թիւրքական բարբարոսութիւնների դէմ: Իսկ երբ սա եղաւ՝ զեմալական կառավարու-

թիւնն այլ ևս այնպէս ազատ չի գրայ իրեն զրդերին ընաջնջլու գործում, ինչպէս գտնու է հիմա: Որովհետեւ նա մէկից աւելի պատճառներ ունի Եւրոպայի և Ամերիկայի հանրային կարծիքը սիրազանչելու: Սրա համար չէ՞, որ նրա գործակալները Եւրոպայի և Ամերիկայի բոլոր կենտրոններում կաշիք դուրս են դալիս համոզելու ամենքին, թէ այսօրուս թիւրքեան այլ ևս վարդա՛ն թիւրքեան չէ, թէ նա, շնորհիւ իր զւրիշ տեղացող զեկերտալային ընթրոնների, արդէ՛ն բարեմորդու է և, արդիացել, «արեւմտացի» են են...

Սրանք են, ընկերներ, այն բացատրութիւնները, որ ես կարող էի տալ ընկ. Իր Իրիւքիի հարցումներին և դիտողութիւններին: Ըստ ամենայնի խոնարհելով հանդերձ մեր նախառահէի ամենքիս կողմից ճանաչուած հեղինակութեան աւել, ես պէտք է ասեմ, որ նրա տարակրութիւնները շնախտեցին իմ մէջ այն համոզումը, որ մեր Ինտերնացիոնալը թեքացած կը լինի իբր պարտականութիւնների մէջ, և թէ իր աղուտ խօսքը չառէ յօդուտ զիւրդ ժողովուրդի և ընդդէմ նրա վերաբերմամբ գործադրուող բարբարոսութիւնների: (Հաւանութեան բացազանչութիւններ):

ՎԻՃԱԲԱՐՈՒԹԻՒՆ

Նայազազ Իր ԲԻՐԻԻԵՐԻ. Ընկերներ, դուք լսեցինք ընկ. Ա. Ջամալեանի պատասխանը իմ դիտողութիւններին և այժմ կարող ենք անցնել վիճարանութեան: Մինչ այդ պէտք է ասեմ, որ ընկ. Ա. Ջամալեանն քստ երևոյթիս ինձ լաւ չէ հասկացել: Նրա պատասխանի բովանդակութիւնը և, մանաւանդ, տոնից այնպէս է դուրս գալիս, թէ իբր ես հակասակ եմ, որ մենք պաշտպան հանդիսանանք զիւրդ ժողովուրդին կամ բողոքներ նրան հարածողների դէմ: Մինչդեռ իմ նպատակս էր միայն Գործադիր Կոմիտէի ուշադրութիւնը հրահրել այն դժարութիւնների վրա, որոնք ներկայանում են մեզ զրդական հարցի զննութեան ժամանակ: Դաովով իմ անձնական վերաբերմունքին այս խնդրով՝ կը ցանկանայի, որ ամենքն էլ անուանան իմ շափով բաղձային զիւրդ ժողովուրդի պատուութիւնն ու երջանկութիւնը և նողկանք գրային նրան տանջողների դէմ:

Ոսքը պատկանում է ընկ. Իրօքէլէյին: ԲԻՐՈՒՎԷՅ. (Անգլիա) — Քրդական շարքը, որ այսօր դուրս է մեր առաջ, և նրա մասին եղած զեկուցումները մի անգամ ևս ցուցահանում են մեր Ինտերնացիոնալի թիւրքացումը արեւելեան ժողովուրդների շարժումները ուշադրութեան արեւելու գործում: Չանագան առիթներով և մի քանի անգամ թանանջել եմ այս թեքացումը: Մասնաւոր եմ նաև թէ, այս տեսակետից, որքան նպատուար դիրքի մէջ է, մեր համեմատութեամբ, Եւրոպի Ինտերնացիոնալը: Ես էլ, շատերիդ պէս, այն կարծիքի եմ, որ Եւրոպի Ինտերնացիոնալը, զբաղւելով իմպերիալիստական լուծելի տակ գտնուող մանր ժողովուրդների վիճակով, միշտ նրանց շահերով է անաջնորդում: Բայց և այնպէս նա մեծ հմայք է վայելում այդ ժողովուրդների մէջ, հէնց թէ կուզ այն պատճառով, որ այսպէս թէ այնպէս արձագանգ է տալիս նրանց շարժումներին:

Մենք, ի հարկէ, չենք կարող քաղաքական կամ տակտիկական հաշիւների ստարկայ զարձնել մանր ժողովուրդների ճակատագրի, ինչպէս այդ անում է Եւրոպի Ինտերնացիոնալը: Բայց ասուակցն նրա շափով պէտք է զբաղւելք այս ժողովուրդների վիճակով, որպէզպի արդարացնենք այն նպատակները, որ մեզ առաջադրել ենք իբրև պատուութեան և մարդկայնութեան ուճվիրաներ:

Դաովով մասնատրապէս զրդական հարցին, ես կարծում եմ, որ մեր միջամտութիւնը այս գործում աւելի՛ հիմնաւորում և աւելի՛ գործօն կը լինի, եթէ մի յանձ-

նախուժք կազմենք՝ պաշտօն տարով նրան դնալ Քիւր-
դիստանի ու տեղը ուսումնասիրել զբողական
չարժման պայմանները: Մրանով ևս չեմ ուզում որեւէ
սուեր ձգել այն արժէքաւոր տեղեկութիւնների վրա,
որ տալիս են մեզ մեր հայ ընկերները: Բայց մեր
միջամտութեան սպաւարութիւնն ու արդիւնքը բոլորու-
մին այլ կը լինի, եթէ մենք կրթիւնը յատուկ զննու-
թեամբ և սեղն ու տեղը ձեռք բերած տեղեկութիւն-
ներին:

Ես առաջարկում եմ, ուրեմն, որ մենք զննել յան-
ձնախուժք ուղարկենք զբղերի մօտ: Մինչ այդ դէմ
չեմ, ի հարկի, որ մենք բողոքի ձայն բարձրացնենք
նրանց վրա գործադրող քոնուսիւնների դէմ:

ԱՐԱՐԱՄՈՎԻՉ (Ռուսաստան ս. դ.) — Գննել յան-
ձնախուժքի առաջարկը, որ անուճ է ընկ. Բրոքվէյը, ես
անկարծնական եմ գտնում, որովհետեւ թիւրք կառա-
վարութիւնը Երրեք չի համաձայնի, որ մեր ներկայա-
ցուցիչները տկանջալուր կամ տկանառու դառնան
Քիւրդիստանում կառարուող քոնուսիւններին, որոնց
իրականութիւնը կապակածից դուրս է ինձ համար: Ան-
գամ այն դէպքերում, երբ զննել յանձնախմբերը կեան-
քի են կոչում դաշնագրերով կամ միջազգային պար-
տաւորութեանը, նրանք չեն կարողանում լիովին կա-
տարել իրենց միտքին, որովհետեւ քոնուսիւնն ենթակայ
կառավարութիւնը, միշտ բազմապիսի դժարութիւն-
ներ է յարուցանում նրանց առաջ. ուր մնաց ներկայ
ղեկուճ, երբ զննել յանձնախմբի աշխատանքներն ամ-
բողջովին թիւրք կառավարութեան բարեհաջողու-
թիւնից պէտք է կախած լինի:

Սակայն, ես զննել յանձնախմբի անհրաժեշտու-
թիւնն էլ չեմ տեսնում: Մի քանի շարք Քիւրդիստա-
նում պատերազմ է մի քանի տասնեակ մարդկանց հետ
թարգմանի միջոցով՝ իրօսելով՝ մեր զննել յանձնա-
խումբն աւելի արժէքաւոր տեղեկութիւններ չպիտի
րերէ, քան այն, որ տալիս է մեզ Հ. Յ. Գաշնակցու-
թիւնը: Սօտ քառասուն տարի գործելով թիւրքական և
քրդական միջավայրիւրում, մեր հայ ընկերներն աւելի
իրազեկ են թիւրքերի ու քրդերի բարբերին, արամա-
զրուութիւններին և փոխարբերութիւններին, քան որ
և է մէկ ուրիշը: Դրա համար էլ ես նրանց տւած տեղե-
կութիւնները միանգամայն բաւարար եմ նկատում
քրդական հարցում մեր խօսքի աւելու համար:

Բնականաբար, ինչ վերաբերում է Քիւրդիստանի
անկախութեանը, մենք այդ խօսքը չենք կարող աւել
տոյն յատուկութեանը, ինչպէս որ ասել ենք, օրինակի
համար, Հայաստանի անկախութեան նկատմամբ, ու-
րովհետեւ մի կողմից մեզ անյայտ է ջրերը աշխատա-
ւորութեան կողմն այն հարցում և, միւս կողմից, չը-
դիտենք, թէ թիւրքական Քիւրդիստանի անկախու-
թիւնը ինչ անդադարձում կունենայ հարեան պետու-
թիւնների փոխարարութեանց վրա: Բայց որ ջրերը
ժողովուրդի ազգային-ազատագրական պայքարը հա-
մակերկի է մեկ համար և որ թիւրք կառավարութեան
կողմից նրա վէճ գործադրող վարչապետութիւնները ցա-
սում են պատճառում մեզ՝ այդ մենք կարող ենք ասել
և պարտուր ենք ասել:

ՌԸՆՈՒՅԵԼ (Ֆրանսա) — Ընդհանուր դժերով ևս
համարիտ եմ ընկ. Արքամովիչին և, դրա համար էլ,
աւելորդ եմ համարում հիմնաւորել, թէ ինչու հարկ
չկայ զննել յանձնախուժք ուղարկելու Քիւրդիստան,
կամ ինչու պէտք է մենք դրական վերաբերմունք ու-
նենանք դէպի քրդական շարժումները, որոնց ազգային
ազատագրական բնոյթը կատարածից դուրս է: Աւելորդ
եմ համարում նաև որակիլ թիւրքական խճճութիւն-
ները Քիւրդիստանում, որոնք այն են ապագուցանում
միայն, որ հանրապետական ընտիմի տակ էլ թիւրքիան
հին, բուլղարական և հայկական կոտորածների ժամա-
նակայ թիւրքիան է մնացել:

Բայց ես չեմ կարող լուսեթեամբ անցնել ընկ. Իլ
Բրիւքերի մի արտայայտութեան վրայից, որ վերաբե-
րում է Ազգերի Դաշնակցութեան: Նրա ասելով, մենք
չենք կարող Ազգերի Դաշնակցութեան միջամտութիւնը
հրաւիրել զբողական հարցում, որովհետեւ նախ՝
չկայ մի պետութիւն, որի վրա կարողանայինք պար-
տաւորութիւն դնել քրդական հարցը ժլնկի սեղանի
վրա դնելու և ապա՝ եթէ աշխարհի մի պետութիւն
ճարենք էլ Ազգերի Դաշնակցութիւնը չպիտի կարողա-
նայ իր որոշումը պարտադրել թիւրքիային, քանի որ
վերջինս նրա կայմից դուրս է գտնուում:

Ուրեմն ի՞նչ է ստացում. այն որ մօտ յետուն պե-
տութիւններ ներկայացնող մի հաստատութիւն, որ
բազմապիսի յօլաւածներ ու որոշումներ ունի ճնշւած
ազգերի պաշտպանութեան մասին, անցոր է հանդիսու-
նում ստիպելու իր կայմից դուրս գտնուող մի պետու-
թեան, որ սրածութեան չենթարկի իր իշխանութեան
տակ ընկած մի փոքրիկ ժողովուրդ:

ԴԸ ԲՐԻՒՒՔԵՐ — Դժբախտաբար, այդ է իրակա-
նութիւնը:

ՌԸՆՈՒՅԵԼ — Չեմ ժխտում իրականութիւնը, բայց
և չեմ կարող հաշուել նրա հետ: Ուստի և առաջարկում
եմ, որ Ազգերի Դաշնակցութեան ծրարի փոփոխու-
թեան համար նշանակւած մեր Յանձնաժողովը, իր աշ-
խատանքի ընթացքին նկատի առնի և այս ողբալի կա-
ցութիւնը, որ վարկաբեկում է Ազգերի Դաշնակցու-
թիւնը յաշ թողր մտածող և կազմող մարդկանց:

Սօսողների ցանկն սպասած լինելով՝ նախագահը
բեէի է դնում Բրոքվէյի առաջարկը՝ Քիւրդիստան զննել
յանձնախումբ ուղարկելու մասին: Առաջարկը չէ ան-
ցնում: Նրան ձայն են տալիս միայն Բրոքվէյ և Ջա-
մալեան:

Դրանից յետոյ, նախագահը, առնելով ժողովա-
կանների համաձայնութիւնը, յանձնարարում է բանա-
ձեերի յանձնախմբին, որ երկու յեան նիստին բանաձե-
ւի մի նախազեմ ներկայացնի քրդական հարցի մասին՝
նկատի առնելով եղած զեկուցումներն ու վիճարանու-
թիւնները: Երեկոյեան նիստին, յանձնախմբի նախա-
գահ Ստո Քաուելը կարգում է քրդական հարցի բա-
նաձեւը, որ սպաղարկւած է «Իրօզալ»-ի սեպտեմբեր ամ-
սւայ համարի մէջ:

Բանաձեւն ընդունւում է միաձայնութեամբ:

Թ Ի Ի Ր Ք Ի Ո Յ Շ ՈՒ Ր Ջ

Մէնէմէնի դէպքը նոր առիթ մը եղաւ Մ. Բեմալի ձեռքը, իր պարզանքը քրքրելու և աւելի արմատական ծրագիրներ մէջտեղ հանելու համար:

Իր ամբողջ յոյճը դրած՝ նոր կարգերու և նոր ուժերու վրա, Թիւրքիոյ «Ազատարար» միկնոյն ատեն հրամայեց լուծել Աղբ. Մեծ Ժողովը, և Թրքական Օջախները լուծել իր հիմնած կազմակերպութեան՝ «Ուալք»ի մէջ:

Այս երկու կարգադրութիւնները սերտ կապ ունին իրարու հետ, և կապացուցանեն տեսակ մը մտավախութիւն, հակառակ միահնձան տիրապետութեան:

Պահտած էր Բեմալ-Լամէթ իշխանապետութեան վստահութիւնը՝ Աղբ. Ժողովին վրա: Իրականին մէջ «Ուալք»ի թեկնածուներն էին բոլորն ալ: Հլու կամակատարներ: Բայց երբ, անցեալ օգոստոսին, Ֆէթհի պէյ ասպարէզ հրաւիրեցաւ և կազմեց «Ազատ Հանրապետութիւն» կուսակցութիւնը, այդ հաւատարիմներէն 66 հոգի միացան իրեն: Դասալիքներուն զլուխը կը գտնուէր Աղասուր Ահմէտ, — Բազուի հռչակաւոր Աղայեւը, որ զեմալական սահմանադրութեան հիմնադիրներէն մէկն է և երկար ատեն վարած՝ ինկիլիբի պաշտօնաթերթը: ԹՔԻՈ ճամբարներու և Թուրանական: Պակաս չէին ուրիշ կարեւոր դէմքեր ալ:

Այնպէս որ, Մ. Բեմալ զզկաց Ֆէթհի պէյը հրաւիրելուն համար: Աւելի ճիշտ, հասաւ իր նպատակին: Չուշտ մը սարքելով, մէկ «Ուալք»ին, մէկ ընդդիմադիրներուն ժպտելով, կրցաւ երևան հանել տիրող տրամադրութիւնները, և անոր համեմատ վերաքննել դիրքերը: Ֆէթհին ձգեց կէս ճամբան, Մէհմէտին անակնկալը խեղդեց արեան մէջ, և ամէն յոյս կտրելով հիներէն, ահաւասիկ նոր փորձ մը կը կատարէ երիտասարդներով Թարաքներու, ամբացներու ճակատը:

Այս վերազնահատման երկու դիվանոր հետեւանքներն են Աղբային Մեծ Ժողովին լուծումը և Թրքական Օջախներու ձևափոխումը՝ միացումը Ուալքին:

Բեմալապետութեան հաստատումէն ի վեր, ոչ մէկ Աղբ. Ժողով ընարւած է ազատ զէպարութեամբ: Իշխանապետութիւնը ինքն է որ, Ուալքի անուանին տակ ծածկւած, կը սարքէ ընտրութիւնները, կանոններ թեկնածուները և սուան կուտայ Ժողովին: Մինչև այսօր երևոյթները կը պահէին քիչ-չատ: Այս անգամ Մ. Բեմալ շիտկէ-շիտակ ինքն է որ կը շնչանակ թեկնածուները: Անուններ, ցանկեր, հանգամանքներ կը ճըլտուին իր ճիշտողութեամբ: Հրամայած է որ երիտասարդներ ընտրուին, փնտրականներ և պաշտօնականը չընտրուին, նոր երեսփոխաններուն 150ը բանւորներ և հողապործներ ըլլան, և այլն: «Ոչ ոք երեսփոխան պիտի ըլլայ, պարզապէս իրբեւ վարձատրութիւն անցեալին մէջ մատուցած ծառայութեանց»: Նոյն իսկ հաստատուած է տեսակ մը հաւատարմութիւն, որուն համաձայն նախապէս պիտի ճշտուին թեկնածուներուն դասանանքն ու դադարաւորները: Իշխանապետը իր վերջին

ճամբորդութեան դասերն ալ աչքի առջև ունեցած է, այս կարգադրութիւնները հրամայած ատեն: Պարզ է որ Անասուրի թիւրք պաշտօնէութիւնը չէ իւրացուցած և չի կրնար մարսել կայծակի արագութեամբ հաստատուած նորութիւնները, և հետեւաբար միշտ ալ տրամադիր է մտրելու: Ուստի, պէտք է երիտասարդացնել օրէնսդրական և վարչական կազմը:

Այս առաջարկութեամբ, մէկզէք պիտի դուրս Սէրպէթի կուսակցութեան յարած երեսփոխանները, ինչպէս և Ուալքի այն երեսփոխանները, որոնք ուղղափառ չեն: Հարիւրը կանցնի այս կարգի անբաղձալիներուն թիւը: Իսկ երիտասարդացման տեսակէտով, կը հաւաստեն թէ նոր Ժողովին հարիւրին 30ը պիտի կազմեն երիտասարդները: (Երեսփոխաններու թիւն ալ պիտի աւելնայ — դառնալով 316 կամ 330, փոխան 286ի):

Երիտասարդացումը՝ սեւեռալ նպատակ մը դարձած է զեմալապետութեան համար: Իր ճամբորդութեան ընթացքին, Մ. Բեմալ կը յայտարարէր, Գոնիայի մէջ.

— «Մենք կուզենք որ 18 տարեկան և անկէ վեր բոլոր ընտրողները անդամ արձանագրուին Ուալքին: Իսկ 18 տարեկանէն վար եղածները պէտք է համարենք իբրև կուսակցութեան ապազայ անդամներ և անոր համեմատ կրթենք»:

Այս մտահոգութեամբ ալ՝ ահաւասիկ միւս ձեռնարկը, — Թրքական Օջախներու միացումը Ուալքի: Տեսակ մը Փաշիմ, որ կրնայ հետզհետէ դարգանալ և դունալ թրքական պատճենը Իտալիոյ սեւ շապիկաւորներու կազմակերպութեան: Անասուրի դործակալութիւնը այսպէս կը բանաձևէ նոր որոշման էութիւնը. — Կուսակցութիւնը (Ուալքը) կուզէ բոլորովին իրեն կցել թրքական օջախները, նախ այն պատճառով որ որոշած է շատ մօտէն հետաքրքրիլ երիտասարդութեամբ, առաջնորդ հանդիսանալ անոր մտաւոր և քաղաքական դաստիարակութեան: Եւ երկրորդ, թրքական օջախները, իբրև մշակոյթի կեդրոն, ճիշտ կուսակցութեան սկզբունքներն ունին: Ակնբեր է, որ ակնթի լաւ արդիւնք պիտի ստանանք, եթէ երիտասարդութիւնը մէկ ձեռքով առաջնորդէ: Միացման որոշումէն յետոյ, ամէն տեղ ալ, կուսակցութեան շէնքերուն կից, օջախ մը պիտի դասուի երիտասարդութեան համար: Այս օջախներուն մէջ ոչ մէկ բան պիտի ինայլի, երիտասարդութեան ազգային, քաղաքական և Ֆիդիքական կրթութեան համար:

Ինչպէս կը տեսնէք, աչքի առջև ունին ազատ մէկ ուրազիծը իտալական խուրճերու (Փաշիմ): Կուրեն միկնոյն ձեռքին, միկնոյն դեկալարութեան տակ պահել երիտասարդական ցանցը, և մէկ յայտարարի վերածել բոլոր ճիւղերն ու ձգտումները:

Այս մասին աւելի որոշ կը խօսի նոյն ինքն Մուստաֆա Բեմալ.

— Ժողովուրդներու պատմութեամ մէջ շրջաններ

կան, երբ որոշ նպատակներու հասնելու համար, անհրաժեշտ է համախմբել բոլոր բարոյական և նիւթական սեփերը և զանազան ուղղութեան վէշ դնել: Արտաբնի և ներքին վտանգներու դէմ, երկրին և յեղափոխութեան փրկութեան համար, անհրաժեշտ է համախմբել ազգայնական և հանրապետական բոլոր սեփերը:

Հետևարար յարմար դատեցի որ Թիւրք Օջախները, որոնք իրենց հիմնադրութեան թւականն սկսեալ հաւատարմօրէն ու հաւատով աշխատեցան ազգայնական և առնկալարական մարզին վէշ, և որոնք այս քառասուն վէշ գտնացուցիչ արդիւնքներ տւին, շարունակեցին իրենց աշխատանքները բառիկ կատարելալ իմաստով, մէկ մարմին կազմելով իմ կուսակցութեան հետ, որ պիտի իրականացնէ նոյն սկզբունքները գործնական և քաղաքական ասպարեզին վէշ:

Տրւած ազգանշանին վրա, մամուլը սկսած է երգել նոր եղանակը — միացման, ձուլման անհրաժեշտութիւնը և արթնքը: Կիսապատմական «Ճիւղհիւրի լէշ» պատասխանելով անոնց, որ կատարեցին թէ թրքական Օջախները մակոյթի վառարաններ են և ոչ թէ քաղաքական ազգակներ, ընդհակառակն կը շեշտէ անոնց ազգային-քաղաքական նախամտերը: Անոնք սահմանած էին, կրտէ՛, ազգային զգացումները արթնցնելու, թրքական նայեցնիքին գաղափարը տարածելու, և նիւս կը հրաւիրէին գործօն կանգնել, ինչպէ՛ որոշին տակ շարունակելու համար իրենց նայեցնասիրական գործունէութիւնը: Երկար վիճակին մէջ, սահմանափակ է անոնց գործունէութիւնը. մինչդեռ ինչպէ՛ն միանալով, լայն ասպարէզ պիտի ունենան գործելու: Եւ իրենց անդամները պիտի դառնան ինչպէ՛ն բնական անդամները:

Այս արդէ՛ն կը նշանակէ որ ինչպէ՛, Մ. Քեմալի ստեղծագործութիւնն և յենարանը, պիտի եռապատուի, պիտի քառապատուի, քանի որ թրքական Օջախները ունին համագումար 300,000 անդամ: Ունին, նաև, մեծագումար հարստութիւն: Գեռ անցեալ տարի շինեցաւ Էնկիլթի կէդրօնը, աւելի քան մէկ միլիոն ոսկի ծախքով, առանց հաշուելու ներքին դարձարանքը: Օջախներու թիւն է 280: Կեդրոնական վարչութեան նմտացոյցը կը հասնի կէս միլիոն ոսկիի, իսկ տեղական մասնաճիւղերունը 27-45,000 ոսկիի: Պատկանելի գրամագլուխ մը մարդկային և նիւթական ուժի, որ պիտի անցնի Թիւրքիոյ տէր և տիրական կուսակցութեան ձեռքը: Ուրիշ խօսքով, Քեմալ-Լամէթ-Յէվլիլի եռապատութեան թափին տակ:

Այս կարգադրութեամբ, անշուշտ ինքնին պիտի թափին այն տարրերը, որոնք ասպարէզ ունէին Թրքական Օջախներու մէջ, իրրև մշակոյթի տարրեր, բայց կերեբան քաղաքական նախադէպ:

Հատուտա՛մ՛ քան տարի առաջ, թրքական Օջախները հրապարակ իջան համաթրքական, Թուրանական միտումներով: Արտաքին բանաձևն էր՝ անմեղունակ նշանախօսք մը — պաշտպանել թրքական մշակոյթը, ոյթ առլ բուն թիւրք լեզուի, որուն վրա կը տիրապետեն արաբերէնն ու պարսկերէնը, սակահոյճի ազգին տղեկան-մտաւոր միութիւնը: Այս առաձգական բացարձկութիւնները թոյլ կուտան գործելու սահմանէն

անդին, մինչև Կովկաս և Թուրքեստան, ուր արդէ՛ն ցանաձ էին առաջին սպմերը համաթրքական վարչապետութեան: Համաուլլահ Սուպհիները (նախագահ թրքական Օջախները) իրուր կուրանային օտարներու առջև՝ թէ Օջախները քաղաքական ձգտումներ չունին, թէ ոչ իտալական «Ճաշօսններուն կը նմանին, ոչ «Տանթէ Ալիկիլթիքներուն, ոչ ալ գերմանական «Մաշխապանէրներուն: Մրազիբը բաւական թափանցիկ էր, իսկ իրական գործունէութիւնը՝ սոսանելի և շօշափելի: Տակաւին շինք յիւեր քաղաքական ղէպեբու տտեն Օջախներուն կատարած դրդաբիշ, օտարացտաց և համաթրքական դերը:

Երկու տարի առաջ, և հասնաբար օտար ճնշումի մը վրա, փոփոխութիւն մը կատարեցաւ հիմնական ծրագրին մէջ և յայտարարեցաւ թէ Օջախներու գործունէութիւնը կամփոփի միայն Թիւրքիոյ սահմաններուն մէջ: Պէտք է խոստովանել որ գործունէութեան նախկին գիւրութիւններն ալ պակասած էին, իրրև հետևանք սահմանէն՝ անդին կատարած յեղաշրջումներու:

Այսպէս կամ այնպէս, Օջախները ասպարէզ իջան իրրև քաղաքական ազդակ, շարունակեցին գործել իրմակի տակ, նախ ի թիւրքական և յետոյ քեմալապետութեան առաջնորդութեամբ և անոնց անմիջական ներշնչումով, և անցեան ու բազմացան: Եւ որովհետև քաղաքական ամէն դաւանանք անձեր կան իր անդամներուն մէջ, Մ. Քեմալ կուզէ բոլորը ձուլել մէկ հնոցի, կաղապարի մէջ, և դարձնել միապետաձ յենարան մը:

Կոթնած՝ յաղթական և կուշտ բանակի մը և այս կազմակերպւած երիտասարդութեան, «Կազիթ» կը յուսայ ամբացնել իր նաճումները և ասպահովութեան տոկուն գօտի մը հաստատել ներքին, բուն թրքական խլրտումներու դէմ:

Մեթոտիկ աշխատանք մը, որ միևնոյն տտեն իրագիտական դաս մըն է մեզի համար:

* * *

Թիւրքիոյ մասին նոր հրատարակութիւններ անպակաս են եւրոպական հրապարակին վրա: Մե՛ծ մասով՝ փաստաբանական ուղղութեամբ: Եթէ յատկապէս ապրտարած գիրքեր չեն, գոնէ կը ձգտեն ասպարանքներ ասպահովել:

Վերջերս Գերմանիոյ մէջ հրատարակեցաւ, և անմիջապէս Փրանսերէնի թարգմանեցաւ Տակուպի Սոսիալիստիկ Միւթընի ներդրականը — «Կազի Մուսթաֆա Քեմալ», որ մաս կը կազմէ ժամանակակից Մե՛ծ Դիմքեր»-ու շարքին: Արիթ կուենանք առանձին դրաղելու այս գրքով:

«Ա Ռըվիլ տը Փառի», ծանօթ արևապետական և ակադեմական կիսաման, իր սպրիլ 1-ի համարին մէջ հրատարակեց ուսումնասիրութիւն մը Թիւրքիոյ փոքրամասնութեանց մասին: Գաւառը իր կը շարագրութիւն, որ շահեկան տեղեկութիւններու և վերլուծումներու կարգին, կը պարունակէ շատ մըն ալ յիմարապատու եղբակացութիւններ:

Հեղինակը, Լիւսիեն տը Վիլեք, որ ճամբորդած կերեկի, բարեկամ է Թիւրքիոյ, մինչև անպամ հիացող

մը Մ. Քեմալի եւ միւս վարիչներուն: Բայց, անշուշտ նկատի առնելով Յրանսայի դրամատիրական շրջանակներուն շահերը, կորսյալ զեմալագետութեան ծախարանդ արգայնականութեան հետեանքներուն վրա: Կը տրտընշայ որ ասպարեզը խտտորէն փակած է ոչ-Թիւրքերու (ըսել կուզէ՞ ոչ-խոյսմ) առջև, օտար ընկերութիւններն անզով հարկադրած են գրուել ծոնել եւ պատասխանատու պաշտօններ յանձնել Թիւրքերու, որոնք ոչ միայն գործէ չեն հասկնար, այլ եւ գործ կը խանգարեն: Եւ իբրև հետեանք, շատեր կը փակեն զբասնեակները ու կը հեռանան: Թիւրքը ոչ միայն անիրօժ է, այլ եւ անընդունակ՝ աշխատելու: Կարծէ յիշել քանի մը օրինակներ:—

Էտերնէի մէջ, Հեղինակը կը հարցնէ խիտ կարեւոր ազարակի մը սեփականատիրոջ — Ինչո՞ւ վերստին չէք բանեցնել ազարակը:— Բանւոր չկայ: Ժամանակին Յոյներ, Ռուսեր եւ Հայեր կը գործածէի:— Իսկ Թիւրքերը: — Թիւրքերը աշխատիլ չեն գիտեր:

Նոյն պատմութիւնը Զօնկուտաքի հանքերու շահագործման մասին: Այս հանքերը վարձած էր Յրանսացի մը: Պատերազմին՝ Թիւրքերը զնեցին Յրանսացին: Զինազաղարին մարդը վերստացաւ իրաւունքները, բայց գեանուղիները փրած եւ ողորտած էին, անխնամ գործածութեան հետեանքով: «Այս մարդիկը բան չեն հասկնար», կը տնտջար Յրանսացին: Հանքերը գնեցէ, կարգի դնեցէ եւ մեքենաները նորոգելէ յետոյ, մարդը նորէն վտարեցաւ զեմալականներուն կողմէ: Յետոյ դատի դիմաց եւ շահեցաւ, բայց վճիռը չըզործադրուեցաւ, Յրանսացին չվերստացաւ իր ստացւածքը եւ Թիւրքերուն պատճառած վնասները երթալով աւելցան:

Շահնքան են Պ. տը Վիսէի տեղեկութիւնները՝ երկրին մէջ տիրող աւերածութեան եւ ամաշուրթեան մասին, թէև մասնաւոր նորութիւն մը չեն պարունակեր մեկի համար: Տարտանէլէն իսկ աչք կը դարնէ աւերն ու ամաշուրթիւնը:

— Ճնոյնքան յուզիչ է Իդմիրի առթած տպաւորութիւնը: Ո՞րքան դեղեցիկ եւ հրապուրիչ կերեւայ հեռուէն, հրանալի ծոցին խորէն: Բայց մեր հողին կը ճմլւի, երբ կը մօտիկանք եւ անվերջանալի քարափին երկայնքը կը տեսնենք խարխուլ պատերը իր մարմարայ պայտսներուն, 40.000 աւերած տուններուն, մնացորդները 1922ին Թիւրքերու վտած կրակին: Ետգեկաուրի ճամբով ալ, պատկերը նոյնքան յուսախաբութիւն կը պատճառէ: Պալքաններուն մէջ, մէկ ծայրէն միւսը, աչքի առջև ունեցանք բեղմնաւորութիւն. իսկ թրքական սահմանէն յետոյ՝ միայն անմշակ հողեր: Եւ անդադար անմշակ հողեր կը տեսնենք նաև: Անստուգի դաշտերուն մէջ, Պոլսոյ եւ էնկիւրբի միջև, չղգեկազոյով 15 ժամ ճամբայ: Թրակիոյ մէջ, Փոքր Ասիոյ ափերուն վրա, զիւզերը չեն վերստացած իրենց երբեմնի ոգեւորութիւնը: Աւետուրը կանգ առած է: Յուսատանէն փոխադրած Թիւրքերը չեն կրցած լեցնել Յոյներուն ձգած պարապօթիւնը, ըլլալով միայն 400.000 հոգի, փոխանակած մէկ միլիոնին դիմաց, առանց հաշուելու անոնք որ դալթած էին փոխանակութենէն առաջ: Գրուան ժամանակին խոզակի խիտ ծաղկեալ հրապարակ մըն էր եւ Փրանսական կեդրոն

մը մտտաքի մանարաններու: Փախելէ առաջ, Յոյները կրակի տաւ են իրենց քնակած թաղը, որ կը մնայ միւս աւերակ: Մետաքի վաճառականութիւնը ծիւրի: Նախապատերազմեան շրջանի գործերուն հացիւ մէկ քառորդը ունի այսօր: Յրանսացիները կը ծախեն իրենց մանարանները: Սամսոն, Տրապիզոն, Կիրասոն, Սեւ Մովսէս բոլոր նուահանգիստները, որոնք այնքան բարգաւաճ էին ժամանակին, ենթարկուած են միևնոյն ծիրումին ինչպէս Պոլսոյ: Էրզրումի մէջ, ուր հայիական հարուստ քնակչութիւն մը կայադէր եւ որ թատր հանդիսացաւ առեւելի ջարդերու, քրիստոնեայ թաղերը կը ներկայացնեն փլատակներու կոյտ մը, եւ դեռ ո՞րքան դիւզեր ու քաղաքներ Անստուգի մէջ: Մեր ազատարարը գաւառներուն մէջ գրեթէ բոլոր վայրերը վերաչինւած են եւ պատերազմի ո՞րեւէ հետք չեն ցուցներ այլ ևս: Թիւրքերոյ մէջ, կենդանի կը մնայ պատերազմին պատկերը:

«Առվորարք մեծ քաղաքներու շուրջը կը գտնուին ժրջան եւ արդաւանդ արուարձաններ: Բայց ի՞նչ չոր ու ցամաք տեսարան Վոսիւրի ափերուն վրա: «Ա՛հ, եթէ այս հողերը Թոսթանիի զիւլպցիներուն ձեռքը ըլլային, ի՞նչ շուտ կերպարանափոխ պիտի ըլլային», կըսէր Փաշխտ Իսալայի մը»:

Հեղինակը նոյնքան մտալ կը նկարագրէ նաև հողագործութեան վիճակը: Մինչև Մեծ Պատերազմը, 40% մշակելի հողին վրա 13% միայն կը մշակէր, իսկ հիմա շատ աւելի պակաս է: Զեռեր պակաս, գործիքի պակաս, տգիտութիւն ևս: Իսկ ամբողջ երկրի մէջ՝ վտահուիթեան պակաս եւ դրամագլխի չզոյրութիւն:

Ուսումնասիրութեան սկիզբէն մինչև վերջին տողը, ակներև կը տեսնենք մէկ մտահոգութիւն, — ուշադրութիւն հրահերի Թիւրքերոյ՝ իբրև անսպաս շահաստան մը, շոյիլ, ողորել զեմալականները, որպէսզի թուլցնեն օղակները: Պ. տը Վիսէ կը կարծէ թէ Թիւրքիա իրապէս փափաք ունի Ազգերու Ինչնակցութեան մէջ մտնելու, որպէսզի ոչ միայն քաղաքական, այլ եւ դրամական աշխկոյթիւն գտնէ:

Բայց, պիտի հարցնէք, ի՞նչ գործ ունին փոքրամասնութիւնները այս ուսումնասիրութեան մէջ, որ անոնց անունով խորադրած է:

Ահա թէ ի՞նչ — Յրանսացի ճամբորդը կուզէ որ Թիւրքիա օգտուի փոքրամասնութիւններէն, որպէսզի երկիրը չէննայ, մինչև որ իրենք Թիւրքերը հասունանան եւ փորձառութիւն ստանան: Եւ իբրև թէ քարեխօտելով, ահա թէ ի՞նչ այլանշակ, բուն բառով՝ նահան Թեյադրութեան մը կը յանգ յօղածօր:

— «Բայց պտւէ Է ըսիլ որ Յայնիքը, Հայերը եւ Հրեաները (այս վերջինները՝ 46.000 հագի Պալսոյ մէջ), առանց խօսելու միւս լեզվամտներուն վրա, հաւատարմութեամբ բաւարար պայցոյցներ տւած չին, քաղաքացիութեամբ իրաւունքին արժանամալու համար: Դա՞տ է պահապիլ Յայնիքն եւ Հրեանիքն՝ որ մտանս իրենց ճննդալայրը, Հայերէն՝ որ յաւետ լինն այնքան փայլաշաւած յայր ինքնօրէն պետութիւն մը կազմելու, վերջապէս Թիւրքերէն՝ որ իրենց սրտէն սրբն նախկին սյերը եւ հայրենակիցներ դարձնել իրենց երկկամ քնամիները: Անշուշտ, աւելի ցանկալի

լուծում մը չէր կրնար ըլլալ: Բայց, որպէսզի անոնք իրարու երկարին, մա՛նուանոյ փոքրամասնութիւններուն կողմէ անհրաժեշտ է բարի կաւեցողութեան հիգ մը: Զիրենք ազգին մնացեալ մասէն կզգիացնող ազգաբազան տարբերութիւնները կրնան անհետանալ միայն ա՛յն առեմ երբ Հրեաները, Յոյները, Հայերը ընդունին յեզակ միութիւնը, քրֆական դպրոց զրկեն իրենց տղաքները, զնշեն անկախ և յարակից հասարակութեանց դրութիւնը, իրենց յարունարանը կամ պատրիարքարանը ունենալով միայն զուտ հոգեւոր իշխանութիւն մը, և վերջապէս, եթէ յարմարին խառն ամուսնութեանց, քրոնք կարելի են հիմա, շնորհիւ կրօնական բարեմորզման: Մնաց որ, քիւրք ցեղը միշտ

շահած է ուրիշներու խառնելով» (էջ 684):
 Եւ դեռ ուրիշ մտթ, երկզմի ահարկ մը Հանդէպ Հայերուն, որոնց մասին միշտ նախապաշարած է հեղինակը: Յոյս յայտնելով թէ, շնորհիւ թիւրքահէլլէն համաձայնութեան, Յոյները ի վերջոյ պիտի կրնան բարուքը իրենց յարաբերութիւնները թիւրքերոյ հետ, Գ. տը Վիսէք Հայոց կուտայ.
 — «Ողիակահասակն, շատ դժար է մախտանել քէ ապագային ի՛նչ պիտի ըլլայ Հայերուն դիրքը: Ա՛նոնք անշուշտ չեն մտցած գոչքերու գրաւումը, որոնց գոհ եղան անանց որեւէ հաւուսցում ստանալու»: Ի՛նչքան բարեւերս են մ՛եր «քաղաքակրթ» բարեկամները...

Յ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ո Ւ Մ

Ա Ք Ս Ո Ր Ա Կ Ա Ն Ն Ե Ր Ը

Հայաստանից մեզ հաղորդում են հետևեալ միանգամայն ստոյգ տեղեկութիւնները հայ ախարակաճեւրի մասին.—

«Վերջին հինգ տարւայ ընթացքում Հայաստանից դէպի Սիբիր և Հրեասային Ռուսաստանի տունդրաները աքորւածներ թիւը հասնում է հինգ հազարի: Այդ 5000 հոգուց մեծ մասը զիւղացիներ են, ապա՝ ուսանողներ, մտաւորականներ, բանւորներ և այլն: Աքորւածները, մեծ մասամբ, մեղադրուում են Դաշնակցութեան պատկանելու մէջ, բայց կան և ուրիշ կուսակցականներ, ինչպէս, օրինակ, Դաւիթ Անանուր: Բաւականին խոշոր տոկոս են կազմում երիտասարդները՝ 18 տարեկանից մինչև 25 տարեկան՝ ուսանողներ, աշակերտներ և պարզ աշխատակորներ: Կան և կոմունիստ ընդդիմադիրներ՝ արոցկիստներ:

Աքորւածների այս բազմութիւնը ցրած է ընդարձակ տարածութեան վրա՝ Աբրահեմիզակից սկսած մինչև Սիբիրի խորքերը: Ոմանք մեկուսացւած են մեկուսարաններում (իզոլատոր) և պահւում են իբրև պատանդ: Ոմանք՝ տաժանակիր աշխատանքի են դասապարտւած Հանքերում կամ փայտ կտրելու վայրերում: Ոմանք պահւում են Սոցիալիկ կղզիւմ և բանտային առանձնութեան մէջ: Ոմանք՝ սերբրական խուզիկներում, հազարաւոր վերստերով հեռու կենտրոններից: Ոմանք ապրում են «ազատ», ստիկանական հսկողութեան տակ:

Աքորւականների վիճակը անտանելի է, ուղղակի դժոխային: Նրանք պաշտօններ վարելու իրաւունք չունեն, իսկ այս նպովեալ աշխարհում ո՞վ կառապարտութեան պաշտօնեայ չէ՞ չի կարող հօսպերատու խառնութեանց մթերք ստանալ: Իսկ ինչպէ՞ս են ապրում

այդ դժբախտները: Ովքեր բանտերում և արգելաբաններում են՝ դատապարտւած են ուսել ինչոր տալիս է կառավարութիւնը: Եւրոպական տուրիստներ չկան այստեղ և «ուզդիչ տներով» պարծենալու կարիք չկայ. բանտը դժոխք է, և բանտային ընտիւմ՝ դանդաղ, բայց ստոյգ մահացման մի միջոց:

Պատկերը աւելի լաւ չէ, սակայն, և դուրսը, «ազատ» աքորականների համար: Նրանք բոլորն էլ համարեա սեւադործութեամբ են պարսպում. անտաններում փայտ են կտրում, Հանքերում աշխատում... Եւ այս բանի համար ստանում են չնչին աշխատավարձ: Կօօպերատիւների դուները փակ են նրանց առջև, իսկ մասնաւոր շուկայում գնքերը անմատչելի են: Տնից օգնութիւն շատ ջշերն են ստանում, այն էլ հազիւ 10-20 ռուբլի ամսական: Ի՛նչպէս կարող են օգնել խեղճ տնեցիներն էլ, երբ իրենք էլ սոված մեռնում են: Չաւակների թերանից կտրում են պատուար և ուղարկում իրենց աքորական հարազատներին:

Բոլլեիկները պարծենում են, թէ Մոսկայում դուրս թիւն ունի, ապազէս կոչւած, Կարմիր Քաղաքական աքորականներին օգնութիւն հասցնելու նպատակով: Այդ Կարմիր Քաղաքականներն է Մակիմ Գորկիի կինը՝ տիկին Պէչկովա: Բայց դա մի կեղծիք է, մի սովորական խաղ բոլլեիկների կողմից արտասահմանի միամիտներին խաբելու համար:

Այսպիսի պայմաններում քաղաքորականները իրենց հացը խկապէս հանում են «քարից, հողից»: Գոք պէտք է տեսնէք, թէ ինչպէ՞ս հարաւի տաք կլիմային սովոր մարդիկ, հարաւի թեթեւ հազուններով ամբողջ օր փայտ են կտրում անտառում 40-50 աստիճան ցրտին: Կհանք կը դիմանա՞յ այդտեղ: Աքորականները Փիղիքայէս դատապարտւած են մահանալու:

Հիւսիսային կլիման, ճանճուտները, տայգաները լափում են իրենց զոհերը: Հայաստանից կարմրաթուշ երիտասարդները թռախա են ստանում և ուղարկում «Մինուս» մեռնելու: Որքան էլ յայպիսիների թիւը...

Հինգ տարի առաջ աքսորւածներից շատերի աքսորի ժամկէտը վաղուց լրացել է, բայց նրանց շարտեցին, այլ, առանց նոր մեղաբանք ներկայացնելու նորից դատապարտեցին երեքական տարով աքսորի նոյն վայրերում: Ոմանք ղեռ 1929թ. յունւարին լրացել էին իրենց աքսորի ժամանակաշրջանը, բայց այն ժամանակ աւելացրին մէկ և կէսական տարի: Հիմա դարձեալ երեքական տարի աւելացրին: Պարզ է, որ ուզում են ամենքին կոտորել և որջան շուտ, այնքան լաւ: Հինգ չափար երիտասարդ, աշխատասէր Հայերի կոտորում են Հիւսիսային անտանելի սառցարաններում: Ի՞նչ են մտածում այս մասին արտասահմանի Հայերը, ի՞նչ է մտածում եւրոպական դեմոկրատիան կամ Սոցիալիստական Ինտերնասիոնալը: Բողոքիկան գիղաններում մահան դատապարտւած Հազարաւոր աշխատւորները մի Սիւիզ-վանցետի է՞լ չարժեն, որ

ձայն չեն հանում, չեն բողբոբում: Թէ՞ իսպառուղ բողբոբելու շնորհիւ կատուցումը կուրացրել է մարդկանց աչքերը, և նրանք, իբրք, հաւատում են, որ Միբեր աքսորւածները հակադեմոկրատիկաններ են, իսկ դիտութեան և տեխնիկայի վերջին կատարելագործութիւններով գինւած Չեկան յեղափոխութեան և սոցիալիզմի գառն է պաշտպանում...

Աքսորականների տնտեսական և առողջական վիճակը դարհուրելի է: Նրանք կարող են ոչնչանալ մարմնով, բայց հոգեպէս նրանք ամուր են և ոգևորւած իրենց պատմական դերով: Մանուսաղ երիտասարդները. ոգևորւած աշխատւորութեան վեհ զարդարներով, այդ երիտասարդները, քաջ գիտակցելով իրենց վրա դրւած պարտականութիւնը՝ աղպերի ինքնորոշման և սոցիալիզմի յաղթանակի համար, արիաքար տանում են ստալինեան բռնակալութեան հայածանքները: Լինելով գանազան հողեկան Հիւսիսային չեկիտաների քմահաճոյքի զոհ՝ նրանք Մենուսում քաղաքականապէս, անզամ չեն ընկճւում. նրանք անկուռ են:

„ՍՈՑԻԱԼԻԶՄ ԵՆՔ ԿԱՌՈՒՑՈՒՄ “

Ո՞վ չգիտէ, որ բողբոբները «սոցիալիզմ են կատուցում»: Մինչ փութած ու նեխած դրամատիրական Եւրոպան դալարւում է ներքին հակասութիւնների ու դատապարտւած շահագործման ճիւղաններում, խորհրդային աշխարհում տիրում է «մասայական վերելք» և «աննախընթաց շինարարութիւն»: Փաստե՞ր:—Փաստերի շատ ենք տւել անցեալում: Առաջ ընդհանր մի քանի հատ էլ՝ քաղելով Երևանի պաշտօնաթերթից:

Մարտ 14-ին «Մուրհրդ» Հայաստան»-ը աւետում է. «Շինարարական Սեզոնը սկսւել է»: Եւ ահա թէ ինչ պատկեր է պարզում Հայպետշինը, որ Հայաստանի պետական շինարարութեան գլխաւոր հիմնարկն է. «Ինո 1930 թ. շինարարական սեզոնից Հայպետշինն ունի 20 օրեակ՝ 6.620.800 բուր. արժողութեամբ անաւարտ շինարարութիւն, որոնց կատուցումը շարունակելու մասին անզամ չեն էլ մտածում պատերազմները: Այժմ Հայպետշինի ապարատի, բանւորների և ծառայողների միայն 25 տոկոսն են լրիվ բեռնաւորւած: Հարիւրաւոր բանւորներ կան, որոնք ոտճիկ են ստանում, բայց շինանիւթերի պակասութեան պատճառով չեն աշխատում: Օրինակ՝ 1930 թ. վերջին եռամսեակում 4.960 տակառ ցեմէնտի պահանջ է եղել, բայց ստացւել է 500 տկ., 1000 տոնն դաճի փոխարէն՝ 234 տոնն, 150.000 հատ աղիւտի փոխարէն՝ 96.000 հատ, 15.000 խմ. տուֆի փոխարէն՝ 1.600 խմ. և այլն: Համարեա նոյն պատկերն ենք տեսնում նաև 1931 թ. առաջին եռամսեակում: Սակայն, պէտք է նշել, որ Միւրթեան և Հայաստանի ուրիշ վայրերից համեմատաբար շինանիւթեր աւելի շուտ և աւելի շատ են ըստացւում, զան տեղիս շինանիւթերը: 1931թ. առաջին եռամսեակի համար պահանջւած է 600.000 հատ տեղական կայծքար, բայց ոչ մի հատ չի ստացւել: 12.488 տակառ ցեմէնտի դիմաց ստացւած է միայն 370 տա-

կառ, 11.104 խմ. անտառանիւթի ղեմաց 500 խմ., 44.440 խմ. աւաղի դիմաց՝ 812 խմ. և այլն. նոյն վիճակում է նաև մնացած շինանիւթերի ստացումը:

Շինանիւթերի փոխադրութեան այժմեան միջոցներով հնարաւոր չէ նիւթերի ստացման գործը կարգաւորել: Հայպետշինի ձիերն ու եղները կերով չեն սպահովւած, որի պատճառով այդ տրանսպորտն իր պլանի 50 տոկոսն անզամ կատարել չի կարողանում: Աւելին ղեռ. «1930 թ. Հայպետշինն արդֆինպլան, չի ունեցել, չունի նաև հիմա»: Այսինքն՝ երկու տարի է Հայաստանի շինարարութեան կենտրոնական մարմինը գործում է առանց արդիւնաբերական և ելեմտական ծրագրի: Կարող էք երևակայել ճեխած Եւրոպայում մի շնչին արհեստագործ, որ չիմանայ, թէ ի՞նչ ունի և ինչ՞ է ձգտում իր արհեստանոցում: Հայաստանում, ամբողջ պետական շինարարութեան մէջ, չգիտեն: Եւ այդ պատճառով, զբոտ Հայպետշինի ունեցած տեւաշինի, այս տարի կարիք է զգացելու 6.061 բանւորի, որից առ մէկն փետուրաբի, Հայպետշինի գծով աշխատում էր 1,200 բանւոր... Նոյնպէս և «մասնազէտների կարիքը մեծ է»:

Հայաստանի շինարարութեան քաօսի պատճառներից մէկն էլ այն է, որ բազմաթիւ, իրարից անկախ հիմնարկութիւններ զբաղւած են միևնույն գործով:

«Երևանում շինարարութիւնը չի կենտրոնացել մի հիմնարկում, ինչպէս Բազում և Թիֆլիսում է արւած. այդ գործով զբաղւում են մի շարք հիմնարկներ՝ Բնակշինկոօպը, Բաղիտրհուրդը, Հողժողկոմստը, Զակտորդշինը, Ժողովրդական Տուն, Շինվարչութիւն և այլն. էլ չենք խօսում Հանրապետական մասշտաբ ունեցող Ցեմենտշինի, Բիմշինի, Ելեկաշինի և այլ հիմնարկների մասին:

Այդպիսի մի քանի մարմինների գոյութիւնը խան-

դարում է շինարարութեան պլանայնութեանը և ստեղծում է մի տեսակ չփոթ ու անարխիա. անհրաժեշտ է ոչ միայն երևանի, այլ և ամբողջ Հայաստանի շինարարութիւնը կենտրոնացնել Հայկետշինում և բոլոր միջոցները նրան տրամադրել՝ շինարարութեան համար»:

Այդպէս է Պետշինը, բայց ահա և Յնշինը — ցեմենտի գործարանը, որ ահա քանի տարի է կառուցուում է և նոյնպէս զբոս խալտառակ դրութիւն է սպորում».

«Յնշինում անտոտանիութեան վատնում են: Տախտակն այնպէս են մանրում, որ նա այլևս ոչ մի բանի պէտք չի դալիս: Շինանիւթները պահելու համար յարմարութիւններ չեն ստեղծել. աղիււղ, աւազը, տախտակը, երկաթը, ապակեղէնը, բոլոր խոտնած է իրար, այդ պատճառով արդար 75 տոկոսը փչացել է: Անտոտեսափարութեան հետևանքով էլ կելտրական կոտանը կառուցեց ու կրկին քանդակեց՝ խելով մեծ գուժարներ: Բանուժի ոսցիոնալ քաշխում և օգտագործում չկայ, երկաթագծի ճիւղի վրա աշխատում են 12 բանուր, որից 5-ը դործ չեն անում: Արդիւնաբերութեան վրա ազդում է գլխաւորապէս դործիքների պակաս լինելը:

Վատ հիմքերի վրա են դրած դիզէլի շախտանքները: 4 անգամ բարունք են ուզարկել Համարլու, ծախել 600 բուրի, սակայն, դեռ դիզէլներ կարգի չեն բերած: Վազոնները թափած են բացօդեայ, ճիւղի և արեւ տակ փշտում են: Կառուել են պահեստ և գրասենեակ, բայց հիմա քանդում են՝ ուրիշ տեղ կառուցելու համար: Գնած են ֆուրգոններ, որոնք չեն օգտագործուում, մնացել են ձիւնի տակ»:

Եւ «Պորհրդ. Հայաստան»-ի թղթակիցը Հաղորդելով այս իսկապէս որ «խալտառակ» տեղեկութիւնները եզրափակում է. «Սակայն բացել ամենամեծն այն է, որ տեղի վարչութիւնն, կուսակցութեան, ԱԳՅԽ (Կոմսոնոլ) և արհմիութիւնների աշխատանքի միջև ոչ մի կապ չկայ»:

Իսկապէս որ «ամենամեծը»...

Գուցէ աւելի լաւ է Բանաբեռզէւի՞ շինարարութիւնը, որը «Հայաստանի արդիւնաբերութեանն ու տարւ է 62,000 ձիււ ուժ», որի վրա ծախսելու է 18,680,000 բուրի» և որի բոլոր աշխատանքները, ըստ պլանի՝ պէտք է աւարտին 1932 թ. հոկտեմբ. մէկին»:

« Համաձայն է կիկոյալին նախագծի, մինչև 1931թ. մարտ 1 մասնաբեռզէւն իր աշխատանքները պէտք է կատարած լինէր 13-14 տոկոսով, բայց փաստորէն կատարել է մօտաւորապէս 5-6 տոկոսով»: Աշխատանքի գտնիքիական պլանները դեռ հաստատուած չեն»: Ութ ամիս է, որ սկսած է էլեկտրականի շինութիւնը, և գտնիքիական պլանները, այսինքն՝ շինարարութեան գործնական ծրագիրը դեռ չի կազմում — հնարաւոր բան է այսպիսի քանչեղի անտեսափարութիւն ճարտարապետը: Եւրոպայում:

Մեքենայականացումը, որ այդ շինարարութեան հիմքն է, դեռ չէ սկսած. «Բանաբեռզէւ աշխատանքները ծրագրելիս նախատեսել է այդ բոլոր աշխատանքները կատարել գլխաւորապէս մեքենացման միջոցով, մինչդեռ աշխատանքների Ցրդ ամսումն ենք և ոչինչ չի արւած այդ ուղղութեամբ: Քանաբեռզէւի

աշխատանքները մեքենացնելու համար անհրաժեշտ են հող փորող, օդ խտացող, ծակող մեքենաներ, մոտոշարժիչներ (մոտոր կրող), նաստաներ (չբահաններ) և այլն, բայց փաստորէն միայն կան վագոնիկների դծեր և Զորագէտից ստացած փչացած վագոնիկներ, որոնք համարեա ամբողջ ժամանակ նորոգում են»:

«Անցեալ տարի վարչութիւնը ցանկանալով «մեքենայացման» փորձ կատարել, աշխատում է չինել մի մոտոշարժ, որի վրա ծախսում է մօտ 3000 բուրի: Սակայն, այդ պատճառան մոտոշարժը (արդէն Ցրդ ամիսն է) ոչ միայն դեռ պատրաստ չէ, այլ և յոյ անգամ չկայ, որ կարող է պատրաստել: Մոտոշարժը այժմ ընկած է մեքենայական արհեստանոցում»:

Կամ թէ չէ. «Բանաբեռզէւը մեծ կարիք ունենալով վագոնիկների՝ պահանջում և ստանում է ձիւթուրից 10-12 վագոնիկներ, որոնք Բանաբեռզէւի աշխատանքների համար միանգամայն անպէտք են: Այդ վագոնիկները մինչև այժմս չեն օգտագործուում». («Ո. Հ.» մարտ 5):

Իսկ երկաթուղային «ճեղքւածքներն» ու «խալտառակութիւնները» հո արդէն առածի կարգ են անցել: Շոգեշարժ մեքենաները վատ են, նորոգուում, արհեստանոցներից վախրաշարժեր են դուրս թողնուում առանց անհրաժեշտ մասերի, դնացքները ժամերով կանգնում են ճանապարհին, վագոնները օրերով մնում են կայարաններում առանց դատարկելու, շղատարկւած վագոնները յետ են ուզարկուում, իբրև դատարկածներ, շոգեմեքենաները բարխում են կրք, պնացքներ խորտակուում են, պաշտօնէութեան, մասնագէտների և բանուրների մէջ գանդույթ և անբարեխիղճ վերաբերմունք», «անխնամ վերաբերմունք», անձեռնհասութիւն, կայաններում և դծերի վրա՝ անտարկութիւն, հսկող աչքի ու ղեկավարութեան պակաս. աէր չկայ... Եւ այսքանը՝ միայն «Պորհրդ. Հայաստան»-ի մէկ համարից (մարտ 6):

Եւ այսպէս՝ Հայաստանի անտեսակոն կեանքի բոլոր ասպարէզներում. «ճեղքւածք», «թերաղահաստում», «թերակատարում», «խալտառակութիւն»... Եւ ուրիշ կերպ կարող է լինել մի երկրում, ուր տիրում են ճորտատիրական կարգեր, ուր աշխատանքը ծանր հարկադրանք է մարդու համար և կեանքը՝ անտանելի դժոխք, ուր մի կտոր հաց ճարելը իւրաքանչիւր ժամայ 1 մասնաբեռզէւն հարց է: Նայէ «Պորհրդ. Հայաստան»-ի էջերում (մարտ 11): Կարող ենք մի սրտառուչ դիմում «Բանաբեռզէւութեան կոմիսարին, ուր, ի մէջ այլոց սաւած է. «Ո. Հ.»-ի № 42-ում տպւեցին հացի հերթերը ստուգող բրդադաշի նիւթերը, որին Բանաբեռզէւի վարչութիւնը մարտ 3-ի թուով խմբագրութեան պատասխանում է, թէ հերթերը վերացւել են. սակայն, իրողութիւնն այն է, ընկե՛ր կոմիսար, որ այդ բոլորից յետոյ, դրութիւնը ոչնչով չի փոխւել, և հացի հերթերը շարունակում են գոյութիւն ունենայ»:

Հացի հերթե՛ր Հայաստանի մայրաքաղաքում... խորհրդային իշխանութեան տասնամեակ տարեկարծից յետոյ... Տնտեսական ի՛նչ վերելքի և ի՛նչ «գոցիակիւմի կառուցման» մասին կարող է խօսք լինել...

Յ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆԷՆ

ՍԵՒ-ՔԱՐԵՑԻ ՍԱԲՕԻ ԻՆՔՆԱԿԵՆ ՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

V

Միև կողմից դուրս եկաւ Զաղախը աղան, նիհար կարմուճքով ու բարձրահասակ մի ծերունի և հարցրեց. «Համալարի՛, ներկիսանս» (հայրենակից, ո՞րտե՛ղացի ես) :

Կասկածելով, թէ մի՞ զուցէ թիւրքերէն լաւ չկարողանամ պատասխանել, Մխիթարին սասցիլ, որ պատասխանէ: Նա երկար ժամանակ կ'ընդունար իր թիւրքը, ամէն մի համիրիական ու բաշխուողիկ իրաւունք ունէր պատահող հային հարցաքննելու և կառավարութեան յանձնելու: Աղան կասկածելով Մխիթարի արտասանութեան վրա՝ մեզ իր ծօտ տարաւ:

Մարտափելի էր մեր դուրսը: Ձէնք կարող զիւղից փախչելով՝ ապատեւել: Ձէնք չունէինք, որ պաշտպանէինք: Մտիւրդն զնացիցն աղայի ծօտ, որը մեզ հարցրեց, թէ ո՞րտեղացի եք: Մխիթարը պատասխանեց, թէ ալիջանցի եք: Աղան հարցրեց. «Ինչո՞ւ էք ման գալիս»: Մխիթարը, թէ՛ «մեր եզները քրդերը դողցուցել են, եկանք փնտռելու»: Բայց աղան չհաւատաց և սկսեց մեզ խուզարկել: Առաջ խուզարկեց Մխիթարին, որի գրպաններում գտաւ թոյն, որ մենք վերցրել էինք կովկասից: Երբ որ աղան թոյնը տեսաւ, սարսափեց և հուսար պտուց, թէ՛ «Սրանք ջան Փիղախի՛նք են, Սերոբ փաշայի մարդիկն են, եկած են ինձ սպանելու»: Եւ խոզոյն մարդ ուղարկեց գիւղի ուստի և նշանաւոր մարդկանց ծօտ:

Մենք արդէն կորած էինք: Գրութիւններս անտանելի էր: Ի՞նչ անէինք, չգիտէինք: Մեզ տարաւ դոմբ և դուռը կողպեց մեր վրա: Մի քանի ժամից յետոյ եկան աղայի ծառան, ուշուր և մի քանի զիւղացիներ: Լուսամուտին մօտենալով՝ սասցին. «Աղբէ՛ր, եթէ փարա ունիք, եկէք տւէք մեզ, որպէսզի անցնէ աղային, որ մեզ ապառ թողնէ, ապա թէ՛ ոչ՝ չի թողնի»: Ես պատասխանեցի. «Աղբէ՛ր, ինչ ուզում է՞՞ տւէք: Ես ճ լիբա և մի ժամացոյց ունեմ, եթէ մեզ թողնէ՛՛ կը տամ»: Աղան չէնց որ ճ լիբայի անուրը լսեց, խկոյն և եթ մեզ ծօտ եկաւ և սասց. «Օղլում, ես մեզ կը թողնեմ երկկոյնան մօտ ժամանակ»: Եւ անհնելով, որ ես ձեռքս տանում եմ զէպի դրամս ու ժամացոյցս, դառնալով զէպի հայերի՝ ուրախ տրամադրութեամբ սասց. «Ղարբի մարդիկ են, անեմ այս փարսներն ու թողնեմ երթան, միայն չուս պէտք է հեռանան այս գիւղի շրջանից: Ի՞նչ կասէք դուք, որ գիւղի պատասխանատու մարդիկ էք»:

Հայերը լուռ էին: Աղան տեսնելով ձեռքին ճ լիբան, նորից դարձաւ նրանց ու սասց. «Ձանրմ, ինչո՞ւ էք լուռ, մի բան սասցէք, է՞»: Այն ժամանակ հայերից մէկը Առաքել անունով սասց. «Աղա՛, եթէ դու դրանց ազատ թողնես, մենք կերթանք փաշային կա-

սնք, թէ մեր աղան զարբը մարդիկ բռնեց և կաշառք առնելով թողեց»:

Աղան տեսնելով հայերի այդպիսի յանդուգն պատասխանը, փողերն ու ժամացոյցը ինձ վերադարձրեց և սասց. «Օղլում, ահա արանք էլ ձեր հայերն են: Ես առաւօտեան մեզ փաշայի ծօտ կը տանեմ»: Ու հրամայեց, որ մեր թիւրքը կապեն սիւնից: Այդպէս էլ արին:

Երեկոյեան աղան սաստիկ բարկացաւ հայերի վրա: Բարձր բարձր գոռոզուում էր. «Եթէ՛ դուք կապ չունէք ջան Փիղախի՛նքի հետ, ինչո՞ւ են սրանք այստեղ եկել: Ես կասեմ, որ սրանց բռնեցի Առաքելի տնից»:

Գիւղացիները ա՛հից՝ խնդրում էին ինչայն իրենց և խոստանում էին աղային 20 լիբա ու 25 դերան, որ պէտքի սատ, թէ այս մարդկանց բռնել է անտառում և ոչ թէ գիւղում: Աղան, ի վերջում, մեղաճատեց և խոստացաւ կատարել գիւղացիների խնդրերը:

Գիւղերը մեզ համար անցաւ տանջանքներով: Ձէնք հասկանում, թէ ինչ պատահեց. երա՞զ էր, թէ իրականութիւն: Այլա՞ծ իրար երես էինք նայում, առանց մի խօսք արտասանելու: Վերջապէս, առաւօտեան երեկեցաւ Զաղախը աղան և սասց. «Հայտէ՛, օղլում»: Ու ինքը նստեց ձիու վրա, 4-5 զիւրդ ծառաների հետ, ու մենք էլ կապած ճանապարհ ընկանք զէպի քաղաք: Յունիս 13-ին էր, որ մենք ձերբակալուցինք:

Արդէն շրջակայ հայ գիւղերում տարածուել էր երկու զարբիւնների բռնելու լուրը: Այսքանը բաւական էր, որ ամենքը մեզ ջան-Փիղախի՛նք համարեն: Թիւրքնիս կապած՝ անցնում էինք հայ գիւղերի միջով: Հայ և զիւրդ գիւղացիները մեծ քանակութեամբ հաւաքուում էին մեզ տեսնելու համար, իսկ երեխաները մեր յետևից ընկած՝ պրոտում էին. «Ջան-Փիղախի, ջան-Փիղախի»: Զաղախը աղան հպարտ-հպարտ նստած ձիու վրա՝ անում էր մեր առջինը և պատահողին մատնացոյց էր անում մեզ: Մեզ պատահող գիւղացիները զլելի աչքերով նայում էին մեզ, կարծես ուզում էին ասել, թէ ինչո՞ւ սրանց ողջ-ողջ են տանում ու չեն կտրում գլուխները:

Այսպիսի սակայն վիճակում մօտեցանք քաղաքին:

Քաղաքի մօտ ծառան հարցրեց, թէ ո՞ր ճանապարհով գնան: Աղան պատասխանեց. «Հայերի թաղով տարէք, որ լացողը լայ, իսկ ծիծաղողը ծիծաղի»: Այս խօսքերն առանձնապէս խայթեցին ու ցաւ պատճառեցին ինձ, բայց ի՞նչ կարող էի անել. թշնամու ձեռքումս էի:

Երբ հասանք դատարան, ամէն կողմից բլաւում էին. «ճանապարհ տւէք, ճանապարհ տւէք»: Ինձ բարձրացրին վերի յարկը, փաշայի ծօտ: Փաշան թուխ մազերով, կարճահասակ, մօտաւորապէս 50 տարեկան

մարդ էր. ակնոցները աչքերին քաշելով՝ հարցրեց. «Օղյում, ո՞րտեղացի ես»: «Ուռուսաստանցի եմ և եկել եմ Սուրբ Կարապետ ուխտ», պատասխանեցի ես ուղղակի: Փաշան սասց. «Անցադիր ունե՞ս»: «Ո՛չ», պատասխանեցի ես:

Այս միջոցին Զագայր աղան փաշայի մօտի սեղանի վրա դրեց մեզանից առած թոշիւր: «Ի՞նչ բան է այս», հարցրեց փաշան: Ես պատասխանեցի, թէ դեղեր են՝ փորի ցաւի, դիլիսացաւի և ատամներէ համար: Փաշան հրամայեց բժիշկ կանչել: Կէս ժամից յետոյ ներկայացաւ մի միջահասակ, շէկ մազերով կրեռացի յոյն, առաւ դեղերը ու մօտենալով մեզ՝ հարցրեց, թէ ի՞նչ են դրանք: Ես նոյն պատասխանը տւի, ինչ որ փաշային: Բժիշկը հետն առաւ ու տարաւ որ փորձէ, իսկ ինձ առաջնորդեցին ներքին յարկում մի սենեակ, որը երբեք լոյսի երես չէր տեսել: Մխիթարին էլ առանձին:

Ահա, ուրեմն, ես էլ գտնուում եմ թիւրքական բանտի խոնավ դիզանում: Ընկերներէից շատ էի լսել, բայց երբեք չէի տեսել այս դժոխքը: Ահա այժմ ես էլ բանտում եմ: Կարող էք երեսակայել իմ հոգեկան վիճակը...

Յունիս 20 էր, որ ինձ հանցեցին այդտեղից և տարին փոխխոսանայ (նոսրիկանատուն): Այդտեղ դրամ էր մի սեղան, վրան փուռած էր կարմիր լաթ, տակը՝ խախր, և մի քանի աթոռներ շարած. յատարը ծածկւած էր թանձր փռչով: Ներկայ էին առաջին, երկրորդ և երրորդ կոմիսէրները: Առաջինը՝ իրգախ էֆէնդի, մի նիհար կազմաւածքով, թուխ մօրուքով ու աչքերով մարդ էր, թիւրքացած վրացի Արտամունչից: Երկրորդը՝ բարձրահասակ, լայն ճակատով և սև թեխերով հայ երիտասարդ էր, իսկ երրորդը Դաւրիչ էֆէնդի, նիհար կազմաւածքով զարսեցի թիւրք էր, որը վերջին պատերազմից յետոյ անցել էր Մուշ: Հայը, Աւետիս անունով, վարդնիսցի Մարգար վարժապետի ընկերն է եղել և նրա հետ միասին, 1892թ., բանտարկւած է եղել: Երբ Մարգար վարժապետին կախում են, Աւետիսը կրօնափոխ է լինում և ընդունում է Մահմէդ էֆէնդի անունը:

Երբ որ ինձ ներս բերին, առաջին կոմիսարը՝ էրգախ էֆ. սասց. «Բույուրուն, բույուրուն, Մարգիս էֆէնդի», և նստեցրեց աթոռի վրա: Բերին մի բաժակ սուրճ: Իրգախ էֆ. հրամայեց թէյ բերել, ասելով, որ ոռուսաստանցիք թէյ շատ են սիրում, և երեք բաժակ թէյ բերին:

Հէնց որ իրգախ էֆ. ուղում էր սկսել հետս խօսել, դրսից նրան ու Դաւրիչ էֆ. ին կանչեցին: Ինձ մօտ մնաց միայն հայ կոմիսէրը՝ Մահմէդ էֆ., որը օգտուակելով առիթից՝ մօտեցաւ ինձ, բռնեց ձեռքս և սասց. «Նորա՛յր, չվախենաս, զեզ ոչինչ մին կարող անել, իբրև ոռուսահպատակի: Մրանց ոչ մի հարցմունքին չպատասխանես, այլ սաս, որ ոռուսահպատակ ես և մինչև հիւպատոսը չլայ, ոչինչ չես պատասխանի...

Հաջիւ կէս ժամ անցած վերադարձան երկու կոմիսէրները՝ բերելով իրենց հետ դատարանի հրահանգը: Իրսեցին մօտենալով ինձ՝ սասց. «Ջանըմ, այդ ո՞րտեղից որտեղ եկար. համշարի ենք, սիրտ շատ ցաւեց, երբ տեսայ թեևերդ կապած, բայց ի՞նչ արած՝

«միլլաթ դաւասի դըր» (արգութեան խնդիր է): Եւ դառնալով դէպի իր պաշտօնակիցները՝ աւելացրեց. «Ես շատ ուրախ կը լինէի, եթէ պ. Սարգիսը ուղղակի իր նպատակը առէր և մեզ մեղքի տուկ չզգէ, որքան չլինի՝ հայրենակիցներ ենք»:

Այս խօսքերի վրա ամենքն էլ իրենց ուշադրութիւնը իմ վրա դարձրին և վրա բերին. «Այո՛, շատ ճիշտ սասց իրգախ էֆ.»: Եւ Դաւրիչ էֆ. թուրք ու գրիչ առնելով՝ հարցրեց. «Անունդ ի՞նչ է»: Ես պատասխանեցի, թէ թիւրքերէն չլիտեմ: Իրգախ էֆ. առաջարկեց Մահմէդ էֆ. ին, որպէսզի թարգմանի պաշտօն կատարէ: Մահմէդ էֆ. ինձ աչքով անելով՝ հարցրեց, թէ անունդ ի՞նչ է: Ես պատասխանեցի, թէ, իբրև ոռուսահպատակ, չեմ պատասխանի, մինչև որ մեր հիւպատոսը ներկայ չգտնուի:

Իրգախ էֆ. հիւպատոսի անունը լսեց թէ չէ, աչքերը մեծ բաց արելով՝ սասց. «Ինչո՞ւմ հաւատանք, որ դուք ոռուսահպատակ էք»: Ես պատասխանեցի, թէ՛ «Կարող էք իմ կողմից հեռագրել Դաղարս՝ դաւառապետին»: Իմ այս անսպասելի պատասխանը դէւր չկաւ իրգախ էֆ. ին, և ինձ թլաց, թէ՛ հիւպատոսի ու գաւառապետի արեւները վատ ազդեցութիւն նրանց վրա: Մահմէդ էֆ. սասց. «Աւելի լաւ է ուղիղը խոստովանես. մենք հիւպատոս կամ դաւառապետ չենք ճանաչում. դու փախտական ես և անցադիր չունես: Եթէ մինչև անգամ անցադիր էլ ունենայ, մենք կարող ենք մեր օրէնքներով դատել զեք»: Ոչ աչքերը վեր քաշելով՝ ինձ հասկացրեց, որ ոչինչ չպատասխանեմ: Ես այդ հասկացայ ու պատասխանեցի, թէ՛ «Փախտական չեմ. չգիտեի թէ՛ ձեր երկրում անցադիր պէտքուրթին կը լինի. եթէ՛ գիտնայի, անպատճառ կը վերցնէի: Խնդրում եմ իմ հաշտուկ հեռագրեցէք դաւառապետին կամ Կարինի հիւպատոսին»:

Իրգախ էֆ. վրաս բարկանալով՝ «Սուտ է խօսում» սասց և դուրս եկաւ սենեակից: Դաւրիչ էֆ. քաշեց սենեակի մի անկիւնը և սկսեց նամագ անել: Մահմէդ էֆ. մօտեցաւ ինձ ու սասց. «Սրանց սպանուլիքներից չվախենաս ու խօսքի չգիտես. ոչինչ չեն կարող անել»:

Քիչ յետոյ իրգախ էֆ. վերադարձաւ ու հրամայեց ոստիկաններին, որ ինձ բանտ տանեն: Ես շատ ուրախ էի, որ Ատուած այդ բարի հրեշտակին ուղարկեց ինձ օգնելու: Ուրախ էի նոյնպէս, որ բոլորովին չծեծեցին:

Միւս օրը ինձ նորից փաշայի մօտ տարին: Փաշան հարցրեց. «Օղլիւ, ինչո՞ւ ուղիղ չես խօսում. ուղիղ խօսիր, որ զեզ շուտով զո երկիրը ուղարկեմ»: «Ես, դարձեալ Մահմէդի թարգմանութեամբ, պատասխանեցի, թէ՛ մի խեղճ ուխտաւոր եմ, ի՞նչ գիտեմ որ ինչ խօսեմ: Փաշան հարցրեց. «Սերոր փաշային ճանաչո՞ւմ ես»: «Ո՛չ, չեմ ճանաչում», պատասխանեցի ես: «Անունը լսե՛լ ես»: — «Ո՛չ, չեմ լսել»: Ու հրամայեց՝ նորից ինձ բանտ տանել:

Ես լսել էի, որ բանտում սարսափելի ծեծում են, բայց ինձ ոչ մի անգամ չծեծեցին ու բաւականին էլ զաղաքավարի էին վարում հետս: Այդ բանը ինձ անչափ ուրախութիւն էր պատճառում:

Յունիս 1-ին Մահմէդ էֆ. եկաւ մօտս ու սասց. «Գնանք հարցաքննիչի մօտ»: Գնացինք: Ճանապարհին

նորից, ոստիկաններից ծածուկ, զգուշացրեց ինձ, թէ շարունակեմ բռնած ընթացքը:

Բարձրացրին երկրորդ յարկը, որտեղ նստած էր դեղեցիկ, կարճահասակ մի երիտասարդ, որը ինձ տեսնելով՝ ժպտաւ երեսին՝ ասաց. «Մարդիս է՞՞՞, բուրձուրուն, մարհարա»: Ու ձեռքը վեր վերցնելով՝ բարեկեց: Ա՞՞՞րո՞ւ բերին. նստայ: Եկաւ և դատասիրողը: Դարձաւ նոյն Հարց ու փորձը: Ես պատասխանեցի, որ առանց հիւպատոսի ոչինչ չեմ ասի:

Հարցաքննիչը ասաց, թէ՛ «Մենք ուղում ենք զեզանից տեղեկանալ միտան, թէ դործդ կ'ընչ է և ո՞րտեղից եկար մինչև այստեղ»: Ես տեսնելով թարգմանի նշանը՝ սիրտ առի ու պատասխանեցի. «Ես մի դարիբ մարդ եմ, չեմ հասկանում ձեր օրէնքները, իսկ ձեր օրէնքով մինչև որ հիւպատոս չլինի, չեմ կարող պատասխանել»: Դատասիրող ասաց. «Որպէս դարիբ մարդու, չենք ուզում զեզ նեղութիւն պատճառել, ասաց թէ՛ ոչ խօսեցնելու ձեռք դիտենք. այնպէս կանենք, որ կը սկսես աղաչելով պատասխանել: Մեր օրէնքով մենք իրաւունք ունենք զեզ հարցաքննելու»:

Այս խօսքերը իմ վրա ազդեցին: Երևի, զոյնս փոխեց: Մահձէղ է՞՞՞. նկատեց ու նշան արաւ, որ չվախենայ: Ի՛նչ արեցի, իմ աչքը միշտ Մահձէղ է՞՞՞-ի վրա էր: Ես սիրտ առի ու պատասխանեցի. «Ձեր օրէնքները ես չեմ հասկանում, իսկ ձեր օրէնքով չեմ խօսի մինչև որ հիւպատոսը ներկայ չլինի: Իսկ գալով նեղութիւն տալուն՝ այդ ձեր կամքն է. ինչ որ ուզէ՞ք կարող էք անել: Արդէն առանց այդ էլ ես նեղութիւն եմ քաշում. իմ տեղս այնպիսի տեղ է, որ եթէ չունեն էլ կայան, երկու ժամից աւելի չի դիմանայ»:

Իմ վերջին խօսքերի վրա դատասիրողն ու Հարցաքննիչը իրար երես նայեցին և Մահձէղ է՞՞՞նդիին Հարցրին, թէ՛ ո՞րտեղ եմ տեղաւորւած ես, և Հրամայեցին ինձ բանտ տանել:

Երբ որ բանտին մօտեցանք, սկսեցին չորս կողմիցս բոլաւել. «Ջահ՝ Ֆիդային, ջան Ֆիդային»: Ամբողջ մարմինս սկսեց զողայ: Բանտի դռնից ներս մտնելու ժամանակ, զանջիբին (Հակիչը), մի հաստ ու կարծ փայտ ձեռքին, Հասցրեց գլխի՛մ՝ ասելով զերդարեհին. «Տղէ՛քը, խփեցէ՛ք, Հաւատու թշնամի է անհաւատը»: Ու փայտի հարւածները, կարկուտի պէս, ըսկսեցին թափուել վրաս:

Դրութիւնս շատ վատ կը լինէր, եթէ՛, յանկարծ, օգնութեան ՀՀաննից բանտարկեալներից մէկը, Չիրբանցի ցեղապետ Աղուն, որ բանտում, իբրև ցեղապետ, վայելում էր ազատութիւն, և ազդեցութիւն ունէր պաշտօնեաների վրա, Հայրոյելով առաջ նետուց, ազատեց ինձ ծեծողների ձեռքից և աարաւ իր օդան: Ապա դառնալով բանդապետին՝ ասաց. «Եթէ թագաւորից ես հրաման կայ այս մարդու դէմ, ցոյց տէ՛ք, որ ես էլ խփեմ, որպէսզի Աստուած ինձ էլ վարձատրել, իսկ եթէ՛ Հկայ, այս դարիբ մարդուն ինչո՞ւ եմ սպանում: Աստուոյ զամթիւն է, որ եկած է ձեր թագաւորի Հացն ու թուրը վայելելու»: Աղայի Հեռանալուց յետոյ, բանտապետը դուրս դնաց ու աստիկ բարկացաւ դարձիբ-

չիի ու քերդերի վրա: Իսկ ես փառք տւի Աստուծուն, որ այստեղ էլ զտնեց մի բարի մարդ, որ պաշտպան Հանդիսացաւ ու Հանց ինձ նեղ դրութիւնից:

Մշոյ բանալ բաղկացած էր երկու մասից. վերի մասը զօրանոց էր, որտեղ ապրում էին զհետընթերները բանտ էր, բայց ի՛նչ բանտ. սարսափելի բան էր: Կառուցւած էր հոս աղիւններից: Արևելեան կողմի պատերի մէջ կար մէկական պատուհան կէս արշին լայնութեամբ և երեք արշին բարձրութեամբ: Պատուհանները ունէին շարժական շրջանակներ: Հոկտեմբերի սիզբից այդ շրջանակին թուղթ էին կպցնում, որպէսզի ցուրը ներս չմտնէ. և այդպէս մտնում էր մինչև եղանակների տաքանալը, յաճախ, մինչև մայիս: Արևմտեան կողմի պատուհանները աւելի փոքր էին. լայնութիւնը երեք-քառորդ արշին, բարձրութիւնը՝ երկու:

Երբ առաջին դռնից ներս էիր մտնում, պատահում էիր փայտով կտրւած երկու սենեակների. մէկը կոշուած էր Թաւրոզ (բանտապետի սենեակ), միւրը՝ զաւլու (զօրանոց), ոստիկանների համար: Այդ կտրւածքի փերիկ դռնից ներս մտնելով՝ անցնում էիր ընդհանուր բանտը, որը ունէր մօտ 50 ոտք երկարութիւն և 12 ոտք լայնութիւն: Դահլիճ հարաւորակ ծայրում դռնում էր մի փոս ընկած սենեակ, որ կոշում էր գնդան: Հիւսիսային ծայրում դռնում էր մի ուրիշ փոս, որը կոշում էր ջալաբ (լազացու տեղ). ջալաբից երեք քայլ Հեռու՝ արտաքնոցը: Արևելեան և արևմտեան կողմերում կային չորսական սենեակներ, որոնցից արևմտեանը յասկացւած էր հասարակ մարդկանց, իսկ արևելեանը՝ աղաներին: Այս 8 սենեակներում կար 300 բանտարկեալ:

Ձանջիբին նստում էր փոքրիկ մուտքի առջև, հաստ կոպալը ձեռքին: Երբ որ նրա բանտարկեալ էին բերում, կանգնում էր դրան առաջ: Բանտի դուռը փոքր էր, և բանտարկեալը ներս մտնելիս՝ ստիպւած էր գլուխը ծռել: Հէնց այդ վայրկեանին զանջիբին կոպալը Հասցնելով նրա վզին՝ ասում էր՝ «Ճգեցէք դիտանը՝ ստուկի»:

Այլանը (զանջիբին) շատ վարպետ մարդ էր. ունէր մի քանի Համախոհներ քաղցած ջրդերից, որոնք իսկոյն մարդուն տանում էին ցնդանը և դրած էին պահանջում, որ ալդտեղից հանեն: Ողեզ բանտարկեալը, եթէ փոք չունէր, ծախում էր հազած չորերը, կամ պարզեց փրկեցնում մէկ մէկտարայի համար ամսական 5 դրուշ տոկոս տալով և ազատում էր դժոխքից, թէև միւս սենեակներն էլ ստանձնապէս չէին տարբերում:

Մուսալի էր, մասնաւոր, Հայերի դրութիւնը: Երբ նրանք ներս էին մտնում պատմական դռնից, արդէն մի քանի տասնակի ջրդեր շարւած էին լինում դրան առաջ: Հէնց որ նորեկը ուզում էր ներս մտնել, Այլանը մի կողմից, քերդերը միւս կողմից պոտում էին. «Է՛կին ի՛նչ պէ՛» (տղիբը, խփեցէ՛ք, վարձք է): Անջան էին ծեծում, մինչև որ մէկի դուրսը շարժուելով՝ ազատում էր, կամ ծեծելուց յոգնած՝ Հեռանում էին...

(Շարունակելի)

Մ Ե Ր Զ Ո Ն Ե Ր Ը

ՎԱՆ - ԱՅԳԵՍՏԱՆԻ

Հ. Յ. Դ. «ՍԱՐԷՆ-ՁՈՐԷՆ» ԽՄԲԻ
ՆԱՀԱՍՏԱԿ ԵՒ ՄԱՀԱՑԱԾ ԸՆԿԵՐՆԵՐԻ
ԱՄՓՈՓ ԿԵՆՍԱԿՐԱՎԱԿՆԵՐԻ

Հ. Յ. Դանակցութիւն Վան քաղաքը բաժնած էր երկու ենթակոմիտէական շրջաններ, մէկը Բաղաքա-մէջ և միւսը Այգեստան: Այգեստանի ենթակոմիտէ-ութիւն ունէր մօտ 800 անդամներ, իսկ 1908-ի Օսման-եան Մահմանադրութիւնից յետոյ այդ թիւը բարձրա-ցաւ 1100-ի՝ բաժանած 100 խմբերի վրա: Այդ խմ-բերից, ի մէջ այլոց, աչքի էր ընկնում «Սարէն-Ձորէն» խումբը, թէ՛ իր թւով ու որակով և թէ՛ իր յեղափո-խական գործունէութեամբ:

«Սարէն-Ձորէն» խումբն ունէր 24 անդամներ, բո-լորն էլ երեսունն անց Հասուն երիտասարդներ, կին ու երեխաների աէր: Շատերը նրանցից տասնեակ տարի-ների յեղափոխական ու կուսակցական ստաժ ունէին և գործուն մասնակցութիւն էին բերել կուսակցական բո-լոր գործերին: Վասպուրականի Կենտրոնական Կոմի-տէում և միւս բոլոր մարմիններէ մէջ «Սարէն-Ձորէն» անդամներ ունէր:

«Սարէն-Ձորէն»-ի անդամները մեծադոյն մասամբ պարզ արհեստատուներ էին, հազիւ տարրական կրթու-թիւն ստացած, կային նաև ուսուցիչներ, պաշտօնեա-ներ և առևտրականներ: Խումբն ունէր իր խմբագրարը, քարտուղարը, դանձապահը, պրոպագանդիստը և զին-ւորական մարզիչը:

Այս րոպէիս, երբ ընկերական պարտականութիւնս ինձ թելադրում է մի քանի տող ներքև մեր գունձ ու մահացած ընկերների անձա՛հ յիշատակին, Թարօրինակ գուռ-դիպութեամբ առջևս դրած ցուցակի վրա տե-նում եմ նրանցից տասներկուսի անուն դէմ խաչանիշ դրած: Դրանք են՝ Վահան Պնէկան, Միւրիշի Գաւիթ, Նալբանդ Մկրտ, Միհրան Արարջոյան, Նաղուի Սա-շիկ, Գլորզ ձիւղէան, Նալբանդ Նշան, Բուլղարացի Իրիգոր, Գարբէլ Փլարիկեան, Նշան Ռէն-Միլիքեան, Ղևոնդ Ժամաճարեան և Մինաս Պարօեան:

Սրանց նկերները Վժիթախարակ կարելի չէլու: Հայաստանից բերել տալ, իսկ ծննդեան թւահաններն էլ մօտաւոր թւերով եմ ներկայացրել՝ չունենալով ձեռքիս տակ ստույգ աղբիւրներ:

ԳՐԻԳՈՐ ԲՈՒԿՎԱՐԱՅԻ
(Ռուսնուցիցի)
1878—1918

Մէկը այն յեղափոխականներից, որոնք իրենց կեանքի միակ նպատակն ընտրել էին բոլորանէր ծա-ռայել Հայ ժողովրդի ազատագրական գործին և որոնց համար սեփական կամ անհատական գործ գոյութիւն չուներ:

Ձինադրծութիւն սովորել էր Բուլղարիոյ մեր

կուսակցութեան զինւորական դպրոցում: 1906-ին Վան գալով, իր առինքնող բնաւորութեամբ շուտով շրջա-պատեց զէնքի սիրահար և սև աշխատանքի ընդունակ երիտասարդներով: Ունէր յեղափոխութեան մասին հիմնաւորած համոզմունքներ և նրա կարծիքներն ու դատողութիւնները կշիռ ունէին Կենտրոնական Կոմի-տէի մէջ, որին անդամակցում էր 1908-ից մինչև վերջ: Արհեստով զինպարտ և զինամիտակի բիմակաւ բա-ղադրութեան մասնազէտ՝ անխնջ ներքեց այդ վտան-գաւոր ու արկածալի ներթերի պարտաւտութեան զի-չեր ու ցեղերի:

Վանում 907-ին վարակեց ծաղիկախտով, իր փա-խտական շրջանին, բայց իր անձուէր ընկերների հո-գածութեան շնորհիւ Կարմրորի վանքում խնամեց, ստողջացաւ և շուտով վերադարձաւ իր սիրած գոր-ծին, միայն չեչոտ դէժքով:

1908-ի Մահմանադրութիւնից յետոյ ամուսնացաւ մի որբուհու հետ, Մարիամ անունով, կազմեց մի օ-ջախ, որը նոյնպէս ետուն ժամադրովայր դարձու հարիւրաւոր երիտասարդների:

Վանի ապրիլեան Հերոսամարտին անդամ էր Այ-գեստանի Ձինւորական Մարմին, ամենաեռանդուն մասնակցութիւնը բերաւ ֆրանսապաշտանութեան դրո-ծին: Ինքը ծրարեց Համուս Աղայի գորանոցի ոչնչա-ցումը, անձամբ զինամիտ տեղաւորեց նրա տակը, օղբ հանեց բռնապետութեան այդ պատնէշը և Այգես-տանն ազատեց իր հօշմարից: Նոյնպէս Գրիգորն էր, որ յաջաւ թնդանթ ձուլելու զազափարը, ինքը ձու-լեց ու գործածեց մեր փոքրիկ թնդանթը, որ Այգես-տանի հրիւնների խորհրդանշանը դարձաւ:

1915-ի նահանջին, իր սիրած ժողովրդի հետ Ե-րևան եկաւ, միշտ էլ մտածեց ու գործեց իր ժողովրդի համար և 1918-ին Վան վերադառնալով, Վանի ժա-մանակաւոր կառավարութեան մէջ մտաւ:

Վանի վերջին նահանջից յետոյ, ուղեց վերապաշ-տալ իր ծննդավայր Բուլղարիա և Պոլիս հասնելով Հի-ւանդացաւ և մեռաւ 1918-ին, միշտ անմտոտց մտալով իր զինակիցներէ ու ժողովրդի սրտում, որին ներքեց նա իր ամբողջ կեանքը:

ՎԱՀԱՆ ԲՆԵԿԱՆ

1872 — 1905

Նալբանդ Նշանի մանկութեան ընկերն էր Վահան, նրա զազափարակիցն ու գործակիցը մինչ իր մահը: Միասին մտնում են Արմենական կազմակերպութեան մէջ և միասին դուրս գալով յարում են Դանակցու-թեան: 1896-ի հոբունիւրին Աւետիսեանի խմբին միացաւ Պարսկաստան մեկնելու համար, և եղաւ այն սակաւա-թիւ բախտաւորներից մէկը, ոք Բարթոլոմէձեոսի կուկեց ազատեց, մի քանի ընկերներով, և հասաւ Պարսկա-ստան: Միւսներն էին Ռէն-Միլիքի Նշան, Նաղուի Սա-շիկ, Կանգվաոցի Գապօն և այլն: Սրանք 98 թւին

միանալով Եկարեան Արմենակի խմբին Վան վերադարձան և Նալբանդ Նշանի խորհրդով, բոլորն էլ յարեցին Դաշնակցութեան՝ դառնալով նրա եռանդուն զործիչները և անձնէր զինուորները:

Որքան լրջախոս և միշտ լուսկեց Վահանը, արհեստով ատաղձագործ, ըստ երևոյձի կարծես աւելնչութիւն չունէր յեղափոխական կենդանի գործին. բայց եղաւ մի շրջան, որ Դաշնակցութեան զինական գործը Վանում ծանրացել էր Վահանի ուսերին և կենտրոնացել նրա ամբողջամասն տան մէջ: Իր մայրն ու ջորը Սաթկնիկը նրա առաջին գործակիցներն էին:

Վահանը ձերբակալուց, բանտարկեց, տանջեց, ազատուց, բայց միշտ էլ նրա սրտում կենդանի մնաց զինքի սէրը և միշտ էլ անխնայ ու հաստատրիմ ծառայեց նրան, որպէս զէնքի փորձառու մասնագէտ, մինչև որ տարիների տոմաների աշխատանքն անբուժելի հիւանդութեամբ զգեստեց նրան և ծաղիկ հաստարով խլեց իր սիրած գործից և իր սիրելի ընկերներէց:

ՆՇԱՆ ԱՒԿՍ-ՄԵԼԻՔԵԱՆ

1873 — 1918

«Սարէն-Ձորէն» խմբում կային զոյգ ընկերներ, միշտ իրարէջ անբաժան. դրանք էին Ռէս-Մելիքի Նշան և Նալբանդ Մկիօն:

Ռէս-Մելիքի Նշան տարբական կրթութիւն սելէր. արհեստով երկաթագործ՝ երկաթի նման ամբակազմ և տոկուն էր այս սեւ լաճը: Բարդաբի կուում նա էլ կար, այնտեղ նա կորցրեց իր անբաժանելի ընկեր Մկիօնի, և նրանից որբացած, ապրում էր միտայն իր պաշտած ընկերով յիշատակով և նրա վրէժը լուծելու զգացումով իր սնունդ:

Նշան և իր ընկերները պատկանում էին յեղափոխական այն դպրոցին, որի մէջ կուսակցականութիւնից սակի ուժեղ խօսում էր րնկերսիրտաբիւրնը: Նրանք ընկերական անբախտելի կապով իրար էին զօրւած: «Ապրինք միասին, մեռնինք միասին», այս էր նրանց նշանաբանը: Եւ Հէնց դբա համար մենք միշտ հանդիպում ենք այս երիտասարդներին քով քովի, իբրև արմենական միշտ միասին, իբրև դաշնակցական՝ միշտ անբաժան և գործի ու կուրի մէջ՝ միշտ կողք կողք: Ընկերսիրտութիւն և յեղափոխութիւն համարք արժէքներ էին, զուցէ և առաջինն աւելի սուրբ իրէլ:

1915-ի Ապրիլեան Հերոսամարտին, Նշան Ռէս-Մելիքեան խմբացեալ էր Արարոց շրջանի Դըհէրցի Մարզարի տան զիրբապահ խմբին: Նա օրինակելի սովորուածութեամբ տարաւ այդ պատասխանատու դիրքի պաշտպանութեան գործը մինչև վերջը: Դըհէրցի Մարզարի երկյարկանի տունն այնքան ծեծւած ու ուժեղացած էր թնդանօթով, որ ամբողջներին նորոգութիւնները հաղիւ էին կարողանում ստել պահել նրան, այնպէս որ, մի փոքրիկ ոյժ բաւական էր անպաշտելու այդ ամբողջ տունը:

Ռէս-Մելիքի Նշան եղբարական մաս ունեցաւ Հիւսիսային Կովկասում, սպանուելով լեւոնական Ձէչէնեների ձեռքով, բոլշեական քաղաքացիական կռիւների ընթացքին, 1918 թւին:

ՆԱԼԲԱՆԴ ՄԿԼՕ

1876 — 1915

Նալբանդ Նշանի փոքր եղբայրն էր Մկիօն, նոյնքան եռանդուն և միշտ զոհարեութեան պատրաստ: Իր մեծ եղբոր խմբական ընկեր, նրա օրինակին հետեւող և նրան գործակից զինական սեւ աշխատանքում: Իր քաղցր և կատակասէր բնաւորութեամբ մարտնչաբար «Սարէն-Ձորէն»-ի ամենից սիրւած անդամն էր: Ձէնք սիրուհար լինելով, մարտական խմբից միշտ անբաժան մնաց և մասնակցեց Վասպուրականում մղւած բազմաթիւ արկածայից կռիւներին:

1914-1915-ի ձմրան, տանձիկ կառավարութիւնը ինչպէս Վասպուրականի միւս դաւաճներում, նոյնպէս և թիմարի հայ գիւղերում, սկսել էր բռնութիւններ ի գործ դնել, փախտական հայ զինուորացուներ հետանդելու պատրւակով: Դաշնակցութիւնը, թիւրք միլիտերի սանձարձակութիւններին չափ դնելու համար, որոշեց մի մարտական խումբ հանել թիմարի շրջանը, և այդ գործը յանձնեց «Սարէն-Ձորէն» խմբին, որն ունէր մէկ ու կէս տասնեակ մարտունակ երիտասարդներ: Ուժքի անդամներից Պէրիտաին (Ռուբէն Իսրայէլ-Լան) այդ երիտասարդների գլուխն անցած՝ առաջնորդեց թիմար: Այդ խմբի մէջ էր նաև Նալբանդ Մկիօն: Նալբանդ Նշանն էլ ուզեց շինել այդ խմբում, բայց Արամը թող շտեյց սակով. «Ամօթ է, Նշան, երկու եղբայր միևնոյն խմբում կուր ընն դնայ»: Եւ Նշանը զիջեց:

Ուժքը թշնամու հետ առաջին ուժեղ ընդհարում ունեցաւ Բայրաք գիւղում: Թշնամին ունէր բազմաթիւ միլիտներ, կանոնաւոր զօրք և մէկ թնդանօթ: Այս անհաւատար կուում Նալբանդ Մկիօն անվեհեր կեցւածքը մէկ տասնմէկ ուղեւորութիւն էր ստալ թեղել ընկերներ ի մէջ: Ուժեղ կուր սեւում է մինչև երկուրդ: Ուժբազեալ քանիցս աղբարարում է Մկիօն, զուսպ պահել իրան և չափ դնել իր եռանդին, բայց Մկիօն, որ սովոր էր արհամարհել թշնամուն, շի լուսմ և կուր տաքացած մէկ բոլպէն դեղակ է ստանում կրթից և տեղն ու տեղը արեւնաքած լինում...

(Շարունակելի)

ԾԱՂԿԱԶՈՐԻ ԸՆԿԵՐՆԵՐ

Մկրտիչ Մնացականեան. — Ծնւել է Ներքին Ախտո գիւղում, 1880 թւին: Կրթութիւնն ստացել է խալիֆայական դպրոցում: 1901-ին կանչւել է զինուորական ծառայութեան. ծառայել է թիֆլիսում և 1904-ի դարնանը, վերցնելով իր հրացանը, խուսափել է զինուորական ծառայութիւնից և մասնակցել Ձորի ու Մասունի արշաւանքին:

Հայ-թրքական ընդհարումներին, որպէս զինուոր, մասնակցել է նախ՝ Երևանի և ապա՝ Ձանգեղուցում:

1908-12-ին եղել է Բազում, կուսակցական շարքերում, ապա վերադարձել է իր հայրենի գիւղը և որպէս Մաղկաձորի Երջանային Կոմիտէի անդամ, աշխատել է մինչև 1920-ի աշունը:

1920-ի աշնանը բուլշեակները նրան բանտարկել են որպէս դաշնակցականին: Փետրուարեան պատաստութեան ժամանակ, Ներքին Ախտայի վաշտի գլուխն անցած, կուել է մինչև Ն. Ախտայի անկումը, աջ ուղի

սրունքից վերադարձնելով տեղափոխուել է Երևան, ուր կարել են նրա նվ տուքը, որից յետոյ վերադարձուել է Հայքենի գիւղը և կնքել իր մահկանացուն:

Սրապիան Օհանեան. — Ծնուել է Մոսկի գիւղում: Կրթութիւնն ստացել է Խալիֆայական դպրոցում: Երկար տարիներ Լոյի է խալիֆայական դպրոցում, ուր և ստացել է իր կուսակցական դաստիարակութիւնը և կատարել պատասխանատու գործեր:

1912-ին վերադարձուել է գիւղ և տարիներ շարունակ աշխատել որպէս Մարկոսեան Երջանային Կոմիտէի անդամ: 1920-ին ընտրուել է Երևանի գաւառային ինքնավարութեան իրաւասու: Մասնակցել է Փետրուարեան ապստամբութեանը, անցել է Պարսիստան, ապա վերադարձուել Հայաստան և այնտեղից էլ՝ Բաղու, ուր թողարկուել է հեռագրանայով, դարձել է Հայքենի գիւղը, ուր կատարել է կուսակցական պատասխանատու աշխատանքներ և 1928-ին զո՛ւ գնացել թուրքախոսին:

Թ. Կ.

ԱՅՆԹԱՊԻ ԱՌԱՋԻՆ ԶՈՂԸ

Նազարէթ-Նապարեան-Եմէլիճեան, դաշնակցական անդրին գինուրն էր, որ դատարարար սպանեցաւ Այնթապի մէջ 1902-ի վերջին օրերուն: Ան հաւանարար սուղին դաշնակցական նահատակն էր ամբողջ Կիլիկիոյ մէջ:

Աւելի քան միջնաստակ, կարմրալէմ, լայնաթիկունք, մի գեղեցիկ երիտասարդ էր Նազարէթը: Ծնած 1879-ին. չորրորդ սրդին Այնթապի մէջ բողոքական ընտանիքին: Ազգային դպրոցին մէջ կարդալ-գրել սովորել անմիջապէս յետոյ գնաց իր եղբոր մօտ կոշակագրութիւն սովորելու:

1895-ի կոտորածին արդէն 16 տարեկան էր: Կոտորածը սովորեցուց անոր, թէ սպրեւր. Համար մարդ պէտք էր գիտնալ ինքնինքը պաշտպանել: Նւիրեցաւ այդ պաշտպանումը որտղութեան և գինավարժութեան: Կարճ ժամանակի մէջ դարձաւ քաղ նշանաձիգ: Անհատական ձեզըրը բաւական չէին. անհրաժեշտ էր ստեղծել հաւաքական ուժ հայ երիտասարդներու դորձակցութեամբ: 1896-ին արդէն կարգած էր իր առաջին խումբը չորս ընկերներով: 1898-ին ելաւ Յ. Զ. Իսաշնակցութեան Այնթապի Կոմիտէի հիմնադիրներէն մին:

Նազարէթի յեղափոխական ակտիւարանն էր Բաֆֆիի «Ջալլալտախի»-ը, որ թարգմանած էր թիւրքերէնի: Իսկ յեղափոխական տառքեանն էր Սասունցի Մակարը, որ ջրաղացպան էր Այնթապէն ժամ մը հեռու. Նազարէթն որտե երթաւու ժամանակ կիջնէր Մակարի մօտ, անկէ կը լսէր Սևրոյի և Գեորգ Զատուշի կռիւներուն մասին, մտիկ կրնէր անոր յեղափոխական երգերուն:

Ներքնըւած Մակարի պատմութիւններէն ու երգերէն, Նազարէթն ու իր ընկերները կորոշին պատրաստիլ Սասուն անցնելու և միանալու քաջներուն: Ապա-

հով կերպով Սասուն անցնելու համար կուգին ջիւրու ձեանալ, և այդ նպատակով կը վարձեն Ուրֆացի հայ մը, որ իրենց քրտեքէն սովորեցնէ... Ուրֆացի վարձապետը ունէր միայն մէկ սենեակ, որուն մէկ անկիւնը իր էջերը կը կողէր, իսկ միւս անկիւնը Նազարէթի ու իր ընկերներուն քրտեքէն կը սորվեցնէր:

Օր մը բողոքական քարտիչը պատ. Մ. կուգայ Եմէլիճեանի տունը, ընտանիքի անդամներու հոգեկան վիճակը քննելու: Խօսքը կուգայ Նազարէթի մասին, առաջը կրտեք ուրախութեամբ. «Պատենի՛, տղա մասնաւոր պէս չէ, հիմա բողոքովին փոխած է, ցերեկները կաշխատի, գիշերները դպրոց կերթայ»: Պատենին կը հետաքրքրուի Նազարէթի թիւրքով... Կը քակէ ձեռագիրներու տետրակը և իրեն աչքին կը դարձնեն քրտեքէն մը գանձով, դու գանձի (գիտում, գիտես) և այն քրտեքէն բայերու խոնարհումը: Աղբէս պատենին անմիջապէս կը թափանցէ գաղտնիքին, և կըսէ. «Բոյրս, քո տղան յախտեանապէս կորուած է». և կը կորուի տնէն անմիջապէս: Խեղճ հայ կրնը ճեփ-ճերմակ կը կտրի:

Սասնոյ քաջներուն միանալ ծրագրող խումբը որոշած էր իրեն հետ տանել արդիական գէնքեր: Նիւթական միջոցներու պակասը մեծաոյն արգելքն էր: Երկու ճանապարհ կար փոքրիկ խումբին առջև: Ձեռք բերել զանոնք գողութեամբ, և կամ գնել աշխատանքի արդիւնքով: Նազարէթ կրտեք յեղափոխականը պէտք չէ գողնայ. ոչ մէկ նպատակ կրնայ արդարացնել գողութիւնը: Յեղափոխականը պէտք է մաքուր և օրինակելի ըլլայ:

Կը սպի դրամ խնայել կոշակագրութեամբ. բաւական քանակութեամբ կոշիկ պատրաստելէ ետք կը տանէր գաւառները կը ծախէր: Մէկ քանի անգամ Քիլիկիոյ դնաց և շահած էր բաւական կտր գումար մը: Գրնաց վերջին անգամ, որմէ ետք խումբը գինւած արդիական գէնքերով և քրտեքէնով պիտի ճամբայ ելլէր դէպի Սասուն:

1902-ի գեղեցիկների վերջին օրերուն էր. թեթև ձիւն իջած էր: Ուսանող էինք մենք ամերիկեան գուլճերի մէջ: Լուր հասաւ թէ գոլճերն դիմաց հայ մը սպանւած էր: Անմիջապէս սպանւածին մօտ վաղեցիկը: Տեսանք, որ մեր ընկեր Նազարէթն էր, որ Քիլիկիոյ վերադարձած էր: Իր դիակին մօտ կային 10-15 պարսկ փամփուռներ, որոնք կը հաստատէին, թէ ան երկար ժամանակ կուած էր իր վրա դատադարար յարձակողներուն դէմ: Մարտապէս վերադարձելէ յետոյ ան քայած էր մօտ 100 քայլ տեղ և ինկած էր:

Այսպէս ինկաւ ծաղիկ հասակին մէջ Նազարէթը, այդ երիտասարդ հայրենասէրը՝ իր ծրագրերնը անկատար ձգած...

Նա նոր բնու մը դրաւ իր ընկերներու ուսին, որոնք մինչև վերջը տարին ամենայն զոհողութեամբ... Անոնց կրնեքանար Նազարէթի յիշատակը իրենց բոլոր հայրենասէր ձեռնարկներուն մէջ:

ՆԵՐՍԷՍ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՋԱՐԴԷՆ ՅԵՏՈՅ՝ ԱՀԱԲԵՎՈՒՄ

Քիւրաքը կը սպաննի Քիւրտին ձեռքով

Անբաւական համարելով շարդերը, կայնազաննէրը, բանաւարկութիւններն որ բազմապիսի հալածանքները, քրտական առաջին շարժումներուն իսկ մասնակցից, կը թողուն իրենց բնաշխարհն ու կանցնին պարսից սահմանը, ու կը տեղաւորին Կոտորի շրջանները:

X կայանի մեր մասնաւոր քղաքիցը կը գրէ.—

Մոկաց աշխարհի, Աւղարայի ցեղի նշանաւոր Մուրթուլա պէյի եղբոր սղանները՝ Արըֆ, Ատըլ, Ծաթուլլա, քրտական առաջին շարժումներուն իսկ մասնակցից, կը թողուն իրենց բնաշխարհն ու կանցնին պարսից սահմանը, ու կը տեղաւորին Կոտորի շրջանները:

Շուտով այդ նոր շրջանին մէջ կը վայելեն մեծ հեղինակութիւն, շնորհիւ իրենց քաղաքործութեանց: Երկու փոքր եղբայրները, Ատըլ և Ծաթուլլա պէյերը, յաճախ 5-10 մարդերով կը խորանան մինչև Մոկի մարան, բնաշխարհով թիւրք սահակախումբերը: Թրքական ողակին մէջ, իրենց հերոսական յարձակումները շփոթի էին մասնած թիւրք բանակը: Ապարդիին անցած էին թիւրքերու բոլոր յայտնի ու գաղտնի միջոցները՝ զանոնք ձեռք բերելու, և ահա թիւրքիան կը դիմէ այն միջոցին՝ որուն կապակենէր կարծիր Համիտը: Երեսուն տարի առաջ, հազար ոսկի պարգև կար Սեբրթի, Անդրանիկի, Գէորգ Չափուշի և ուրիշներու գլուխները բերողին. և թիւրք կամ զիրտ հրոսակներ իրարու հետ կը մրցէին, պարգուէր շահելու համար: Այսօր, Ատըլ և Ծաթուլլա պէյերը սպանողին, կամ անոնց մահանան լուրը բերողին, քեմալական թիւրքիան կը խոստանայ 2000 ոսկի: Եւ նորէն Քիւրտն է, որ իր ծառայութիւնը կառավարէ...

Մոկաց շրջանին երկու Քիւրտեր, այդ դիւային առաջնութեամբ ճամբայ կելլեն դէպի Ատըլ և Ծաթա պէյերու բնակավայրը: Իր քաղաքական փախուստականներ՝ կը ներկայանան և սպաննակաութիւն կը խնդրեն: Ատըլ և Ծաթա պէյերը, հակառակ իրենց կիներու զգուշացումներուն, իրենց ծառայութեան մէջ

կառնին եկտորները. ու անոնց կրտսն է՝ յարժարութիւն, և՛ զէնք՝ քանի որ ոչ միայն իրենց ցեղին կը պատկանին, այլ և սպազականներ են:

Պայրամի տօնին առթիւ, երկու եղբայրները մօտակայ գիւղի գաղտն շնորհատրելու կերթան, իրենց ետեւը ձգած երկու նոր ծառաները: Կոտորի ձորին մէջ, երբ երկու եղբայրները առջևէն հեծեալ, միտմիտ կը յառաջանան, ետեւէն երկու դաւաճանները համազարկի կը բռնեն դիրենք: Ատըլ պէյը անմիջապէս կանշնշանայ ու կիշնայ, իսկ Ծաթա, ուսէն վերաւոր, ինքզինքը կը ձգէ քարի մը ետին: Հսպիւ մէջ երկու գրծղակ կը յաջողի արձակել, ու վերքը կը ստոի ու իր թիւր չի կրնար գործածել: Դաւաճանները վրա կը հասնին և քանի մը ձեռք կը կրակին: Չոշերու ձիերը կը փախչին դէպի մօտակայ նախիրը: Նախրապանները արիւնաթաթախ ձիերը կը բռնեն: Այդ պահուն ձիերը հետապնդող ոճրագործները վրա կը հասնին, և կուղեն դրակել:

— Ո՛ւր են ասոնց տէրերը, կը հարցնէ նախրապանը:

— Կաքա գարնելով են գրազած, կը պատասխանեն դաւաղիները:

— Հապա այս Բ՛նչ արին է թամբերուն վրա...

Ոճրագործները կը դարձնեն իրենց ջորիներու գլուխները դէպի սահմանը, ու կիջեն թրքական պահականոցը:

Նախրապանները լուր կը տանին գիւղ, բայց բաւական ուշ, հարիւրաւոր ձիւտորներ կը սկսին հետապնդել փախստականները. բայց ուշ էր: Գոթը կը տարածուի ամէն կողմ: Ամբողջ շրջանները կը փութան դէպքին վայրը, և կը տեսնեն բարբարոսութիւնը — երկու եղբայրներէն իւրաքանչիւրը 15 դնդակէ աւելի ստացած:

Քիւրտ շէյիւր սահմանապահ պարսիկ սպային հետ կը փութայ դէպքին վայրը: Շէյիւր կը խօսի կրակոտ և վրէժառու. ցեղին մարդիկը կողբան, և միւսնոյն ատեն վրէժ կորստան:

Քրտական դատը դեռ չատ արինն կը կարօտի, զիրտ յեղափոխական գէմըը գաղափարապաշտ ու յաղթական դարձնելու համար:

ՀԵՔՈՐ

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Հարաւային Ամերիկայի հայ գաղութը երթալով կը մեծնայ. այժմ անոր թիւը արդէն հասած է շուրջ 20,000-ի, որմէ 15,000 կեդրոնացած է Բուէնոս Այրէս, 3000ը Մոնթէ Վիտէ, 140 Թոգարիօ, 140 Կորդովա, Սեն Պաօլօ և այլն: Բնականաբար, սպառնալից հասարակական կիսանքն այ կը սկսի արժանոքներ ձգել ու դար-

գանալ: Բնական է նոյնպէս որ, ինչպէս ամէն տեղ, հոս ալ Հ. Յ. Դաշնակցութիւնն է, բովանդակութիւն ու թափ տուրը գաղութի կեանքին:

Հ. Յ. Դաշնակցութիւնը Հարաւային Ամերիկայի մէջ երևցած է դեռ համաշխարհային պատերազմէն առաջ: Արդէն 1912թ. Բուէնոս Այրէսի մէջ կային Հ.

Յ. Դ. «Եփրեմ» և «Շանթ» խումբերը, որոնք յարգաբերութիւն կը պահէին Արեւմտեան Բիւրօի հետ: 1915թ. կը կայանէ կոմիտէի մը, որ կը Հաստատուի Հ. Յ. Դ. Ամերիկայի Կ. Կ. ք. կողմէն: 1916թ. այս կոմիտէն գործած մասնակցութիւն կունենայ կամաւորներու ք նրպաստ բացած Հանդանակութեան, կոմանդակէ Կիլիկիոյ ինքնապաշտպանութեան գործին, 1920թ. Մայիս 28-ին Հայաստանի բանակի օգնութեան Համար զրկած է 5500 փէտ, իսկ 1928-ին Շիրակի ազտեակներէ Համար՝ 2230 փէտ:

1922թ. կը սկսի ինչպէս գաղութի, այնպէս և Դաշնակցութեան վերակազմութեան կամ, աւելի ճիշտ, կազմակերպութեան շրջանը. ընկերութիւնը հետզհետէ կը շատնայ: Ներկայիս Բուէնոս Այրէսի մեր կազմակերպութիւնը ունի 6 խումբ — Երեքը քաղաքի և Երեքը արևմտահաններու մէջ: Խումբերը բաղկացած են, մեծ մասամբ, Երիտասարդներէ՝ արհեստաւորներ ու բանուորներ, որ եկած են գլխաւորապէս Միւրիայէն ու Յունաստանէն: Բուէնոս Այրէսի կոմիտէն ունի «Մուրառ» ակումբը, գրողարար մը և տպարանի նախնական սարքը: Կոմիտէն ամէն տարի իր նախաձեռնութեամբ կը կատարէ Ապրիլ 11/24-ի և Մայիս 28-ի Հանդէսները, ինչպէս և կը տօնէ Հ. Յ. Դ. Օրն ու Պանաստրի արշաւանքը:

Իր քանակով երկրորդ տեղը կը բռնէ Մոնթէվիտէօի կոմիտէն, որ կազմած է 1924թ.: Այստեղ կայ «Վտանգեան» ակումբը, որ կը ծառայէ գաղութին իբր Հաւաքատեղի: Բացի այդ կան դպրոց, գաղութային միութիւն, Հ. Մ. Ը. Մ., Զ. Ո. Մ., Հայրենակցական

միութիւններ, որոնց մէջ մեր ընկերները կարենը զեր կը կատարին:

Այնուհետև կուզան հետեւեալ կոմիտէները. Ռոզարիօ՝ հիմնւած 1916-ին, գործած և աշխոյժ կազմակերպութիւն մը: Սէն Պաօլօ, որ կը գտնուի Բրազիլիա՝ բուսական հետու Բուէնոս Այրէսէն:

Ինչպէս ազգային, այնպէս և կուսակցական տեսակետով Հարաւային Ամերիկայի հայ գաղութը կապրի խիստ անկապտտ պայմաններու մէջ. նախ՝ շափազանց ցրած է, որով շատ դժուար է հողեպէս իրար կայել. երկրորդ՝ տնտեսական վիճակը լաւ չէ: Ազգաբուրժուազի կտրուած է Հայկական մայր գանդուածէն: Կենսական անհրաժեշտութիւն է ունենալ տեղական թերթ մը, որ իրար կայէ գաղութի ցրած անդամները:

Գաղութի գանդան Հատուածներու միացման ամենարիական միջոցը, ի հարկէ, այստեղ ևս Դաշնակցութիւնն է, որ փրտակ իր ստաբլութեան՝ կաշխատի այլ ուղղութեամբ: Սոյն տարւայ փետր. 16—19-ին, Բուէնոս Այրէսի մէջ, զուամբուեցաւ Հ. Յ. Դ. անդամակ Շրջանային Ժողովը, որուն կը մասնակցէին 16 պատգամաւորներ: Շրջանային Ժողովը մանրամասնօրէն քննութեան առաւ շրջանի փառակերպական գործերն ու անելիքները, որոշեց այն ուղեգիծը, որուն պէտք է Հետեւի ազգային-գաղութային Հարցերու մէջ և իրպէս հիմք դրաւ Հարաւային Ամերիկայի հայ աշխատաւորութեան միութեան: Անկասկած, այս Շրջ. Ժողովը կը լինի գորտար խթան ու միայն կազմակերպական տեսակետով, այլ և գաղութի Համախմբման ու Հաւաքական կեանքի զարգացման Համար:

Գ Ր Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն

ՅՈՒՇԱՐՁԱՆ, ճիւրաժ Ս. Դ. Հնչ. Կուս. Գաւառամասնակիւն, Խրատ. Ս. Դ. Հնչ. Կուս. Յրահանայի Երջանակի, Փարիզ, 1930.

Հաս երևոյթին, իրօք որ, պատմութիւն ստեղծելը աւելի հեշտ է, քան գրելը, այլապէս անբացատրելի կը լինի այն փաստը, որ հայ յեղափոխական կազմակերպւած պայքարը ահա կէս դար է, որ գոյութիւն ունի, իսկ գրած պատմութիւն դեռ չկայ: Գարեի է աւել, գրելու փորձ էլ չի եղել: Մենք սպրում ենք դեռ նիւթերը հաւաքման շրջանում: Հետզհետէ լոյս են տեսնում յուշեր ու վաւերադրեր, առանձին պէպքերի նկարագրութիւններ ու կենսագրութիւններ, որոնք աղբիւր պիտի ծառայեն սպազայ պատմագիր Համար: Այս խնդրում անդնահատելի ծառայութիւն է մատուցանում «Հայրենիք» ամսագիրը: Որոշ նիւթեր կուտակուում են և՛ «Իրօզակ»-ում կամ ուրիշ պարբերականներէ, թերթերի և առանձին հրատարակութիւնների մէջ:

Հնչակեան քառասնամեակին ներկած «Յաշար»-ը — 288 մեծադիր էջեր, բազմաթիւ պատկերներով գարեպարս — մեզ Համար հետաքրքրական է ամենից առաջ հնչեց այս տեսակետից. թիւ նոր նիւթ է առաջադրում հայ յեղափոխութեան և, ի մասնաւորի, Հնչակեան Կուսակցութեան պատմութեան Հա-

մար: Դժբախտաբար, հնչեց այս հիմնական պահանջին նա բարարութիւն չի տալիս. կարելի է ասել՝ ո՛չ մի էական նոր բան չենք գտնում նրա մէջ, գրեթէ ո՛չ մի արժէքաւոր, մինչև այժմ անյայտ մնացած փաստ, որ կարելի լինի օգտագործել պատմութեան Համար: Ո՛չ էլ նոր, ինքնուրույն պաղտիք:

Ժողովածուի հիմնական յօդուածը Բ. Վարդգիստի «Հայաստան. Հայ ժողովուրդ և Հնչակեան Կուսակցութիւնը» Համեմատաբար քննարձակ գրութիւնն է: Հեղինակը այդտեղ անում է ամփոփ պատմութիւնը հայ յեղափոխական շարժման նախապատմութեան և քննահանուր գծերով ներկայացնում է Հնչակեան Կուսակցութեան ծագումն ու զարգացումը — մի Հակիրճ ծաղկաբաղ Սարուսանի, Վարդաղեանի ու Լէօն աշխատութիւններից և ուրիշ ոչինչ: Ամենահետաքրքրական մասը, ուր պիտի հանգամանօրէն խօսէք Հիմնական Կուսակցութեան գործունէութեան մասին, տրուած է հարեանքի, թույնիկ գծերով: Հնչակեանութիւնը մտում է չլուսաւորում, նրա պատմութեան ամենաողբերական դրագները լուսութեան են մատուած: Նոյն ձևով են վարուած և ժողովածուի միւս հեղինակները, մինչդեռ ասելիք շատ բան կայ:

Օրինակէ Համար, մեր գրականութեան մէջ դեռ լուսարմաւած չեն Հնչակեան Կուսակցութեան առաջին

քայլերը ինչպէ՛ս անցաւ նա դործնական աշխատանքի, ուղե՛ք ր, ո՛րք, ինչ կազմակերպութիւններ առաջ բերին, ինչպէ՛ս յաջցան ցուցական գործունէութիւնը, ի՞նչ յարաբերութիւն ունին Հնչակեան Կուսակցութեան հետ այն դէպքերը, որոնք յետոյ հիմք ծառայեցին Գաղափարի դաւաճարութեան: Լուսարանում չէ և հնչակեան պատմութեան ամենաթատերական վարկեանք՝ 1896 թ-ի ընդհանուր ժողովը Լոնդոնում, ուր Աւետիս և Մարտ Կազարբէգեանները պատասխանատուութեան կանչեցին, խուսափեցին ներկայանալ ժողովին ու հաշիւ տալ իրենց Ս տարւալ գործունէութեան համար և միաձայնութեամբ պայտօնանկ եղան Հնչակեան Կուսակցութեան կենտրոնի անդամակցութիւնից ու արտաքուստ հռչակեցին կուսակցութիւնից:

Ինչպէս յայտնի է, այս ժողովը սկիզբը դրեց Հընչակեան կուսակցութեան պատակտման: Կուսակցութիւնը բաժանւեց երկու մասի: Մի կողմ մնացին Կազարբէգեան գոյլը, իրենց համախոհներով: Ժիւս կողմ՝ Եղիբի և արտասահմանի գործիչները մի որոշ մաս, ինչպէս Մ. Տամատեան, Անտոն Տիւրանի, Գ. Պահլաւ, Մ. Սրվազբեան, Ադաֆ, Ազաճ, Գ. Զիթեան, Մլեհ, Արիփիար Արփիարեան, Ա. Օսանյաններ և ուրիշներ: Ընտրեց նոր կենտրոն, որի մէջ մտան Մ. Տամատեան, Ա. Արիփարեան, Սրվազբեան և այլն: Բաժանման բուն պատճառը այն փոտիքիւնն էր, որ արժամացել էր հնչակեան կենտրոնում, բայց յետոյ մէջը խառնեցին և ընկերակարութիւն, և՛ սուսահայ ու թիրաքահայ ցարց և այլ ինչդիւնը: Պայքարը ստացաւ այլանշակ ձևեր: Յեղափոխական գործը մի կողմ թողնւեց: Կուսակցութիւնը անձնատուր եղաւ ինքնաջոշտման: Ըսկանի հրատարակել երկու «Հնչակ» մէկը Կազարբէգեանի, միւրը՝ նոր կենտրոնի կողմէ: Գործը ղնաց անպիսկան դատարան, ուր Կազարբէգեանը շահեց դատը: «Հնչակ»-ը ճանաչւեց Կազարբէգեանների սեփականութիւն: Նոր կենտրոնն էլ շուտով պատակտեց: 1898թ. դեմտրեց նոր ընդհանուր ժողով, Աղեքսանդրիայում և հիմնւեց Վերակազմութիւնը Հնչակեան կազմակերպութիւնը «Մարտ» պաշտօնաթերթով, որ յետոյ փոխարինւեց «Նոր»-Կազարբէգեանով, Լոնդոնում: Ա. Արիփարեանի խմբաբարութեամբ:

Այնուհետև սկսում են երկար սաղակալի բանակցութիւններ համբարխոթեան կամ միութեան համար Վերակազմեալ Հնչակեանների և Դաշնակցութեան միջև: Դաշնակցութիւնը, իբրև նախնական պայման, պահանջում է վերակազմախնիքի շարքերից վտարել Ա. Արիփարեանին, որ արտատուրում էր իբրև մտունիչ ու զանաճան յեղափոխութեան դէմ: Վերակազմախնիքը ղեն համաձայնում, և բունակցութիւնները արիւնքի չեն յանդում:

Պատակտման ու կոխի հնչակեան շարքերում տեւեց վեց տարի: 1901թ. կողմից դիմեցին բանակցութեան, և 1902թ. հին ու վերակազմեալ հնչակեանները միացան: Սակայն, միութիւնը եղաւ խիստ կարճատև: Ժի ջանի ամիս անցած, պատակտում վերակազմում է անելի սուր ձևերով: փոխադարձ սպանութիւններով: Հին հնչակեանները թիթիւում սպանում են վերակազմեալ հնչակեան խմբապետ Միսո-Շահէին, ապա, 1903թ. յունիս 13-ին, Օդեսայում սպանում են ԿԵՆՏՐՈՆԻ անդամ Գաբրիել Զիթեանին:

Վերակազմախնիքը, իրենց հերթին, պատասխանում են մահափորձերով ու ահաբեկումներով: 1903թ. Նոյտ. 19-ին, Զիցիբիարում, մահափորձ են կատարում Ա. Կազարբէգեանի դէմ, յուլիս 7-ին արքանաւով վիրաւորում են Սապահ-Գիւլեանին, ֆոտոտում: Նոյտ. 26-ին սպանում են Սաղաթէլ Սպազուուն, Լոնդոնում, նոյեմբ. 6-ին սպանում են Ա. Գրիգորեանին և Ս. Սքրիկեանին, գործեալ Լոնդոնում:

Ատրճանակի այս հարւածնեցի միաժամանակ մահացու հարւածներ էին և Հնչակեանութեան դիւին: 1903թ. Հնչ. Կուսակցութիւնը սկսում է գործել և Ռուսաստանում Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան անունով, բայց այլ ևս երբեք չչտեւեց և քար տեղի երևութեան մի կեսեր, որ մինչև այժմս էլ շարունակում է, առանց յուրը ազդեցութեան չայ կանգնի վրա: Երբեմն-երբեմն «Մայր Կուսակցութեան» ծոցից դուրս են գալիս անհաստեղ ու խմբակներ, որոնք փորձում են լսել և քննադատը դնալ հայ կեանքի կենսական պահանջներին, բայց այդ ճիգերը դարձ յայդութիւն չեն ունեցած:

«Յուշարձան»-ը այս խնդիրները վրայեց անցել է զարմանալի անտարբերութեամբ, մինչև ինչ պէտք է որ պարզէր ու պատմական զննատուութիւնը տար: Այդ ձևով, թեբեւ, պարզած կը լինէր և այսօրայ դիրքը, և՛ վաղաք ուղեգիրք: Մկայլէս՝ հնչակեան դէմքը շարունակում է մայ մութ և հակասական: Այսպէս, մինչ, օրինակ, «Յուշարձան»-ում Բ. Վարագդատը գտնում է, որ «1920թ. նոյեմբեր 29-ին, ռուսական սպիաների շնորհիւ թրքական եւթադանից փրկւած Խորհրդ. Հայաստանի բախտը անջակտելիորէն կը կապէր Խ. Ռուսաստանի ճակատադէր» և դէպի իր հետևորդ նպատակը, առաջնորդող ճանապարհը Հարթէր ընդհիշալ, և ճայօր, երբ վերածնւած Հայրենիքի հովիտներին ու սարերին բարձրացող վերալինութեան հոգեպարար սաղաղակներու արձանագեղներ մինչև հետաուր զաղութներ երկարաձգելով, հպարտութեամբ կը լինին թուր՝ հայ ստեղծ», մինչ Վարագդատը համար խորհրդային էլշխաութեան տակ էլ զկանգնած է Արարատեան Գալտին վրա դարեր առաջ կանանւած Հնչակեան անկախ պետութիւնը», Գ. Եղիբեանը մի՞տակարօրէն պնդում է, որ «Հայաստանը անկախ չէ», որ Հայաստանում «մեր նպատակներին ո՛չ մէկը չի՛ երազորձած» (Էջ 44): Արդ՝ ո՛վ է հընչակեան տեսակէտի կակական արտայայտիչը՝ պ. Վարագդատը, թէ՛ Գ. Եղիբեանը:

Նման հակասութեան ուրիշ օրինակներ էլ կարելի է բերել, բայց էական այդ չէ: Էական այն է, որ «Յուշարձան»-ը ո՛չ Հնչակեան Կուսակցութեան մասին պատմական որոշ գաղափար է տալիս, ո՛չ էլ ներկայացնում է նրա ներկայ ընկերային-քաղաքական դէմքը կամ վաղաք հետապնդումները: «Յուշարձան»-ը մի տեսակ շտեմարան է պիտանի և անպիտան դիտեկաց: Որոշ յօդուաների, ինչպէս Ռ. Խան-Աղաթի մինչպէս կազմեց Հնչակեան Կուսակցութիւնը», կարողացում են հետաքրքրութեամբ: Ուրիշներ տեղական նշանակութիւն ունեն և, երեք, կը կարողացեն տեղացիներին: Կան և բազմաթիւ լուսանկարներ՝ հասարակական և քնտասական ընդթ կտող: Սակայն, էականը պակասում է — նիւթերի խնամքով ընտրութիւն և հիմնական ծրագիր, որով «Յուշարձան»-ը դառնում է միայն կուսակցական կարիքներին բաւարարութիւն տուող, բայց ընդհանուր-հասարակական տեսակէտից անարժէք մի հրատարակութիւն:

Ս. Վ.

*) Ի դէպ, պ. Եղիբեանը կարծում է, թէ՛ «Ըստ երկրի սահմանադրութեան, Խորհրդ. Հայաստանը անկախ է և իր անկախ կամեով կարող է դաշնակցի լինել որևէ մէկի հետ. որից և կարող է բաժանուլ, եթէ իր երկրի բանուրների և զիւղացիների շահերը պահանջում այդ» (Էջ 39): Այդ ճիշտ չէ, պ. Եղիբեանը շտեմարան է Անդրկովկասի սահմանադրութեանը Հայաստանի սահմանադրութեան հետ: Հայաստանը թէ իր սահմանադրութեամբ, թէ՛ գործնականում այդպիսի իրաւունքներ չունի: Նա անբաժան մասնիկն է Խորհրդային Անդրկովկասի:

Ի Ն Տ Ե Ր Ն Ա Ս Ի Ո Ն Ա Լ

Հ Ե Ր Մ Ա Ն Մ Ի Ի Լ Լ Ե Ր

Մէկ ամիս առաջ գերմանական սոցիալ-դեմոկրատ կուսակցութիւնը կորցրեց իր երեք նախագահներէց մէկին՝ Հերման Միլլերին:

Միլլերը ոչ միայն արժանաւոր ղեկավարն էր գերմանական աշխատւոր պահպանների, այլ և Գերմանիայի քաղաքական խոշոր ղեմերէց մէկը: Լինելով Աշխատւորական Ինտերնասիոնալի Գործադիր Կոմիտէի անդամ՝ նա միաժամանակ միջազգային բանաւորութեան հեղինակաւոր վարիչներէց մէկն էր հանդիսանում:

Մեկել է 1876թ. մայիս 18-ին: 17 տարեկան հասակում անդամագրոււմ է գերմանական սոցիալ-դեմոկրատ կուսակցութեանը և հինգ տարի յետոյ ամկնական թերթերէց մէկի խմբագիրն է դառնում: Երեւոյն տարեկան հասակում արդէն կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի անդամ է, որպէսին և մնում է մինչեւ մահ: 1916թ. ընտրոււմ է Րէյխստագի անդամ, 1919-ին՝ Հանրապետական Գերմանիայի արտաքին գործոց նախարար և 1920 և 28 թւերին՝ նախարարացոյնոց:

Այս պատճառներն իսկ բաւական են, որպէսզի պարզ լինի, թէ ի՞նչ հսկայական դեր է խաղացել Միլլերը Գերմանիայի պետական կեանքում: Թէ ի՞նչպիսի դժուարին պայմաններում է գործել նա, բաւական է միայն աչքի առաջ ունենալ յետպետերազմեան Գերմանիայի վիճակը: Պատերազմի աւերում, պարտութիւն, յեղափոխութիւն, ներքին խռովութիւններ, արհեստական սազնապ, գործադրութիւն, հսկայական պարտքերի բեռ, յաղթողների ճնշում ու գերմանական հողամասերի բռնագրաւում, ալ ու ձախ հոսանքների խտանակիչ ու յետաջրկան գործունէութիւն, նորաստեղծ Հանրապետութիւնը միշտ վտանգի տակ... Գերմարդկային ճիգ էր հարկաւոր, որ գերմանական պե-

տական նաւը շխորտակէր նման մէկ անուրի ալիք-ծուծութիւնից: Սակայն, յանձնես Հերման Միլլերի, Գերմանիան ունեցաւ իր հմուտ նաւավարը:

Որ իմացականութեամբ, հաւատարակչիւ ու շրտակ ընտրութեամբ, Հայրենասէր ու հեռատես քաղաքականութեամբ, և բանիմաց քաղաքագէտի հոտաուութեամբ, Միլլերը, հարկ եղած միջոցին շատասանեց պետական ղեկին իր ձեռքն առնել և պետակցորէն իր տեղը դիջել մէկ ուրիշին, երբ քաղաքական տարբեր դասաւորումներն այդ պահանջեցին: Թէ՛ որպէս կառավարութեան նախագահ և թէ՛ որպէս ընդգլխավոր կուսակցութեան պարագլուխ, նա միշտ էլ հետապնդեց նոյն նպատակները՝ ամբապնդել աշխարհի խաղաղութիւնը, փրկել Հանրապետութիւնը ալ ու ձախ սարսձգութիւններէց և սպահովել աշխատւորութեան վերջնական յաղթանակը:

Քաղաքականութեան մէջ մնալով որպէս վարպետ դիւանագէտ, Միլլերը մինչ գերեզման հաւատարիմ ու անկեղծօրէն ծառայեց իր դաւանած սկզբունքներին և երբեք չընդունով ընկերվարական ուղից, ամէն ճիգ գործադրեց Երկրորդ Ինտերնասիոնալի յարկի տակ մտցնել գերմանական աշխատւորութիւնը, որին պատերազմը անջատել էր միւս ազգերի աշխատւորներից:

Ա. Ա.

Մ Ս Ս Յ Ի Ա Մ Գ Ր Ք Ե Ր

- Համբ. Երանման, Յուշարձան, Վան-Վասպուրական, հատոր Բ., Աղեքսանդրիա, 1929.
- Կ. Սաաւնի, Արիւիւնեան Եղեռնը Գինական Ակնցով. Փարիզ, 1931.
- Յուշարձան, Նւիրաւ Ս. Գ. Հնչ. Կուսակցութեան Գառնամեակին, հրատ. Ս. Գ. Հնչ. Կուս. Ֆրանսայի Շրջանի, 1930.

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Թ Ի Ի Ն

Գալուստիայոց կազմակերպութեան հարցը (Յըմբարական)	65
Տնտեսական տագնապը (Ս. Վրացեան)	68
Մեմօրիալների դառալարութիւնը (Աշու-Արծրունի)	72
Քրդական հարցը Ինտերնասիոնալում	77
Թիւրքիայ շարժ	81

Հայաստանում	84
Սեփարեցի Սաֆի ինքնակենսագրութիւնը	87
Մեր գոհերը	90
Թղթակցութիւններ	93
Կազմակերպական կեանք	93
Գրայտակամ	94
Հերման Միլլեր	96

« Գ Ր Օ Շ Ա Կ » - Ի

Թիւն արժէ 2 ֆր. 50 սանն.

« Գ Ր Օ Շ Ա Կ » - Ի հասցէ՛

M-lle S. AGOPIAN
5, rue des Gobelins, PARIS (13.)